



1945



ԽՅԱԴ

Բ. ՏՎԵՐԻ

ՕԳՈՍՏՈՍ-ԱԵՊՏԵՄԲԵՐ
ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԽՅԱԴ

Պատուիս պատճեր
ՀԱՅՐԱԴԻՑԱԿԱՆ ԽՈՇՈՅՑ
Ա. ԵԶԱՐԻՉԻՐ

ՀՐԱՄԱՆԱԿ
Տ. Տ. ԳԵՂԻՐԴԱՅ. Զ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲՁՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՑՈՑ



ԱԶԳԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1945 թ. Հունիսի 16-ին Ս. էջմիածնում
դումարվեց Համազգային — Եկեղեցական
ժողովը:

Համազգային Եկեղեցական ժողովը դումարվեց քաղաքա-պատմական բացառիկ նշանակալից պայմաններում:

Համազգային Եկեղեցական ժողովը ներկայացնում էր ողջ Հայ հավատացյալների խսկական կամքը: Այստեղ իրենց ներկայացուցիչներին ուղարկել էր թե Սովետական Հայաստանի ու Սովետական Միության մեջ ապրող հայ հավատացյալները և թե արտասահմանում ու նրա ամենահեռավոր անկյուններում գտնվող հայ հավատացյալների համայնքները:

Ներկայացուցչական այսպիսի լրիվ կազմով Համազգային-Եկեղեցական ժողովի դումարումը մեր Եկեղեցական պատմության մեջ կմնա որպես եղակի գեղք և խիստ բնորոշ, քանի որ այն ըստ ամենայնի ներկայացնում էր ողջ Հավատացյալ հայությունն առանց բացառության:

Համազգային-Եկեղեցական ժողովի բացառիկ և նշանակալից լինելու ցուցանիշը այն հայրենասիրական միասնականությունն ու կոփածությունն էր, որ նա հանգես բերավ առանց բացառության քննվող բոլոր խնդիրներում և ընդունվեց Համապատասխան գործնական որոշումներ, որոնք ըստ ամենայնի արտահայտում էին Հավատացյալ ժողովովի իզծերն ու ցանկությունները:

Ծնդունված որոշումներում և բանաձեռքում հանձին Համազգային-Եկեղեցական ժողովի նրեն էր հայ հավատացյալների միասնական կամքը:

Դարավուլում է բաց անում մեր Եկեղեցական պատմության մեջ:

Ի պատիվ Ազգային-Եկեղեցական ժողովի լրջախոհ՝ պատգամավորների պետք է ասել, որ ժողովը ոչ միայն համերաշխ ընթացավ քննարկվելիք բոլոր հարցերում, այլև և այն հանդես բերավ այնպիսի խորը գիտակցություն դեպի մեր հայրենիքի, մեր ժողովրդի և մեր պետականության շահերը, որ վեր է ամեն գովասանքից ու գնահատականից:

Ժողովը ապրեց և շնչեց մեր Մայր Հայրինիքով-Հայաստանի Սովետական Ռեսպուբլիկայով, խոյացավ նրա լուսագագաթ բարձումքներով, մոտիկից տեսալ և ճանաչեց նրա հաղթական նվաճումները և ավելի քան փարվեց մեր ազգային միասնության, մեր պետականության փառապանծ գորշին:

Համազգային-Եկեղեցական ժողովը լսեց Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տեղակալ Տ. Գեկորդ արքեպիսկոպոսի զեկուցումը իր գործումներուն մասին:

Համազգային-Եկեղեցական ժողովը ելնելով Ամենայն Հայոց կաթողիկոսի Տ. Տեղապահի զեկուցման մեջ շոշափված խընդիրներից ու գտնելով նրանց իրավործումն անհետաձեկի՝ ընդունեց մի շարք բանաձեռք, որոնք պիտի ապահովեն վերոհիշյալ խնդիրների կենսագործումը:

Ժողովը միանդամայն ճիշտ վերաբերմունք ցույց տվեց ազգընտիր Տեղակալ Գեր. Տ. Գեկորդ արքեպիսկոպոսի զեկուցմանը, երբ նշեց նրա առաջադրանքներն իրականացնելու կենսական և իրական միջոցառումները:

Ժողովը հանձն առնելով նույթական և

համարեց հոգեոր ճեմարանի բացումը 40 ուսանողներով և 6-ամյա ժամանակաշրջանով, ընդ որում 40 ուսանողի 6-ամյա ծախքն ապահովեց թեմերի և անհատ բարերարների որդեգրությամբ:

Նույնպիսի մոտեցում ունեցավ ժողովը Մայր Աթոռի տպարանի գործարկման և այն նորագույն ու լավորակ մեքենաներով ու սարքավորումներով գործադրության մեջ զնելու խնդրին: Թեյրութի պատգամավոր պ. Մ. Մարլյանը հանձն առավ ապահովել հիշյալ սարքավորումը և մինչև 1946 թ. հունվարը ուղարկել Ս. էջմիածին:

Այս ինքնին խոսում է այն մասին, որ մեր արտասահմանյան եղբայրների մեջ վառ է հայրենասիրությունը և արթուր ազգային գիտակցությունը:

Ժողովը ընդունեց և որոշեց տոնել Մայր Աթոռի Ս. էջմիածին տեղափոխվելու 500-ամյակը (1441—1941), ընդ որում հրատարակել 500-ամյա պատմությունը լուսաբանող գրքեր, ժողովածուներ և այլն:

Ընդունվեց և հաստատվեց Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու կանոնադրությունը, իսկ մեր եկեղեցու Սահմանադրության քննարկումը թողնվեց Համազգային-եկեղեցական ժողովին, ըստ ամենայնի այն քննարկելու, ստուգելու և գործնականապես ծանոթանալու իմաստով: Կանոնադրությունն ընդունվեց ժամանակավորապես ի զեկավարություն, միայն վերջնական խըմբագրումն ու ընդունումը հետաձգվեց հաջորդ Համազգային-եկեղեցական ժողովին:

Ամենապատիվ Տեր Տեղակալի զեկուցման կենտրոնական խնդիրներից մեկն էր Ս. էջմիածինի Մայր տաճարի վերանորոգման հարցը, որ անշուշտ շատ խոշոր ծախքերի հետ է կապված և պահանջում է դրամական խոշոր միջոցներ, ինչպես և ճարտարապետների, արվեստագիտների հմտութեան հետոն համապատասխան կազմ:

Համազգային-եկեղեցական ժողովը միաձայնությամբ ընդունելով Մայր տաճարի հիմնական ու գերազանցորեն վայելուշ կերպով վերանորոգելու խնդիրը և նրա անհետաձգելիությունը, որոշեց կարճ ժամանակում հետաձգել ամեն անհոգաֆեշտ նույթական

միջոցները և տեխնիկական անձնակազմը ապահովելու տեսակետից:

Համազգային-եկեղեցական ժողովն ընդունելով վերոհիշյալ խնդիրների անհրաժեշտությունը և նրանց անմիջական գործադրությունը միաժամանակ նշեց այն ուղին, որով պիտի ընթանա Ամենայն Հայոց Հայրապետությունը:

Այսուհետև Համազգային-եկեղեցական ժողովը ենելով նաև մեր պետականության, մեր հայրենիքի ազատագրության վերջին բանհինամյա պատմությունից, երկու հեռագրով, առաջինը—Համազգային-եկեղեցական ժողովի բացման օրը, երկրորդը՝ յուր աշխատանքները վեջացնելիս՝ իր շերմագին չնորհակալությունն ուզգեց մեր ազատությունը և մեր պետականությունը կերտող և ծաղկեցնող ՍՍՌ Միության ժողովում վետ նախագահ հանձարեղ գեներալիստ Անդրեաս Մարտիրոսյան ՍՍԱԼինին, լավ գիտակցելով, որ ինչպես Սովետական Հայաստանի ծաղկումն ու բարգավաճումը, նույնպես և Մայր Աթոռի բարգոր կացությունը սերտորեն կապված են ՄԵՇ ՍՍԱԼինի կյանքի և գործունեության հետ:

Գաղտնիք չէ այսօր, որ Հայ ժողովուրդը համայնորեն ՄԵՇ ՍՍԱԼինին է ճանաչում մեր միակ ազատարարը: Անշուշտ պատահական չէ, որ այսօր յուր հայրենիքից բոլի կերպով վտարված և օտար հորիզոններում անօթևան մնացած հայ ժողովուրդը իր հույսերը կապում է աշխարհի ամենաիմաստուն և ամենակարող Մարդու ՄԵՇ ՍՍԱԼինի հետ:

Ինչպես հայտնի է, արտասահմանյան մեր եղբայրները որոշել են իրենց բախտը կապել Սովետական Միության ժողովուրդների բախտի հետ. նրանք միահամուռ կերպով ցանկանում են Արևմտահայաստանի իրենց նախկին բնակավայրերով ու գավառներով միանալ Սովետական Հայաստանին և մտնել ՍՍՌ Միության եղբայրական ժողովուրդների մեջ ընտանիքի մեջ:

Համազգային-եկեղեցական ժողովը, որ խորին հուզմունքով և լրիվ գիտակցականությամբ ապրեց արտասահմանյան յուր եղբայրների վիշտն ու տառապանքները,

անշուշտ չեր կարող լուրջ ուշադրության շառնել արտասահմանի համահայկական այս բուռն ցանկությունները:

Ուստի Համազգային-եկեղեցական ժողովը իր հեռագրերով սրտապին շնորհակալություն հայտնելով հայ ժողովրդի ԱԶԱՏԱՐԱՅ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ հայությանը և Սովորական Հայաստանի Խեսպուրլիկային ցուց տված բարյացակամության ու հայրական ինամբի առթիվ, միաժամանակ թարգմանը հանդիսացավ այն իդերի և հույսերի, որոնց հետ այսօր անխախտելիորեն կապված են ինչպես արևմտահայերը, նույնպես և արևելահայերը և որոնց կենսագործումը հայ ժողովուրդը կապում է միայն և միայն մեր ժողովրդի անկեղծ բարեկամ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ կյանքի և գործունեության հետ:

Ժողովի առաջնակարգ և հերթական խնդիրն էր Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս ընտրելը:

Համազգային-եկեղեցական ժողովի եղանակի և բացառիկ լինելու հանգամանքը ավելի քան ցայտուն կերպով երեան եկավ այս խնդրում:

Ժողովը 1945 թ. հունիսի 22-ին երեկոյան ժամը 4-ն անց 45 րոպեին միաձայն Ամենայն Հայոց Մայրագույն պատրիարք և կաթողիկոս ընտրեց ամենապատիվ Տ. Տ. Գևորգ արքապիսկոպոս Զերոբեքանին:

Կաթողիկոսական միաձայն ընտրությունն աննախընթաց է մեր եկեղեցու պատմության մեջ: Այդ հանգամանքը ինքնին վկայում է այն մեծ ժողովրդականության մասին, որ վայելում է նորընտիր կաթողիկոսը: Այդ ցուցը է տալիս և այն, որ հավատացյալ հայը գիտե ճանաչել և գնահատել իր ազնիվ և վաստակավոր գործիշներին:

Այն չերմ և խանգավառ հանդիպումները, որ ունեցան հավատացյալների լայն խավերը նորընտիր Հայրապետի հետ, ցուց են տալիս, որ հայ հավատացյալը անխախտելի կապերով միացած է Մայր Աթոռի և կուսավորչի գահի հետ:

Մենք լիակատար կերպով հավատացած ենք, որ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ը ըստ ամենայնի և ամենակարճ ժամանակամիջոցում Համազգային-եկեղեցական ժողովի որոշումները ձեռնհասորեն կիրականացնի և կարդարացնի համայն հայ հավատացյալների հույսերը: Մի բան, որ նա արդեն ապացուցել է իր գործունեությամբ լուր տեղակալության ժամանակամիջոցի քառամյա բեղուն գործունեությամբ:

ՈՌԻԹԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ԶԵԿՈՒՑՈՒՄ

Ս. Էջմիածնի Բարձրագույն Հոգևոր Իշխանության իր բառամյա գործունեության մասին
(1941—1945 թ.)

1941 թվի ապրիլի 10-ին Ս. Էջմիածնում գումարվեցավ Ազգային-Եկեղեցական ժողով Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար: Սակայն Հայրապետական ընտրությունը չկայացավ հետևյալ պատճառներով՝ ա) արտասահմանի պատգամավորները, բացի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ և պատգամավոր Գերշ. Տ. ԽԱԴ արքեպիսկոպոս Ազարահյանից, պատերազմի պատճառով՝ անկարող էին եղել գալ և մասնակցել Ազգային-Եկեղեցական ժողովին, և բ) Կաթողիկոսի օծումը Հայ Եկեղեցու ավանդական սովորության և կանոնական կարգերի համաձայն կատարելու համար պահանջված եպիսկոպոսների քանակը չկար. ուստի կաթողիկոսական ընտրությունն ու օծումը հետաձգվեց պատեհ ժամանակի, որպեսզի հնարավոր լիներ գումարել Ազգային Եկեղեցական ժողովը և ընտրությունը կատարել Սովետական Միության և Արտասահմանի պատգամավորների լայն մասնակցությամբ և օծումը Հայ Եկեղեցու ավանդական կարգերի և Եկեղեցական կանոնների համաձայն:

Այսօր, երբ Հայրենական մեծ Պատերազմը, մանավանդ Սովետական Միության և դաշնակիցների անձնվեր ջանքերի շնորհիվ փառավոր հաղթությամբ վերջացավ և Եվրոպայում ու Մերձավոր Արևելքում Խաղաղություն հաստատվեցավ, Ս. Էջմիածնի Բարձրագույն Հոգևոր Իշխանությունը հնարավոր գտավ Սովետական Իշխանության համաձայնությունն ստանալ և Ազգային-Եկեղեցական ժողով հրավիրել Ամենայն Հայոց Հայրապետի պահանջությունը ընտրությունը կատարելու

և իր բառամյա գործունեության հաշիվն ու մերձավոր ապագայի ծրագիրները ներկայացնելու նպատակով:

1. Ս. Էջմիածնի ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱՋՄԸ

1941 թվի ապրիլի 10-ին գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը վեռ նոր էր վերջացել, երբ գերմանական հորդաները ներխուժեցին մեր երկիրը: Ս. Էջմիածնինը շնորհ կարող անսարքեր լինել Հայրենիքին սպաննացող այդ վտանգի հանդեպ: Նա անմիջապես հրահանգեց արտասահմանի և Միութենական բոլոր թեմերին մաղթանքներ կատարել, չերմագին աղոթքներ վերառագել Բարձրալին, Կարմիր բանակի զինքն օրհնել և հաջողություն մաղթել:

Պատերազմի հաղթական ելքն ապահովելու համար Ս. Էջմիածնինը հայրենասիրական կոչեր ուղղեց ամենուրեք հայ ժողովրդի սիրոց հայրենասիրական զգացմունքներով վառելու, հայությունը իբրև մի մարդ ուսքի հանելու, իր գույքն ու կամքը, իր մտավոր և ֆիզիկական աշխատանքը և իր կյանքը տրամադրելու Հայրենիքի պաշտպանության:

Ս. Էջմիածնի ձայնը լսեց հայ հոգևորականությունը և իր հոտին ուղղած հայրենասիրական հուզիչ քարոզներով ովանդեց հայ հավատացյալներին Հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարով:

Մեր նախնիքը դարերի ընթացքում պայքարել են օտար բռնակալների դեմ, որոնք ձգտել են ֆիզիկապես և հոգեպես ստրկացնել հայ ժողովրդին: Սակայն նա քրիստո-

նեական ոգով դաստիարակված, Հայրենիքի սիրով վառված, իր ազատության և անկախության համար զոհվելու պատրաստ, միշտ ուղարքաբեկ է նոցա դեմ և եթե ոչ միշտ փեղիկապես, բայց բարոյապես միշտ էլ հաղթանակել է:

Հայ ժողովրդի այս ազատասեր և պայքարող ոգու ցայտուն պատկերներով ոչ մետքն հարուստ է Հայոց հին պատմական կյանքը, այլ և նորագույն կյանքը: Այդ ողին հմայիչ պատկերներով դրսեռովել է մեր նոր գրականության, կլասիկ գրողների ստեղծագործությունների մեջ:

Հայ ժողովրդի այդ պայքարող ոգին ապրում է նաև այսօր: Հայ ժողովրդը շինացեց իր սիրասուն զավակներին ուղարկել Հայրենական պատերազմի դաշտը, հայրենասեր հին հոմական ժողովրդի պատգամը իր մարտիկներին տալով՝ Ծկահանովդ կամ վահանիդ վերա, այսինքն մեռի՛ ու ոտզմադաշտում կամ վերադարձի՛ հաղթանակով:

Պարծանքով պիտի շեշտեմ, որ հայ դինովոր պատվով կատարեց հայրենի ժողովրդի սրբազն պատգամը: Իր անձնվեր հերոսությամբ Հայրենական պատերազմում հայ մարտիկը հայ ժողովրդի մարտական ոգու նոր ու փայլուն օրինակներ հանդիս բերեց և հաղթանակի փառքով պասկեց հարազատ ժողովրդին և իրեն: Անձնութացության և զերծ հայրենասիրության վեհ զգացմունքներով տոգորված բազմաթիվ հայ մարտիկներ հերոսացան, որոնց անունները դարդարեցին հայ պատմության էջերը: Հայ ժողովրդի սիրելի մարտիկները արժանացան ամենամեծ պատվի, նոքա արժանացան Մեծ Առաջնորդի գովքին և պարգևատրվեցին:

Եթե Հայրենական Մեծ պատերազմում Մայր Երկրի հայությունը հանդես եկավ իր անձնագործությամբ, արտասահմանի հայությունն էլ նվեր բերեց Հայրենական պատերազմի հաջողության համար իր խնայողություններն ու քրտնաշան աշխատանքի պըստուները: Հատկապես արտասահմանի հայության և Ս. էջմիծանի նվիրաբերության շնորհիվ պատրաստվեցին ՍԱՍՈՒԽՑԻ ԴԱՎ-ԹԻ անվան տանկային երկու սերիա շարա-

սյուներ, որոնք երդվալ զեկավար քաջամարտիկներով անձնվիրաբար կովեցին թշնամու դեմ, զախշախեցին ու դուրս քեցին նրան մեր հարազատ հողից: Այս են վկայում Զինվորական Խշանության պաշտոնական գովասանական հեռագրերը, որոնք զետեղված են «էջմիածին» ամսադրում:

Այսպես, ուրեմն, Հայրենական պատերազմը ոչ միայն առիթ հանդիսացավ հայ ժողովրդի համար իր պատմական մարտական ոգին ցուցաբերելու, իր ազատությունն ու անկախությունը անձնվիրաբար պաշտպանելու, այլև ցայտուն առիթ ծառայեց ապացուցանելու հայ ժողովրդի նվիրվածությունը ընդհանուր Հայրենիքին և անիսախտ բարեկամությունը հանդեպ ուսա մեծ ժողովրդի:

2. Ս. ԷջՄԻԱՆԻՆԸ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց Հայրապետները՝ զեկավարվելով Ս. էջմիծանի հանավանդ սովորությամբ սփյուռքի հայության այցելության էին ուղարկում նվիրակներ, որոնք տանում էին Ս. Մյուռուն և Հայրապետի ողջույնը ի միսիթարություն հայ ժողովրդի: 1941 թվի ապրիլի 10-ին, Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը որոշել էր «Հանձնարարել Գեր. Հոգ. Խ-ին պարբերաբար ուղարկել լիազոր - ներկայացուցիչներ Միութենական և արտասահմանյան թեմերը ծանոթանալու նոցա իրական վիճակին, հոգեոր իշխանության գործունեության, թեմերի կարիքներին ու պահանջներին և որոշ ցուցումներ տալու համար: Այլև թեմերի և Մայր Աթոռի մեջ գոյություն ունեցող կապը առավել խորացնելու և սերտացնելու նպատակով և այս բոլորի մասին զեկուցանելու Ս. էջմիածնի Հոգ. Բարձր Խշխանության:

Կերպոհշյալ սկզբումքներից ելնելով Մենք, որպես Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ, Մերձավոր Արեւելքի թեմերին, Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և Ս. Երուաղեմի Պատրիարքության ալյանություն տալու նաատանու

գործուղեցինք Ս. էջմիածնի գիտական քարտուղար պրոֆ. Աշոտ Արրաջամյանին, որպես Ս. էջմիածնի լիազոր պատվիրակ, տալով նորան որպես անձնական քարտուղար և խորհրդակից ուսուցիչ Անուշավան Տեր-Գրիգորյանին:

Պատվիրակությունը կես տարի շրջապահել է Մերձավոր Արևելքի թեմերում, եղել է Աստրատականում, Իրանում, Հնդկաստանում, Իրաքում, Եգիպտոսում, Երուսաղեմում և Անթիվասում: Վերադարձել է Ս. էջմիածնին և Մեզ Ներկայացրել զեկուցագիր իր կատարած աշխատանքների մասին: Թե զեկուցագիրը, թե հավատացյալ համայնքներից ստացված գրությունները և թե մամուլը վկայում են, որ պատվիրակությունը արժանացել է սրտափին ընդունելության: Այս երեսութը ապացուց է, որ Սփյուռքի հայությունը խորապես կապված է իր Մայր Հայրենիքի և Մայր Աթոռի ու նորա նվիրական սրբությունների հետ, որ անշափ միխթարում է Մեզ: Սույնպես նաև Մեզ գոհունակություն պատճառեց Մեր Պատվիրակության այն հայտարարությունը, թե Սփյուռքի հայությունը սիրելով հանդերձ իր Հայրենիքն ու Ս. էջմիածնը, միաժամանակ լոյալ քաղաքացիներ են այն պետության, որի հովանին վայելում են, և Սփյուռքի մեր եկեղեցիները հեռու են կանգնած քաղաքական հոսանքներից: Այդ է պատճառը, որ Մերձավոր Արևելքի տեղական իշխանությունները հարգանք են տածում դեպի հայ համայնքները: Մերձավոր Արևելքի կառավարությունների բարյացակամ վերաբերմունքը հանդեպ Մեր պատվիրակության և Մեր հոտի բարոյապես պարտավորեցնում է Մեզ հայտնել նոցա Մեր գոհունակությունը և Մեր օրնությունը: Պատվիրակության զեկուցումը նշում է նաև հիշյալ վայրերի մեր թեմական իշխանությունների սիրալիք վերաբերմունքը հանդեպ մեր պատվիրակության, ծանոթացնելով նոցա թեմական գործերին և գործառնությանց: Ամենուրեք հրավիրվել են թեմական խորհրդի նիստեր, լսվել են առաջնորդների կամ փոխանորդների զեկուցումներ, ծանոթացրել են իրենց համակարգերի մասին աշխատանքների գործուղականությանը:

և հասարակական կաղմակերպությունների աշխատանքներին և դրությին:

Այս վարդագիծը նշանակ է նոցա պարտաճանաշության և կարգապահության գիտակցության, որ գովելի է, ուստի և նշելի Մեր կողմից:

Պատվիրակությունը պատշաճ ընդունելություն է գտել նաև թե Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և թե Երուսաղեմի Պատրիարքության կողմից: Հատկապես Մեզ մեծ ուրախություն պատճառեց հիշյալ երկու Սրբավայրերի Միաբանության մեջ գոյություն ունեցող փոխհասկացողությունն ու համերաշխությունը, այլ և այն փաստը, որ այնտեղ դաստիարակված նոր սերունդը պատրաստված, հայրենասեր և եկեղեցուն ու ժողովրդին նվիրված սերունդ է, որ կազմում է նոր Միաբանության հիմքը: Այս երեսութը շափականց միսիթարական է:

Պատվիրակությունը իր վերա գրված պաշտոնական պարտականություններից գուրս հանձնարարություն ուներ նաև այս Ազգային-Եկեղեցեական ժողովի գումարման հաջողության նպաստելու, որ կարենոր դեր պիտի ունենա մեր եկեղեցու պատմության մեջ: Այսօրվա արտասահմանյան պատգամավորների բազմությունը և որակյալ լինելու հանգամանքը ապացուց է, որ պատվիրակությունը բարեխղճորեն կատարել է նաև իր այս պարտականությունը: Եվ Մենք ուրախ ենք, որ մեր եղբայրներն ու հոգնոր զավակները, որոնք այսօր ներկա են Ս. էջմիածնում, պիտի վերացնեն Հայրապետական Գաճի սև քողը, պիտի տեսնեն առաջնի վերակառուցվող վիճակը և երկրորդի վերելքը, պիտի համբուրեն Ս. էջմիածնի Սրբությունները և վերադառնալով իրենց ծննդավայրը առավել ևս պիտի ամրացնեն Մայր Աթոռի և Մայր Հայրենիքի կապը Սփյուռքի հայության հետ: Այս ուղղությամբ մեծ գործ ունին կատարելու մեր Հոգեւոր եղբայրները, որոնք միշտ ել եղել են էջմիածնասեր և կմնան այդպիսին: Մեր գոհունակությունն ենք հայտնում և օրհնությունը տալիս պատվիրակությանը իր հաջող գործունեության համար:

3. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՍՀՄԱՆԱՊՐՈՒԹՅՈՒՆԻԸ

Հայ եկեղեցու սահմանադրությունը անհրաժեշտություն է: Մեր թեմերում բազմաթիվ կանոնադրություններ կան, որոնց մեջ շատերը, տեղական պայմաններին հարմարեցնելու նպատակով կազմված են այնպես, որ խախտած են Հայ եկեղեցու Սահմանադրության հիմնական սկզբունքները, թուլացրած են Ս. Էջմիածնի և թեմի կապը, սահմանափակված են Ամենայն Հայոց Հայրապետի իրավունքները և այլն: Կան նաև այնպիսիները, որոնց մեջ շատ մեծ շափով շնչառված են թեմի աշխարհականացման և անկախացման միտումները: Ահա թե ինչու անհրաժեշտ է Հայ եկեղեցու Սահմանադրության նախագծի շուտափույթ մշակումը, որպեսզի հիշյալ անցանկալի երևույթները վերանան:

Հայ եկեղեցու Սահմանադրության մշակման անհրաժեշտությունը Ս. Էջմիածնը վաղուց զգացել է: 1932 թվին գումարված Ազգային եկեղեցական ժողովին Գեր. Հոգ. Խորհուրդը ներկայացրել է զեկուցում Հայ եկեղեցու Սահմանադրության նախագծի մասին, ուր, սակայն, նշված էին միայն Հայ եկեղեցու Սահմանադրության հիմնական սկզբունքները և ոչ նորա հոդվածական կառուցվածքը արված: Հիշյալ Ազգային եկեղեցական ժողովը հանձնարարել է Բարձրագույն Հոգ. Խշխանության՝ կազմել հատուկ Մասնաժողով հմուտ անձներից և հանձնել նրան մշակել Հայ եկեղեցու Սահմանադրության նախագիծ, ելակետ ունենալով զեկուցման մեջ բերված մեր եկեղեցու կանոնական և ավանդական սկզբունքները:

1932 թվի Ազգային-Եկեղեցական ժողովի հանձնարարությունը շարու չէր կատարված: Մենք նկատի առնելով նորա կարելությունը և ժամանակակից պայմաններում հնարավորություն շնորհնալով գիտակ անձանց լայն մասնակցությամբ մշակել, հանձնարարեցինք այն կազմել Հայ եկեղեցական իրավունքին գիտակ անձի՝ իրավաբան Աղեքսանդր Պապովյանին առաջարկելով զեկավարվել Հայ եկեղեցու միասնականության գաղափարով և ընտրական սկզբունքով առաջնորդ ունենալ Հայ եկեղեցու կա-

նոններն ու հին ավանդությունները և այդ նյութին վերաբերյալ հայտնի գրավոր աղբյուրները: Ահա այդ նախագիծն է, որ հայ եկեղեցու կյանքին ու պատմության գիտակ անձանց քննարկման բովից անցնելուց հետո այսօր գրվում է Ազգային եկեղեցական պատկառելի ժողովի առաջ ի քննություն և ի տնօրինություն:

4. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Գեր. Հոգ. Խորհուրդը 1932 թվի Ազգային եկեղեցական ժողովին համառոտ զեկուցում էր ներկայացրել Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի մասին: Ազգային եկեղեցական ժողովը որոշեց հիշյալ զեկուցումը ենթարկել բոլոր թեմերի թեմական պատգամավորական ժողովների և թեմական ժողովների քննարկման: Լսել մամուլում արտահայտվելիք տեսակետները, Տանն կիլիկիո Կաթողիկոսի և Երուսաղեմի ու Կ. Պոլսու Պատրիարքների կարծիքները և ապա Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվելիք Գեր. Հոգ. Խորհրդի ժողովում մշակել և արդյունքը հայտարարել Հայրապետական Կոնդակով ի գործադրություն և ապա մերձավորագույն Ազգային-Եկեղեցական ժողովին ներկայացնել ի հաստատություն:

Երջանկահիշատակ Տ. Խորեն Ա. Կաթողիկոսը 1937 թվի օգոստոսի 1-ին, թիվ 417 Կոնդակով հիշյալ զեկուցումը ուղարկել էր Ս. Երուսաղեմի հանգուցյալ Թորգոմ Պատրիարքին, Համաձայն Ազգային-Եկեղեցական ժողովի ցանկության, հանձնարարելով վերևում հիշատակված եղանակով քննարկել այն և արդյունքը իր եղբակացությամբ ներկայացնել ի վախճանական խմբագրություն և ի տնօրինություն: Հանգուցյալ Թորգոմ Պատրիարքը տպագրել է տվել «Սիոն» ամսագրում Հայրապետական Կոնդակն ու Գեր. Հոգ. Խ.-ի զեկուցումը և ապա ամսագրի հետագա համարներում զեկուցման մեջ արձարձված յուրաքանչյուր հարցի մասին արվել է բացատրություններ պարզելով իր տեսակետները, որ ապա լույս է տեսնելու նաև առաջնորդ գրքույկով: Այդ աշխատանքը

չէ կատարված նորա երկարատև հիվանդության և անակնկալ մաշվան պատճառով։ Անցյալ Ազգային-Եկեղեցական ժողովը շգբաղվեց այդ խնդրով։ Այս ժողովին է մնում հարցի տնօրինությունը՝ կարճել այն կամ ընթացք տալ արծարծված խնդրին։

5. ԱՐՏՍԱՍԱՀՄԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵջ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԼՈԴԱԿԸ

Արտասահմանում մենք ունենք Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Ս. Երուաղեմի և Կ. Պոլսի Պատրիարքություններ ու 13 թեմ Հյուս։ Ամերիկայի Արևելյան թեմ, Հյուս։ Ամերիկայի Արևմտյան կամ Կալիֆորնիայի թեմ, Հարավ։ Ամերիկայի գաղութներ, որոնք դեռևս թեմ չեն դարձած, Իրանա-Հնդկաստանի թեմ, Թեհրանի թեմ, որ նոր է կազմված ժողովրդի և նորա առաջնորդների բուն ցանկության հետևանքով, Ատրապատականի թեմ, Խումանիո թեմ, Բուզարիո թեմ, Հունաստանի թեմ, Եվրոպայի թեմ, Մարսի թեմ, Իրաքի թեմ, Իրանականի թեմ, Իրաքի թեմ և Եգիպտոսի թեմ։

Միութենական սահմաններում ունենք ըստ Հնույն վեց թեմ՝ Արարատյան Հայրապետական թեմ, Շիրակի թեմ, Վրաստանի թեմ, Բագմի և Թուրքիստանի թեմ, Հյուս։ Կովկասի թեմ և Նոր-Նախիջևանի ու Քեսարիայի թեմ։ Արցախի ու Գանձակի թեմերը, որոնք գտնվում են Աղքաբաշանում, միացվել են Բագմի թեմին, իսկ Սյունյաց թեմը՝ Արարատյան թեմին։

Գաղութահայ թեմերից վեցն ունեն Եպիսկոպոս առաջնորդներ—Կալիֆորնիայի, Հարավ։ Ամերիկայի, Եգիպտոսի, Ատրապատականի, Թեհրանի, Եվրոպայի և Հունաստանի թեմերը։

Մնացյալները կառավարվում են վարդապետ կամ քահանա առաջնորդական փոխանորդներով, որ ապացուց է եպիսկոպոսների պակասության։

Արտասահմանյան թեմերն ունին բավականաշափ եկեղեցիներ և քահանայություն, դպրոցներ, բարեգործական և կուլտուրական հաստատություններ, որոնց մասին մանրամասն տեղեկություններ չունենք, բացի մի քանիսից։ Ս. Էջմիածնի պատվիրա-

կության այցելությունից։ Հետո Մերձավոր Արևելքի թեմերից ստացվել են ընդարձակ տեղեկագրեր, որոնց մեջ հատկապիս ուշադրության արժանի են Եգիպտոսի և մանավանդ Ս. Երուաղեմի Պատրիարքության ընդարձակ և բովանդակալից տեղեկագրերը։

Միութենական վեց թեմերը կառավարվում են վարդապետ առաջնորդներով և քահանա առաջնորդական փոխանորդներով։ Բոլոր թեմերն էլ ունեն թեմական խորհուրդներ։ Թեմերում կան եկեղեցիներ, սակայն նոցա թիվն ավելացնելու կարիք գգացվում է։ ուստի և Հոգևոր Իշխանությունը այդպիսի վայրերում առժամապես կարգել է շըրշիկ քահանաներ, որոնք հոգում են ժողովրդությունը կրոնական պետքերը, մինչև որ հարաբեր լինի բանալ այն վայրերում եկեղեցիներ և կարգել քահանաներ։ Գործող եկեղեցիների թվի պակասությունը բացատրվում է նրանով, որ ծերացած և մահացած քահանայության փոխարինող երիտասարդ կադրեր չենք ունեցել հոգևոր դպրոց շունենալու պատճառով, որ այսօր լուծված պիտի համարել ճեմարանի բացմամբ, և երկրորդ՝ եկեղեցական անօթների, սպասների և եկեղեցական զգեստների պակասության հետևանքով, որ նույնպես հետզհետէ կարգվում է։

Արտասահմանի և միութենական թեմերի գուգահեռ նկարագրերը ըստ երևույթին նըշշում է գաղութահայ թեմերի առավելությունը։ սակայն միայն ըստ երևույթին։ Արտասահմանյան թեմերը պահում են հայ գրաբոցներ և կուլտուր-կրթական հաստատություններ, որպեսզի հայ լեզվի, հայ պատմության և մշակույթի ուսուցմամբ հայ մարդը ազգային ինքնագիտակցություն ձեռքբերե և քաղաքակրթությամբ բարձր ժողովուրդների մեջ ձուլման վտանգից զերծ մնա։

Հայ եկեղեցին Սովետական Միության սահմաններում այդ հաստատությունների մասին հոգալու կարիք չունի։ Նոքա մեր երկրում գոյություն ունեն և ավելի մեծ շափով։ սակայն նոցա ղեկավարում է ոչ եկեղեցին, այլ Պետությունը և այն էլ հայ Պետությունը։ Եկեղեցին Սովետական Միու-

թյան մեջ չի կարուտում բարեգործական հաստատությունների. եթե անցյալում եկեղեցին օգնում կամ պահում էր հայ տարրական դպրոցներ, օգնում էր կարիքավոր ուսանողության բարձրագույն ուսում ստանալու համար, այժմ նորա կարիքը չկա, բանի որ տարրական ուսումը պարտադիր է և ծրի, համալսարանի և մասնագիտական դպրոցների դռներն էլ բաց են բոլորի առաջ և այդ դպրոցների ուսանողներն ունին հանրակացարաններ, արժանագին ճաշարաններ և ստանում են պետական թոշակ. Կուլտուրկրթական հաստատությունները հայ մշակույթը զարգացնելու և կուլտուրական մասսային մատչելի զարձնելու միջոցներ էին: Այսօր նույնը ավելի լայն շափերով իրակործում է Սովետական Հայաստանը—գյուղ չկա, որ դպրոց, թատրոն, կինո, երաժշտություն, էլեկտրական լուս, աղբյուրի ջուր և նման բարիքներ չունենա: Այս բոլորին գույքնիաց, Սովետական Հայաստանի Կառավարությունը մեծ հոգացողություն ունի հայ լեզվի, գրականության և հայ գեղարվեստի զարգացման, հայ անցյալի ուսումնասիրության, նորա պատմական հարստությունների պահպանման մասին և շանք չի խնայում հայի նյութական բարեկեցությունը զարգացնելու նկատմամբ: Ուրախ ենք, որ գաղութահայ պատգամավորությունը այս բոլորը անձամբ տեսնելու, ուրախանալու և իրենց երկիրը վերադառնալով մեր հոտին միմիթարելու առիթ պիտի ունենա:

6. Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Ս. էջմիածինը, որպես համայն հայության հոգևոր կենտրոն, պիտի ունենա բավարար թվով կուսակրոն հոգեկորականություն և քահանայություն: Հոգեկոր դաս պատրաստող հաստատությունը Մայր Աթոռի Հոգեկոր ճեմարանն էր, որ գաղարել է գոյություն ունենալ 1917 թվից, որի հետևանքով մեծ կարիք է զգացվում թե կուսակրոն հոգեկորականության և թե քահանայության, մանավանդ միութենական ներքին թեմերում և Մայր Աթոռում:

Այսօր ի միմիթարություն բոլորիս, կառող եմ հայտարել, որ դժվարագույն

խնդիրներից մեկը լուծվել է, և լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով. Ս. էջմիածնին իրավունք է տրված Հոգեկոր ճեմարան ունենալ: Ծնորհիվ Սովետական հշխանության հոգածու և բարյացակամ վերաբերմունքի տրամադրված է Մեզ նախկին Մատենադարանը, որպես ճեմարանի շենք, վերանորոգած և հարմարեցրած ճեմարանի համար: Այլև ճեմարանի պահպանության դժվարություններն էլ մասամբ լուծել է Մեր Կառավարությունը՝ խոստանալով ճեմարանին անհրաժեշտ աշակեցություն ցուց տալ և արդեն արձակել է ճեմարանի համար կահկարասիր:

Այս հիմնական աշխատանքը կատարելուց հետո, թվում է, թե իրավունք ունի՞մ ասելու ևս իմ պարտք կատարեցի: Պատկառելի ժողովիդ է մնում ճեմարանի տրնտեսական ապահովության կարիքը հոգալ: Այժմ վստահ կարող ենք լինել, որ Ս. էջմիածնի ճեմարանը Ս. Երուաղեմի և Տանն Կիլիկիո ընծայարանների հետ ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգեկոր եկեղեցական կարիքները հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վերա դնելու, որ այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգեկոր զորացման, կուլտուրական բարձրացման և ազգային ինքնագիտակացության զարգացման համար: Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է, վեցամյա դասընթացով, միջնակարգ դպրոցի եռամյա դասընթացով և բարձրագույն դրաբոցի՝ երեք լսարաններով: Ուսումը կսկսվի սույն տարվա սեպտեմբերից:

7. Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Վերակառուցվող էջմիածնի համար տրպարանը ամենակարևոր հաստատություններից մեկն է: Եկեղեցական գրքերի տպագրության կարիքը վաղուց զգացվում էր. իսկ այժմ ևս առավել, երբ հետզհետէ նոր կարիքներ են ավելանում նոր եկեղեցիների և, մանավանդ, Հոգեկոր ճեմարանի բացմամբ, որ հատուկ ճեմարանների է կարուտում: Տպարանը պիտի դյուրացնէ և կանոնավորի նաև օրացույցի և «էջմիածին» ամսագրի հրատարակությունը իր ժամանակին:

Հիշատակված հանգամանքներն ինքնին ըզդալ են տալիս տպարանի կազմակերպման արագացումը: Մենք այժմ ունենք տպարան ունենալու իրավունք և տպարանի շենք: Մենք հնարավորություն ունենք նաև ստանալու տպարանի ինվենտարը, որ սակայն չկամեցանք. նախ այն պատճառով, որ հընացած է և երկրորդ՝ անհարմար համարեցինք առնել Հայրենիքից այն, որին տալու պարտականությունն ունինք և երրորդ, որ ունինք արտասահմանյան հայրենասեր Հայություն, որի առատաձենությունը Մենք տեսանք Հայրենական պատերազմի ժամանակ և վստահ ենք, թե նույնը պիտի տեսնենք առավել ևս Ս. էջմիածնի վերակառուցման և Հայրենիքի վերաշինության ժամանակ:

8. ՄԵՐ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Վաղուց ցանկություն ունեինք գնալ Մոսկվա, ներկայանալ կենտրոնական իշխանության եկեղեցական որոշ խնդիրներ լուծելու համար: Տարվույս ապրիլ ամսին հաջողվեցավ գնալ Մոսկվա Ս. Միության ժողկումսովետին կից եկեղեցական Խորհրդի նախագահ հվան Վասիլիկը Պոլյանսկու հետ տեսակցել և որոշ հարցեր լուծել: Ապրիլի 19-ին հաճեց ինձ ընդունել մեր երկրի և աշխարհի Մեծ Մարդը ի՛ՌՍԻՑ ՎԻՍՍԱՐԻՌՈՆՌՎԻՇ ԱՏԱԼԻՆԸ և լսելով մեր զեկուցումը Ս. էջմիածնի մի շարք կարիքների մասին անձնական մակագրությամբ գրականապես լուծեց, որ երկրի և մեզ համար օրենք դարձավ:

Ի. Վ. ԱՏԱԼԻՆԻ Մեղ ընդունելը պետք է համարել Մեծ Մարդու գոհունակության և համակրության նշանակ հանդեպ Հայ ժողովրդի, իսկ խնդիրների մակագրական դրական որոշումը հանդեպ էջմիածնի տածած վստահության: Այս բացառիկ երևույթը, կատարելապես վստահ եմ, թե կդնահատվի թե Ազգի և եկեղեցու կողմից, և կարդարանաւ:

Մինչև այժմ Մեր ունեցած փաստական արտոնությունները Մեծ Մարդու մակագրությամբ ստացան նաև իրավական բնույթ:

Թե մակադրությամբ ի՞նչ հարցեր են արծարձված և ի՞նչ արտօնություններ են շընորհված, կպարզվի Մեր գրավոր զեկուցման ընթերցմամբ:

9. Ս. Էջմիածնի ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1941 թվի Ազգային-Եկեղեցական ժողովի ժամանակ Ս. էջմիածնի Միաբանությունը ուներ 4 հոգևորական՝ Տեղակալ՝ Գեղորդ Արքապիսկոպոս Գեղրեքյանը, որ և նախագահ Գեր. Հոգ. Խորհրդի, Արքեն Արքեպիսկոպոս Ղլշյան՝ Գեր. Հոգ. Խորհրդի անդամ և միաբանության երկու անդամներ՝ Հովհաննես ծ. վարդապետ Հյուսյան և Մատթեոս վարդապետ Աջեմյան: 1943 թվի հոկտեմբերի 9-ին վախճանվեցավ Արքեն Արքեպիսկոպոսը և նույն թվի դեկտեմբերին՝ Հովհաննես ծ. վ. Հյուսյանը: Մնացին միայն երկու միաբանն: Մանր էր Ս. էջմիածնի վիճակը, առավել ծանր էր մանավանդ և չնշի Մեր հոգեկան վիճակը, գիտակցելով Մեր պատասխանատվությունը հանդեպ Մեր խղճի և հանդեպ Մեր ժողովրդի ու եկեղեցու Այս կրիզիսից ենեկու երկու հանապարհ ունեինք՝ ա) շանալ Հոգեոր ճեմարանը բանալ և բ) Միաբանության թիվը շատացնել: Այսօր երկու հարցերն էլ, թե նժամարին լուծելի, սակայն Տիրող օգնությամբ լուծվեցան: Այսօր փաստ է ճեմարանի բացումը, որ տեղի կունենա արև սեպտեմբերին, փաստ է նաև, որ այսօր Ս. էջմիածնի ունի 11 միաբան՝ վեցը ճեմարանավարտներ են, երկուսը՝ ինստիտուտ ավարտած, մեկը ներսիսյան դպրանոցից և մեկն էլ կիմ անապատի միաբան: Կա նաև երկու խնդրատու նոր միաբանություն կազմելիս զեկավարվել ենք կրթական ցենզով, աշխատել ենք, որ նոր միաբանը մինիմում միջնակարգ կրթություն ունենա: Երկրորդ՝ եկեղեցական և ժողովրդական լինի Առայժմ Մեր կարծիքն այն է Մեր Միաբանության մասին, որ սիստեմած չենք համարի Մեղը Այսու հանդերձ Ս. էջմիածնինը, այն մեծ հաստատությունը, կարուտամ է գոնք 20 միաբանի, որպեսզի հնարավորություն ունենա և վանքի ներքին գործերը դեկալի կավարել, մինչև որ հոգեոր ճեմարանն ա-

վարտած նոր սերունդ ունենալ ավելի պատրաստ և ավելի ընդունակ հայ ժողովրդի և հայ եկեղեցու գործերը տնօրինող, կարիքները հոգացող:

10. Ս. Էջմիածնի թԱՐՁՐ ՀՈԳԵՎՈՐ ԽՇԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ԳԻՄԸ

Ս. Էջմիածնի Հոգևոր Բարձր Խշանությունը, ինչպես միշտ, նույնպես և այժմ, ձգտել է պահպանել հայ եկեղեցու կանոնական և ավանդական կարգերը, պահպանել հայ եկեղեցու սահմանադրական սկզբունքները և նախանձախնդիր լինել հայ եկեղեցու միասնականության, ջանացել է Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքությունների, արտասահմանի և մեր երկրի ներքին թեմերի և նորա զեկավարների հետ սերտ կապ պահպանել և գոյություն ունեցող բարոյական կապը ևս առավել զորացնել: Այս է պատճառը, որ էջմիածնին 1932 թվին գումարված Ազգային-Եկեղեցական ժողովին հրավիրեց Տանն Կիլիկիո Կաթողիկոսին և նորա միջոցով կաթողիկոսության հինգ թեմերը մասնակցելու Ազգային-Եկեղեցական ժողովին նույն իրավունքներով, ինչ իրավունքներով մասնակցում են էջմիածնական թեմերը: Նույն նպատակով էր, որ էջմիածնը մասնակցեց Տանն Կիլիկիո Կաթողիկոսական ընտրության, որով կամեցավ երկու Աթոռների մտերմական հարաբերությունը ևս առավել սերտացնել: Ս. Էջմիածնինը այսօր ուրախ է, որ Կիլիկիո գահը բազմել է էջմիածնական մի եպիսկոպոս՝ Գարեգին Արքեպիսկոպոս Յովսեփյանը, այժմ Կաթողիկոս Տանն Կիլիկիո, որ իր ամբողջ կյանքում սիրել է և սիրում է մասնական հայ եկեղեցին և հայ ժողովուրդը և իր կյանքը նվիրել է Հայ մշակույթի զարգացման և հայ ժողովրդի բարօրության ու երանկության: Նա Մեր անձնական ընկերն է և մեր գաղափարակիցը: Ուրախ ենք նաև, որ Պատրիարքական Աթոռները բազմած են էջմիածնասեր և հայրենասեր հոգևորականները: Ս. Էջմիածնինը նույն գիծը տարել է նաև բոլոր թեմերի նկատմամբ ձգտելով պահպանել հայ եկեղեցու միասնա-

կանությունը, համարելով այն մեր եկեղեցու և ժողովրդի օգուտը: Էջմիածնը կատարելապես գո՞ւ: Է նաև թեմակալ առաջնորդներից, որոնք բոլորն էլ, պահանջմանը հարկին, տվել են իրենց բարյացակամության ապացույցներ: Յավ է Մեզ, որ Հյուսիսային Ամերիկայի մի քանի քահանաներ համառորեն ընթանում են իրենց սխալ ուղիով. սակայն Մենք չենք կորցրել Մեր հույսը, ոք նոքա կդառնան և կմիանան թէմին: Քազաքական տեսակետով Ս. Էջմիածնը՝ նորա հետ նաև Հայ եկեղեցին, ունեցել են հանդեպ մեր Պետության չերմ և բարյացակամ վերաբերմունք, որպիսի վերաբերմոնք տեսել է նաև փոխադարձաբար նորա կողմից: Եվ, այդ բնական է, քանի որ Սովետական Խշանությունը եղել է Հայ ժողովրդի պատմական հույսերի միակ ռեալ արդարացնողը. և նա է, իրապես, այսօր էլ նորա կողմից: Եվ այդ բնական է, քանի որ նատեսակ շահերի պաշտպանը, ինչպես և նորա կուտուր-կրթական զարգացման հենարանը:

11. Ա.ԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ

1941 թվին գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը որոշեց առաջիկա ժողովը գումարել հարմարավոր ժամանակ, երբ հնարավոր լինի Արտասահմանի պատգամավորների և բավարար թվով եպիսկոպոսների գալն ու մասնակցելը ժողովին, որպեսզի կարելի լինի նորընտիր Կաթողիկոսի օծումը կատարել հայ եկեղեցու ավանդական կարգերի և կանոնների ճշգրիտ պահպանմամբ, ինչպես և պատգամավորների լրիվ կազմով, որ ընտրյալը լինի հայ ժողովրդի ընտրյալն ու ցանկալին: Այս տեսակետով սրոշեցավ հունիսի 16-ին նշանակել ժողովը, երբ ամեն դժվարություններ հարթված են և հնարավորություն կալու և մասնակցելու ժողովին:

Անցյալ ժողովը որոշել էր իր կազմը պահպանել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտաքո կարգի երեսություններ կարող են տեղի ունենալ և անհրաժեշտ զարձնել և ընտրյալը համարել, Բարե-

բախտաբար արտաքո կարգի երեսլիթներ տեղի չունեցան և ժողով գումարելու կարիք չեղավ: Նկատի առնելով՝ ա) որ Ազգային-Եկեղեցական ժողովը երբեք սեսիաներ չի ունեցել, այլ գումարելով՝ է մի անդամվահամար և կատարելով իր ֆունկցիան ցրվել է, բ) որ անցյալ ժողովը հատկապես հրավիրված էր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար, իսկ այս ժողովը ունի լուծելու այլ լուրջ խնդիրներ, որոնք պահանջում են այլ պատրաստության տեր պատգամավորներ, գ) որ նախկին պատգամավորներից — թե աշխարհիկ և թե հոգևորական — շատերը մահացել են և նոր ընտրության կարիք կար, սույնպես նաև նոր ընտրություն էր պետք արտասահմանյան այն պատգամավորների փոխարեն, որոնք ժամանակի պայմանների հետևանքով ընտրվել էին մեր երկրից և այժմ պահանջվում էր նոր ընտրություն կատարել, այս բոլոր հանգամանքները բնականաբար թելադրեցին Մեզ նոր ընտրություն կատարել, որով համայնքները չեն զրկվում իրենց նախկին պատգամավորներին վերընտրելու իրավունքից, ինչպես և նոքա, որոնք կատարեն նորերը ընտրել՝ հնարավորություն ունեն նոր ընտրություն կատարելու:

12. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀԻԴԻ ԿԱԶՄԸ

1941 թվին Ազգային-Եկեղեցական ժողովը ընտրել էր Գեր. Հոգ. Խորհրդի շորս Հոգգորական և երկու աշխարհական անդամներ: Հոգեորականներ — Գարեգին Արքեպիսկոպոս, Գեվորգ Արքեպիսկոպոս, Հուակի Արքեպիսկոպոս և Արսեն Արքեպիսկոպոս: Աշխարհականներ — իրավաբան Պ. Ավանեսյան և բժ. Եղիազարյան: Տեր Գարեգին և Տ. Հուսիկ արքեպիսկոպոսները չկան: Աշխարհականներից էլ իրավաբան Ավանեսյանը պատերազմի ընթացքում անհետացավ: Մնացյալ երեք անդամները երբեմն միայն խորհրդակցություն ունեցել են, այն էլ շատ կարևոր գեպերում, ինչպես օրինակ Հայրենական Պատերազմի առթիվ, Մայր Աթոռի կողմից նվիրներ տալու և մեր մասնակցությունը որոշելու նպատակով, այլա-

պես ընդհանուր առմամբ հարցերը լուծվել են երկու եպիսկոպոսների բանավոր համաձայնությամբ: Այսպես շարունակվեցավ մինչև 1943 թվի հոկտեմբերի 9-ը, երբ Տ. Արքուն Արքեպիսկոպոսը մահացավ: Նույն տարվա օգոստոսի 19-ին հրաժարվել էր թժ. Եղիազարյանը և ես մնացել էի մենակ: Պատերազմի հանգամանքները թելադրում էին արագ գործելակերպ և ձկունություն, այս տեսակետով մենք ավելորդ համարեցինք կոպտացիայի կարգով հրավիրել Գեր. Հոգ. Խորհրդի նոր անդամներ և բարձր համարեցինք գործել անհատապես, իբրև Հայրապետական Տեղակալ, կարևոր գեպերում հրավիրել գիտակ անձանց խորհրդակցություն: Այսպիսում, ուրիշն, այսօրվա հաշվետվության թերի և դրական կողմերի համար Մենք ենք պատասխանատու:

13. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԺՈՂՈՎԻՆ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը 1642 տարվա հունվարին է: Նա Հայոց Հայրապետության առաջին Աթոռն է, որի հիմնադիրը Հայաստանի Բ. Լուսավորիչն է, Հայոց առաջին Հայրապետը: Ս. Էջմիածնին իր Հայրապետներով տվել են Հայ ժողովրդին հայ գիր ու գրականություն, տվել են հայ գեղարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն և մանրանկարչություն, նպաստել են հայ մտքի զարգացման, կազմակերպել են հայ եկեղեցին և այս բոլորը, որի անոնն է հայ մշակույթ, պահպանել և ավանդել են մեզ, այլ և եղել են հայ ժողովրդի Փիղերական գոյության պաշտպանն ու պահպանը: Այս նվիրական գործունեության համար է, որ Հայ ժողովրդը սիրո և երախտագիտական զգացմամբ լցված հյուսել է Ս. Էջմիածնի և նորա Հայրապետների մասսին հոյակապ ավանդություններ ու առասպելներ, որոնք ընորոշում են այդ պատմական խոշոր հաստատության արժեքը: Ս. Էջմիածնին իր անցյալով այսօր աշխարհիս ամենակուլտուրական ազգին պատիվ կարող է բերել, իսկ մասն ազգերը նախանձել կարող են նորա փառքին, սակայն մենք ցարդ քիչ ենք ուշադիր եղել այդ հաստատության նկատմամբ: Այդ մեծ

Հաստատությունն է, որի վերա կամենում եմ հրավիրել այս պատկառելի ժողովի ուշադրությունը:

Ժողովրդական մեծ Հայրապետի՝ Հայրիկի օրերից սկսած, մոտավորապես հիսուն տարի է անցել և Մայր Տաճարը թե ներսից և թե դրսից անմիտիթար պատկեր ունի: Թիֆլիսի հայ հարուստներից մեկը՝ վաճառական Մանթաշյանը ժամանակին հանձն էր առել վերաշխնել Տաճարը և կառուցել վեհարան, որի բարի իջեց, սակայն, անկատար մնաց: Այս ժողովին է վիճակված ըստանձնել այս մեծ գործի ձեռներեցությունը՝ և կազմակերպությունը, և մեր գաղութահայ հարուստ եղբայրներին այդ փառքի վաստակումը: Մեր իդն է ներքնապես կամ վերականգնած տեսնել նախկին նկարազարդումը և կամ հայ գեղարվեստական նոր նկարներով նկարազարդել հայ կյանքի և Ս. Գրիգ պատկերներից օգտվելով՝ ինչպես, օրինակ, Այվազովսկու աշխարհի ստեղծագործության նկարն է, նոր նկարազարդմամբ կշահենք, քանի որ Տաճարի հին նկարազարդումը մենք ունինք այլուր, իսկ նորը կլինի հառաջադիմական մի քայլ: Արտաքնապես կկամենայի կամ մարմարոնապատ և կամ զրանիտով պատած տեսնել: Բնականաբար սա մի ցանկություն է, որ ենթակա է ժողովի, և մասնագետ, ճաշկավոր ճարտարապետների ու նկարիչների քննարկման: Միայն այս աշխատանքից հետո Մայր Տաճարի բազմաթիվ օտարազդի և տեղացի այցելուները Տաճարը դիտելուց հետո կհեռանան ոչ թե զարմանք հայտնելով հայի անտարերության վերա, այլ դովելով հայի հայրենասիրությունը և կուլտուրականությունը:

14. Ս. ԷջՄԻԱԾՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Մայր Աթոռը տնտեսապես ապահով էր, ուներ հարյուր հազար դեսյատին հողեր, անտառներ, մեծ քաղաքներում անշարժ կալվածներ, վեց միլիոնի շափ դրամագլուխ տոկոսներ և տարեկան ոչ պակաս հարյուր հիսուն հազար ոռոգլու եկամուտ ուկով, այլ և յոթը գյուղի յուղի, պանրի և հացահա-

տիկի եկամուտ: Այսօր նա ապավինած է միայն Ս. Էջմիածնի, երևանի երեք եկեղեցիների և Լենինականի մի եկեղեցու մոմավաճառության, արդյունքին, այլև մկրտության, լուսագնի և գանձանակադրամներից գոյացած եկամուտին: Այս եկամուտին պետք է ավելացնել նաև Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու եկամուտը, որ Մենք 1944 թվի մարտից դարձել ենք վանական եկեղեցի և եկամուտը, ծախսերն հանելով, հատկացրել ենք Ս. Էջմիածնին: Ցարդ նորա եկամուտը թույլատրել ենք ծախսել եկեղեցու շինարարության վերա, որ արդեն ավարտված պիտի համարել: Այս սեպտեմբերից եկամուտը պիտի ստանա Մայր Աթոռը:

Հիշատակված եկամուտներով հնարավոր է պահել 10—15 վարդապետ և մի կերպ կառավարել վանքը, բայց Ս. Էջմիածնը կառավարել, որ պիտի ունենա առնվազն 20—30 միաբան ու թեմերը, վանքերն ու հաստատությունները կառավարելու համար, որ ունի գիշերօթիկ հոգեսոր ճեմարան վեցամյա դասընթացով, որ ունի տպարան, միայն իր կարիքները հոգալու համար, որ ծախսի դուռ է և ոչ արդյունքի աղբյուր, որ ունի վանքերը առանց կալվածի, որոնք վարդապետ պիտի պահեն, անտեսություն ունենան և վանքի հնությունները պահպանեն, առանց եկամուտ ունենալու, որ, վերջապես, ժամանակի ընթացքում կարող է նաև այլ հաստատություններ՝ ունենալ — այսպիսի մի խոշոր հաստատություն տնտեսական ապահովության կայուն հիմք՝ բազա պիտի ունենա: Մեր երկրում մենք կալվածական ապահովություն ստեղծել շնչեր կարող, քանի որ այդ Սովետական երկրների պետական կառուցվածքին չի համապատասխանում: Ապա, ուրեմն, կարևոր է տնտեսական բազա ստեղծել արտասահմանում՝ շնորհիվ դրամական և կալվածական նվերների, կտակների և այլն: Այս խնդրում մեծ դեր պիտի խաղան, անշուշտ, մեր առաջնորդները մասնավորապես, և ընդհանրապես մեր հոգերականությունը: Եվ Մենք մեծահույս ենք, թե մեր արտասահմանի հարուստների առատաձեռնության և հոգեսոր

դասի նվիրյալ շանքերի շնորհիվ կարճ ժամանակում կստեղծվի պատկառելի տնտեսական բազմա:

**15. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ
ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԼ ՀՈԲԵԼՅԱՆԸ**

Ակադեմիկոս պրոֆ. Մտեփան Մալխսանյանը էջՄԻԱՄԻՆ ամսագրին հանձնել և մի ուշագրավ հոդված, որով հիշեցնում է, թե 1941 թվին լրացել է Հայրապետական Աթոռի վախճանական փոխադրության 500-ամյակը իր նախկին վայրը՝ Ս. էջմիածին։ Այն հանգամանքը, որ պատերազմի պատճառով հնարավորություն չի եղել իր ժամանակին տոնելու այս տոնը, արգելք չէ, որ Մենք այժմ տոնենք, համարելով այս 500-ամյակը Ս. էջմիածնի երկրորդ վերածնընդույան սկիզբը։ 500-ամյակի տոնելու ձեզ նա չի նշում և թողնում է որոշել Ազգային-Եկեղեցական պատկառելի ժողովին, որին շատ ավելի ձեռնհաս է համարում այդ հո-

բելյանը հավերժացնելու։ Սույն առաջարկը Մենք գտնում ենք շափազանց տեղին և կարևոր և արժանի Ազգային-Եկեղեցական ժողովի ուշադրության։

Ավարտելով Մեր խոսքը պարտք ենք համարում Ս. էջմիածնի կողմից հրապարակավ հայտնել խորին շնորհակալություն աշխարհի Մեծ Մարդուն ԽՈՍԻՅՎԻ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ՍՏԱԼԻՆԻՆ, որ հայ ժողովրդի պատմական մեծ հաստատության, նորա Մրբություն Մրբոցի՝ Ս. էջմիածնի վերակառուցման հիմքը դրավ, այլ և Կենտրոնի և Հայ Սովետական Կառավարության, որոնք աշակեցին Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման, դյուրացրին արտասահմանի պատգամավորների մուտքը Սովետական Հայաստան։

**Ազգբնտիր Տեղակալ Ամենայն
Հայոց Հայրապետուրյան
ԳեՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**



Հանուանմբ ի գործադրութիւն.
Գլուզ Զ. Խորսդիկոս
Ամենայն Հայոց
ի 25 յունիսի 1943 տմῆ
ի Ս. Էջմիածին

ԸՆԴԵՑԻՆ-ԵԿԵՊԵՑՄԿՆ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԾԵՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԿԸՆՈՒԾԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագույն կանոնագիր մարմինը Ազգային-Եկեղեցական ժողովն է:

2. Ազգային-Եկեղեցական ժողովը գումարվում է Ս. Էջմիածնում:

3. Ազգային-Եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք Կարողիկոսը:

4. Ազգային-Եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք Կարողիկոսը:

5. Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքները ժողովի նախաթռու անդամներն են:

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիմնադրության դեպքում Ազգային-Եկեղեցական ժողովին նախագահում են Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և կամ Կ. Պոլսո Պատրիարքը: Սոցա բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահը՝ Կաթողիկոսի հանձնարարությամբ:

7. Ազգային-Եկեղեցական ժողովի իրավասությանն ենթակա են Հետևալ հիմնական խնդիրները.

Ա) Ընտրություն Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք-Կարողիկոսի:

Բ) Ընտրություն Ս. Էջմիածնի Գերապետին Հոգևոր Խորհրդի անդամների:

Գ) Հաստատություն Ազգային-Եկեղեցական Սահմանադրության:

Դ) Քննություն և գնուահատություն Եկեղեցական և այլ կանոնական և ընդհանուր հարցերի:

Ե) Կարգավորում Եկեղեցական տնտեսական վիճակի:

8. Ազգային-Եկեղեցական ժողովը որոշում է իր գրադադրութիւնը և գործադրութիւնը և այլ գործադրութիւնները:

Չում է իր գրադադրութիւնը օրակարգը և գործունեության ներքին հրահանգը.

9. Ազգային-Եկեղեցական ժողովի անդամ են՝

Ա) Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները.

Բ) Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր եպիսկոպոսներով և Երուսաղեմի ու Կ. Պոլսո Պատրիարքները:

Գ) Հայոց Եկեղեցու բոլոր առաջնորդները:

Դ) Հայոց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները:

Մանորություն. — Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցել չկարողանալու դեպքում մասնակցում է թեմի հոգևորականության ընտրյալ հոգևորական ներկայացուցիչը:

10. Ազգային-Եկեղեցական ժողովի անդամ են Ս. Էջմիածնի, Տանն Կիլիկիո, Ս. Երուսաղեմի միաբանության, Կ. Պոլսո Պատրիարքության մի-մի ներկայացուցիչները:

11. Ազգային-Եկեղեցական ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրված երեսուն տարին լրացած իրավասուժականները:

12. Յուրաքանչյուր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային-Եկեղեցական ժողովին իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով:

13. Մինչև քան և հինգ հազար ժողովուրդ սմեցող թեմը ընտրում է մեկ պատգամավոր, յուրաքանչյուր թեմը ընտրում է այնքան պատգամավոր, որքան անդամ քան և հինգ հազար ժողովուրդ է պարունակում իր մեջ:

Վերջին 25.000-ը կարող է լրիվ մինել, բայց ոչ պակաս 10.000-ից:

Սանորություն.—Ա. Յուրաքանչյուրի թեմ իր ընտրելի պատգամավորների թվով ընտրում է անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամավորին, եթե նա որևէ պատճառով անկարող է անձամբ մասնակցել ժողովի:

Մանորություն.—Բ. Յուրաքանչյուրի թեմ վիճակագրության հիման վրա բաժանվում է շրջանների այն հաշվով, որ յուրաքանչյուր շրջան բաղկանաքսան և հինգ հազար ժողովրդից:

14. **Ազգային — Եկեղեցական ժողովի** թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են Հոգևորականների և քաղաքացիական շափահասություն ունեցող աշխարհական իրավասու ծխականները:

15. Յուրաքանչյուր հազար շունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատվիրակ:

Մանորություն.—Փոքր համայնքները ըստ հարմարության միացվում են պատվիրակ ընտրելու համար:

16. **Պատվիրակները** պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից:

17. **Ազգային — Եկեղեցական պատգամավորների**, անձնափոխանորդների, պատվիրակների ընտրությունը ՍՍՌ Միության սահմաններից դուրս գտնված թեմերում կատարվում է ըստ տեղական գործող Հայոց կանոնադրությունների, սահմանադրությունների և կամ ավանդական կարգերի, հրահանգվելով սույն կանոնադրությամբ:

18. **Ազգային — Եկեղեցական ժողովի** պատգամավորների ընտրության առթիվ ծագած ամենատեսակ տարակուսանքների լուծումը տալիս է Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը:

19. **Կարիք եղած դեպքում** Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը տալիս է հարկավոր բացատրություններ և հրահանգներ, իսկ Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքությունները վճռում են իրենց ներքին կանոնադրության համաձայն:

20. **Ամենայն Հայոց Կաթողիկոսի** մահվան դեպքում կաթողիկոսի ընտրության համար Ազգային — Եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ:

21. Նոր կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում կաթողիկոսի մահվանից ոչ ուշ քան վեց ամիս հետո:

22. **Ամենայն Հայոց Կաթողիկոսի** ընտրությունը կատարվում է Ս. էջմիածնի Տաճարում սույն կանոնադրության համաձայն:

23. **Ամենայն Հայոց Կաթողիկոսի** ընտրության կարգը որոշում է Ազգային — Եկեղեցական ժողովը:

Սույն կանոնադրությունն ընդունված և վավերացված է 1945 թ. հունիսի 19-ին տեղի ունեցած Ազգային — Եկեղեցական ժողովի երրորդ նիստում:

Դիվան Աջողաջին —
Եկեղեցական ժողովը

ՄԱՅՐ ԱԹՈՂ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի հովիսի 1-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնազրություն։ Ձեռնադրությանը ներկա էին Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ը, Ազգային-եկեղեցական ժողովի հոգեգորական և աշխարհական պատգամավորները։

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Գեղորգ Զ-ը եպիսկոպոսական աստիճան տվեց Ա. Երուսաղեմի պատրիարք Կյուրեղ ծ. վարդ. Իրայնլյանին, Բոլգարիայի առաջնորդ Գրիգոր վարդ. Կարապետյանին,

Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Տ. Տիրան ծ. վարդապետ Ներսոյանին, Ամերիկայի հովիլ Տ. Սիոն ծ. վարդապետին, Կալիֆորնիայի հովիլ Տ. Վարդան ծ. վարդապետին, Իրանա-Հնդկաստանի և Թեհրանի առաջնորդ Տ. Վահան ծ. վարդ. Կոստանյանին, Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ Տ. Սուլեյման ծ. վարդ. Թորույանին, Էջմիածնի միաբաններ Տ. Կարապետ վարդ. Թումանյանին, Տ. Ներսես վարդ. Աբրահամյանին և Տ. Ռուբեն ծ. վարդ. Դրամբյանին։

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կարգադրությամբ Օրջոնիկիձեի քահանա տ. Վահան Թավարրեկյանը նշանակված է Կիրովաբագի քահանա, տ. Վարդգես քահանա Գրիգորյանը՝ Բարձի և Թուրքմենստանի թեմի առաջնորդական ժամանակավոր փոխանորդ։

— Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Գեր. Տ. Վահան եպիսկոպոսը հեռացրով հաղորդում է Ամենայն Հայոց Վեհա-

փառ Կաթողիկոսին, որ Եկեղեցական ժողովի Իրանա-Հնդկաստանի պատգամավորները, գլխավորությամբ Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ի հովիսի 26-ին ներկայացել են Իրանի Շահին և Հանձնել Վեհափառ Հայրապետի Կոնդակը։ Իրանի Վեհապետը իր գոհունակությունն է արտահայտել Նորին Վեհափառության օրհնության առթիվ և կարգադրել է վերադարձնել Իրանի հայոց եկեղեցապատկան կալվածները հայկական եկեղեցիներին։



Սույն թվի սեպտ. 29-ին Ա. էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սուլը Օծության Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեղորգ Զ-ի անվանակոչության տոնակատարությունը։ Մատուցվեց Ա. պատարագ։ Պատարագից գերաշնորհ Ռուբեն եպիսկոպոսը շնորհավորելով Վեհին նրա երկարամյա ար-

դյունավետ գործունեության համար հոգևոր ասպարիզում՝ խնդրեց Բարձրյալին առողջություն և երկար կյանք պարգևել Վեհին։ Պատարագից հետո Վեհի Աջն առնելով շնորհավորեցին նրան Մայր Աթոռի միաբանները։ Այնուհետև Վեհափառի Գահին մոտեցան երկսեռ հավատացյալների խըմ-.

բերը, որոնք շերմ զգացումներով համբուրեցին Նորին Սուլը Օծության աջը: Մ. պատարագից հետո միաբանության առաջնորդությամբ Վեհափառ Հայրապետը մեկնեց Վեհարան, ուր միաբանության հետ տեղի ունեցավ շերմ և մտերմական գրուց եկեղեցական հարցերի շուրջը: Միաբանությունը հյուրասիրվեց նախաճաշով:


Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի
անվանակոչության տոնի կապակցությամբ
ինչպես մեր թեմերից, նույնպես և արտա-
սահմանյան մեր թեմերից, տեղի հայ հա-
մայնքներից և անհատ ազգայիններից ու
հասարակական գործիչներից ստացվել են
բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և
գրություններ:



Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս
Տ. Գեղորգ Զ-ի հասցեով արտասահմա-
նյան հայ համայնքների կողմից շարունակ-

վում են ստացվել բազմաթիվ շնորհավորա-
կան ուղերձներ նրա գահակալության կա-
պակցությամբ:





ՀԱՄԱԶԳԱՑԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋԸ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի
Հայրապետական ընտրության աշխատանք-
ներն ավարտելուց հետո Համազգային եկե-
ղեցական ժողովի պատգամավորները և
նրանց հետ Հայրենիք ժամանած հյուրերը
էքսկուրսիաներ կատարեցին դեպի Մայր
Հայրենիքի զանազան վայրերը:

Նրանք տեսան պատմական Զվարթնոցը,
ո. Գայանեի, Հոփիսիմեի, Սևանի ու Գե-
ղարդի հինավորց մենաստանները, Համ-
բուրեցին և Մեսրոպի սրբազն շիրմը,
պտտեցին Մայր Հայաստանի նորակերտ
մայրաքաղաքի բոլոր անկյունները, տեսան
նրա հոյակապ ու գեղատեսիլ ժամանակակից մեջ՝
կանաչավեր ու լայնարձակ փողոց-
ները, այցելեցին Հայրենի երկրի կովտուր-
կրթական հաստատությունները՝ դպրոցնե-
րը, քարձրագույն կրթական հիմնարկները,
թանգարանները, գրադարանները, հիմն-
դանոցները, շքեղազարդ թատերասրահ-
ները, դիտեցին Հայաստանի արվեստա-
գետների ինքնագործ աշխատանքները,
կինոնկարները, նկարչական ցուցահանդես-
ները, եղան հայրենի երկրի կոլ-
խոզներում, սովորություններում և այլն:

Սփյուռքի հայ ժողովրդի ներկայացու-
ցիները սեփական աշքերով տեսան իրենց
վերածնված ու ծաղկած Հայրենիքի՝ Սովե-
տական Հայաստանի նոր կյանքը, ականա-
տես եղան այն բազմազան ստեղծագործ
աշխատանքներին, որ կատարում է հայ ժո-


ղովովրդը իր ազատ Հայրենիքում, Նրանք
համոզվեցին, որ նախկին բազմաշարշար,
խոշտանգված ու հարստահարված Հայաս-
տանը միայն Սովետական Միության մեծ
ընտանիքի մեջ գտավ իր Փիզիկական գո-
յության ապահովությունը և միայն սովե-
տական պայմաններում է աճում ու զար-
գանում հայ ժողովրդի ազգային կուլտու-
րան, նրա ինքնուրույն պետական կյանքը:

Զվարթ ու կենսախինդ Մայր Հայրենիք-
ի բերկրալից կյանքին ականատես սփյուռքի
հայ պատգամավորները կպատմեն ար-
տասահմանի մեր հայ եղբայրներին ու
բույրերին Մայր Հայաստանի շտեսնված
այս վերելքը և կցրեն այն շարամիտ ա-
ռասպելները, որ հայ ժողովրդի թշնամինե-
րը տարածել են սփյուռքի հայության մեջ
Մայր Աթոռի և Սովետական Մայր Հայաս-
տանի մասին:


Սփյուռքի հայ պատգամավորները, վայե-
լիով Մայր Աթոռի սիրալիր հյուրընկալու-
թյունը, Մայր Հայրենիքից վերադարձան
դո՞ւ սրտով, ներշնչված խորին երախտագի-
տական զգացմունքով առ Սովետական Հայ-
րենիքն ու հայ ժողովուրդը ի տրիտուր այն
հոգատար վերաբերմունքի, որ նրանց ցուց
տրվեց Մեծ Միության երկրում:

Նրանք տարան Մայր Հայրենիքի հողն
ու ջուրը սփյուռքի հայ եղբայրներին ու
բույրերին՝ նրանց հայրենատենչ կարուտն
առնելու համար:

Պատգամակրներ Ավրամիկ:



Պատգամավորները Սկսեն «Միկոյան» ճակա լի վրա:





Պատգամավորները Սևանի ափին:



Պատգամավորները տաճում են հող Մայր Հայրենիքից:

ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀՅԵՐԵՆԵՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԻՄՑԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ¹⁾

«Հրաւիրակ Արարտան»-ի «Երրորդ նուագ»-ում Խրիմյանը իր մանուկներին ման է ածում պատմական Հայաստանի գլխավոր կենտրոններում, նրանց տանում է Արտաշատ, Վաղարշապատ, Անի, Գառնի, Բագրեվանդ, Մաղկոտն, Շիրակ, Վանանդ և այլն. Նկարագրելով վերոհիշյալ վայրերի երբեմնի ծաղկյալ ու բարդավաճ կյանքը, շքեղությունը, ժողովրդի հանգիստն ու ապրուսոր, վշտացյալ Հայրիկը այրված և մորմորված սրտով բացականչում է.

«Այլ աւաղ, ոչ տեսանէք ըստ
առաջնոյն նորին ըզկերպ
Հոյակապ և փառաւոր կանգնեալ
հանդէալ լերին Մասեաց.
Թէ երբեմն իցէ լեալ այս
մայրաբաղաք Հայաստանեայց»:

Խոսքը հայոց երբեմնի մայրաբաղաքի, Վաղարշապատի մասին է: Խրիմյանը սրտի դառն կսկիծով է պատմում նրա ներկա անշրությունը, որը արդեն մի սովորական և այն էլ անշուրք գյուղ է և ոչ մի հետք չի մնացել, որ վկայի պատմական մայրաբաղաքի մասին:

Այնուհետև պատմելով Տրդատի հզոր թագավորության մասին, շեշտում է կույսերին նահատակելը, Գրիգոր Լուսավորչին հալածելը.

«Յորժամ վէս Վաղարշապատ գոճիր
ահեղ մտաբերեաց,
Տիրանենգ և դաւաճան գտաւ
յարբայն իւր Տրդատէս,
Զահն շիշոյց գերալոյն մահու ըզդեղ
մատոռուակեալ,

Յայնժամ և զիւր և այս օրինակ պատեաց խաւար»:

Հաջորդ մասերում նկարագրում է արտաքին թշնամիների հարձակումը Հայաստանի վրա և գլխավորապես կանգ է առնում ներքին անմիաբանության վրա: Ահա մի շարիք, որի դեմ իր անխնա պայքարն է մղում Խրիմյանը.

«Ոչ միայն արտաքին սուր թշնամեաց և արհաւիրք

եկին յայնժամ և այսպէս հասին վերայ Հայոց երկրիս.

Այլև մարտք ի ներքուստ
գրքը ունակ ի նախարարսն,
Կատաղարար մոլեգնեալ տոհմ ընդ

տոհմի հարան ի մարտ,
եւ իսպառ շընչեալ վիրեարս թափուր

կացին ի սերբնդոց»:

Հայոց Հայրիկը մեր պետականության քայլայման երկու պատճառ է ընդունում. առաջինը՝ արտաքին թշնամին է, օտարը իր սրով և արհավիրքներով, երկրորդը՝ ներքին թշնամին է, հարազատը իր անմիաբանությամբ և երկպառակություններով: Այն ահեղ, ներքին կոփվները, որ մղում էին նախարարական տները միմյանց դեմ կատաղի, մոլեգին կոփվներ էին, որի ընթացքում միմյանց բոլորովին բնաշնչում էին:

Հայրիկը հայրենիքի այս թշնամու անմիաբանության դեմ ուժեղ պայքար է մղում, նրա սիրտն ու հոգին շեն հաշտվում այս կործանարար ախտի հետ: Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու այնքան

անինա է, անմիաբանների և մանավանդ գալաճանների հանդեպ: Նրա խոսքն աղդու է, նախատինքը՝ խայթիչ, կործանող և վառող նման շանթերի, որոնք տեղատարափ թափվում են ամեն կողմից: Այս պարագայում նրա սիրտը արյուն է շնչում, նրա թոքերը մազձ ու լեզի են թափում, նրա աշխերից ու հայացքից դուրս են ժայթքում խանձող կայծակները: Այսպես է Հայրիկը, նրա սրբազն զգացումները խառնվում են, տակն ու վրա լինում, երբ տեսնում է դավաճանություն հայրենիքին:

Երբ Հայրենիքը պատերազմի մեջ է թշնամու գեմ, պիտի լոեն ներքին բոլոր տարածայնությունները, պիտի մոռացվեն երեկու արյունոտ վերքերը և մահացու խոսքերն ու բոլորը մի սիրտ, մի կամք, մի լեզու և մի բերան դարձած կանգնեն թշնամու գեմ և իրենց մահաբեր նիզակներն ուղղեն նրա կրծքին: Այսպես միայն կարելի է փրկել Հայրենիքը, այսպես միայն կարելի է տրորել և ոչնչացնել թշնամուն:

Այսպես է մոտենում խնդրին Խրիմյանը: Թերևս հարկ չիներ այս խնդրի վրա այսրան ծանրանալ, եթե այն շեշտված չիներ Հայրիկի մյուս աշխատություններում ևս: Նրա յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր քարոզի հիմնական խնդրիներից մեկը սըրբազն միասնության խնդրին է: Կարելի է ասել, այն քայլում է Խրիմյանի հետ ամեն մի քայլափոխում:

Արդյոք նո՞ր խնդրի էր դնում Խրիմյանը, նո՞ր գաղափար էր քարոզում նա: Ոչ երբեք:

Այս խնդրիը գալիս էր հնագույն գարերից, այն գալիս էր մեր և գարի գրեթե բոլոր մատենագիրներից, այն եկավ նաև հետագայում մինչև մեր օրերը:

Խրիմյանը տեսնում է Հայաստանի հուշարձանները, որոնք կարող են ամոքել իր վերքերը, հույս ներշնչել նրան դեռևս ապագայի վերաբերմամբ, և նա գրում է.

Ալևագիկ առ ինքն ունի զանկողոպուտ շուրջն, պարծանք

Զվեհագույն երկնանըման Կաթողիկէ եկեղեցին,

Ուր անխախտ եղին հիմունս ձեռք Տրդատայ և Գրիգորին Յափտիան անդըրդելի կալ իշողմոցն սաստկաշունչ:

Խոսքը, իշարկե, Ս. Էջմիածնի մասին է, Էջմիածնի, որ հավիտենականորեն անդրդվելի է սաստկաշունչ հողմերի ու փոխորիկների առաջ: Կարծեք թե Խրիմյանը մի փոքր շունչ է քաշում և ովկորվում: Հիրավի նա պիտի ովկորվեր, քանի որ ահավոր ամայության մեջ տեսնում էր հայ ժողովորի ստեղծագործական փառավոր կոթողներից մեկը, «Երկնանմանն ու վեհագույնը», որի փառքը անկողոպտելի է:

Խրիմյանն իր հայրենասեր, պանդուխտ մանուկների հետ Անիումն է:

Մանրամասն նկարագրելով Բագրատունյաց մայրաբաղաքի փառքն ու շքեղությունները, Անիի հազար ու մի եկեղեցիները, արքայական տան կյանքը, երկրի առատությունը, վաճառաշահությունը, արհեստների զարգացումը և ժողովրդի հարուստ բարեկեցիկ կյանքը և նայելով նրա պիերակներին, դառնապես լալիս է:

«Դլալ հարկանիմ գառնապէս և դուք ընդ իս ի լաց շարժեալ թափեցուք արտասուք ի նըշխարեալ յԱնի քաղաքն»:

Սակայն Խրիմյանի լեզուն չի պատվում, որ պատմի Անիի գլխով անցած աղետները, նա հրաժարվում է և խնդրում, որ Անին ինքը պատմի, նա այստեղ կարծեք թե հարություն է տալիս ավերակների մեջ թաղված քաղաքին և խոսնցնում: Այս արդեն աննկարագրելի սիրո արտահայտության ձևն է, որ հրապարակ է բերում Խրիմյանը:

Աևսա մեզ, արդ, լալագին մեք լուս կացեալ լուփցուք աստ,

Եւ լացցուք ըզեկ յաւէտ, զքեզ, որ այդշափ անշքացար»:

Խրիմյանի հայրենասիրությունը թույլ չի տալիս ասելու կործանվեցար, այլ ասում է «անշքացար»: Ինչպես քիչ հետո կտեսնենք, նա Անին վերականգնելու հույսեր է փայփայում իր սրտում, նա խորհում է, որ ժամանակը հնարավորություն կտա Անին իր նախկին փառքին հասցնելու:

Խրիմյանը խոսում է ինչպես մեծ մար-

դարե, նրա հոգին դդացել է, իսկ ինքը անխախտ հավատ ու համոզում է ունեցել, որ ժամանակը հայ ժողովրդի վերքերը պիտի բուժի, որ հայերը վաղ թե ուշ պիտի ունենան իրենց պետականությունը:

Եվ Անին զիջելով բանաստեղծի թախանձանքներին սկսում է պատմել իր կյանքը:

Պատմում է՝ «արքավանդ և բարերերադաշտերի մասին, «լայնանիստ և մեծամեծ ապարանքներ»-ի, ««արմարադիր, աշխարհամուտ դռներ»-ի, «բարձրադիտակ ընտիրնտիր աշտարակներով պարիսպների», «արքայանմ արքունիքներ»-ի, Բագրատումյաց թագավորներ Աշոտի, Սմբատի, Շահընշահի, Նախարարների, ավագանու, իշխանների մասին, նրանց զորահանդեսների ու քաջության, «ոսկեսարյան թեթե-թեթե նժույգներ»-ի, «բազմախումբ զորականներ»-ի, «աճնղազոր, քաջամարտիկ նահատակվող սպաներ»-ի, նրանց գնդերի, դրոշակների և այլնի մասին; Պատմում է ժողովրդի, այգեստանների, բուրաստանների, ցորենի, գինու, ոչխարների հոտերի և գյուղացու ստացած բրտնավատակ բերքի մասին»:

Զի և ընդէ՞ր մոռանամ ասել զանթիւ
գեղօրէից,
Որ զինեւ շուրջ մօտ ի մօտ ի շրա-
մէտ վայրս շինյալ էին
Շինականք շահաւոր զարդը վայելուշ
դաշտանց լերանց,
Այս վաստակ արդինաբեր լընոյր
զամբարը Շիրակայ քաղաքիս
Բաւ և առատ ի պէտս իմ քաղաքիս
բազմամարդիկի,

Այնուհետև Անին ողբում է իր անկումը և իր անպաշտպանությունը կրկին անդամ շեշտելով անմիաբանությունը:

«Եւ Գագիկ հզօր առիւծն ի
գապագիղն ի Յունաստան
Մոնղէր վասն իմ ցաւօք, ա՞հ,
տիրադրուժքն արարին զայն»:

Թշնամիները մտնում են Անի, սկսվում է զարհուրելի կոտորածը: Սակայն հաղթողները չեն հագենում մոր գրկում աղջկան,

Հոր գրկում տղային սպանելուց, Ախուրյանը դիակների կույտից իր ընթացքն է փոխում, իսկ գազանաբարը տիրողը երիտասարդ աղջիկներին ու տղայոց մորթել է աւալիս, նրանց արյունից կազմված լողարանում լողանում, որպեսզի հագուրդ տա իր վրեմինգրությանը:

Կրիմյանը Անիի բերանով նկարագրում է նաև հայկական ճարտարապետությանը Անիում և ընթերցողի ուշագրությունը հրավիրում է «գարմանակերտ» մայր կաթողիկէ եկեղեցու վրա, որ հիմնել է Բագրատունի Սմբատ թագավորը իր գահակալության առթիվ: Այս ճարտարապետության հիանալի կողողը կրիմյանը համարում է «ճարտարապետության հրաշարուեստ», որը կառուցել է Տրդատ ճարտարապետը: Այնուհետև նկարագրում է եկեղեցական զարդերն ու սպաները, անոթները, խաչերն ու խաչվառները, կճյա սյուները և մարմարյա խորանները: Ինչ խոսք, որ հաղթողի այնօրինակ գազանաբարը վարմունքը, որ վերը նշեցինք, աղատասեր հայ ժողովրդը շեր կարող տանել, եվ ահա սկսվում է գաղթը:

Կրիմյանը գաղթականությունը համարում է ոչ միայն ազգային, այլ և հասարակական խոշոր շարիք և նա ոչ մի կերպ չի հաշտվում մայր հայրենիքը թողնելու և օտար հորիզոններ գաղթելու մտքի հետ: Ոչ միայն իր այս երկի մեջ, այլև իր բոլոր դրվագներում, քարոզներում, սովորական դրույցներում նա շեշտում է գաղթի աղետաբեր հետևանքը և հուսադրում ժողովրդին կապվել հողի հետ, հողն ու հայրենիքը շրեթել: Առանց ժողովրդի, ասում է կրիմյանը, հայրենիք լինել չի կարող, մանավանդ առանց հողի, երկրագործության հետ կապված ժողովրդի, այն է՝ առանց գյուղացիության:

Այս համոզումը Հայրիկի մեջ խիստ ամրացած է և նա ուժեղ պայքար է մղում գաղթի ու գաղթականության դիմ, նրա մտահոգության և գործունեության կենտրոնը նրա ամբողջ կյանքի ընթացքում կազմեց գաղթի դիմ պայքար կազմակերպելը և հոգատար վերաբերմունքը աշխատավոր ժողովրդին՝ գյուղացիության:

Հայրիկը բնորոշ գծերով նկարագրում է գաղթի կորստարերությունը, այն հուսախաբությունը, որ հետագայում ապրում է իր տուն ու տեղը, իր օջախը լքող գաղթականը։ Օտար միջավայրում նրա համար սկըսվում է բացվել տանջանքների ու տառապանքների մի անվերջանալի շղթա, որի լուրաբանը օղակից կամ են ընկած անթիվ ու անհամար դառնություններ և այդ շղթայից չի աղատվելու ոչ միայն ինքը, այլև շեն աղատվելու իր որդիները, թոռներն ու ծոռները։

Խրիմյանը խիստ զգացված նկարագրում է գաղթվողի հոգեկան ապրումները, նրա հուշերը հայրենի տան ու տեղի մասին, հարազատ միջավայրի մասին, տալիս է նրա անկայուն և անորոշ կյանքի հիվանդակին պատկերը և զարհուրքանքով գլուխը շուռ է տալիս այդ սարսուցուցիչ տեսաբանը շտեսնելու համար, այդ սոսկալի և ահավոր ախ ու վախերը շահելու համար։

Ի վերջո նա այս անմխիթար վիճակի ելքն է որոնում, նա ելքը գտնում է նրանում, որ Անին պիտի վերանորոգել, լցնել ժողովրդով և այն վերաշինել իր նախկին փառքով։

«Եցէ թէ գութ շարժիցի մանկուոյդ ի սիրտ դիւրագորով Մնացելոյս այս խնայել և նորոգել զիս վերստին։

Եւ ի ծոց այրույս կրկին ձեզ բնակիլ ուրախազուարձ, Վա՛շ, յայնժամ տառապեալս լինի ովուզ ուրախամիտ Ուստերովք և դատերովք բերկեալ իբրու զմայր հօթնածին, Եւ փառօք ըստ առաջնոյն բարգաւաճեալ ամենայնիւ։

Այդպիսի մի հսկա քաղաքի վերանորոգման հարցը Խրիմյանը դնում է որպես խորհրդանշան իր հայրենիքի աղատագըրման եվ նա մարդարեանում է։

«Չի ահա եկեալ հասեալ դար սսկեղէն բարենշան, Որ բգքեզ ըստ առաջնին նոր նորոգէ դարձեալ ի փառաւ»

Նա նկարագրում է անգամ վերանորոգման մանրամասնությունները։

«Եինեսցին բո աւերակը և կանգնեսցին վայելչապանծ, Բնդարձակ ըստ առաջնոյն յօրինեսցին և հրապարակքդ, Յարգեոր և պատուական ծերք ի յաթոռս բազմեսցին անդ, Խուռներամ գնասցին մարդիկ և խաղայցեն ի նմա մանկունք, Զարմասցին, որ զայս տեսցեն ըգնորոգումըն լըքելոյդ։ Այդ փըլեալ եկեղեցիքդ կանգնին դարձեալ վայելչապոյն, Եւ խորանքդ խոնարհեալ վեր բարձրացցին կամարազարդ։

Հայրիկը հավատում է այդ վերածնունդին, հավատում է գալիք ոսկեդարին և փափագ է հայտնում կենդանի մնալ ու այն տեսնել։

«Երանի թէ այլոցիք լրումն բանի գայր հասանէր, Զայցելու ձեռն ի վերուատ յիս կարկառեալ տեսանէի, Որ ի գեղն առաջին զիս նորոգէր վայելչօրէն։

Վա՛շ, յայնժամ բզձայն ողբոյս փոխարկէի յուրախութեան, Եւ խոցեալ զակն աղբեր աշացս այլ ոչ տայի բինել ջուր դառն։

Մեր հասարակական, եկեղեցական գործիչներից Հայոց Հայրիկը և՝ ամենահերշանիկ մարդն էր, և՝ ամենից անբախտը։

Նա ամենահերշանիկն էր, որ արժանացավ Հայ ժողովրդի գուրգուրանքին ու սիրում և ստացավ իրեն միանդամայն համապատասխան կոշտմը։ Հայոց Հայրիկի փառավոր անունը։ Ս. Գրիգոր Լուսավորչի, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ կաթողիկոսի օրերից ի վեր անցել էր արգեն 14 երկար ու ծիգ դար և այդ հսկայական ժամանակաշրջանում, Երբ Հայաստանի գլխին բազմաթիվ արյունաշունչ փոթորիկներ էին ժայթել, Երբ Հայ ժողովուրդը այնքան կարիք էր զգացել իր զակաների անձնվիրությանն ու զոհարեւությանը, նա, որպես մեր եկեղեցական գործիչներից հաղփայուտ մեկը հանդիս բե-

բեց այնպիսի նվիրվածություն, սեր և իռանդ, գործ և պայքար, երկյուղածություն և հարգանք դեպի հայ ժողովուրդն ու հայ հայրենիքը և արժանացավ ժողովրդի կողմէց տրված Հայրիկ անվանը:

Նա միաժամանակ ամենաանբախտն էր նրանով, որ ականատես շեղավ իր փայփայած, վերածնված Անին Սովհետական Հայաստանի սրտում՝ Երևանում, ականատես շեղավ հայ պետականության վերականգնմանը, շտեսավ վերածնված Հայաստանի ոսկեդարը:

«Հրափրակ Արարատեան»-ի «Երրորդ նուագ»-ում Խրիմյանը համառոտ, բայց շափազանց ամփոփ կերպով տալիս է հայերի քրիստոնեություն ընդունելու պատմությունը, ուստի և իր մանուկներին բերում է Վաղարշապատ, Ս. Էջմիածին:

«Ի տաճարն աստուածակերտ ի
մայրն մեր ամենամեծին
ի վեհ և գերապանծ աթոռ Հայոց
լուսաւորչին»:

Պատմելով Տրդատի, Լուսավորչի, Հոփիսիմյանց կույսերի գործունեությունը և կանգ առնելով գլխավոր խնդիրների վրա, առանձնապես շեշտում է եկեղեցու կատարած կրթական դաստիարակչական դերը: Հուգիչ կերպով տալիս է Մասիս և Սեպուհ լեռների նկարագրությունը, դափնիներ փըռում Եփրատին և Դարանաղյաց գավառին, ակնածանքով հիշում Պլուտ Հովհաննին, ապա կրկին վերադառնում Արարատյան երկիրը և յուր մանուկներին տանում Օշական:

«Ո՞ւր տարայց, ոչ գիտեմ, առեալ
զձեղ այժմիկ աստուած,
ի Թորդա՞ն թէ յօշական գիւղն առ
շիրիմ երանելոյն»:

Մեսրոպայ, լուսաւորչին խաւար
մտաց Հայկեան մանկտւոյդ»:

Ինչպիս հայտնի է, Թորդան անվանում էր ամփոփված Գր. Լուսավորչի մարմինը, իսկ Օշականում Մեսրոպ Մաշտոցինը: Եվ ահա Խրիմյանը տարակուառում է՝ ո՞ւր տանել իր մանուկներին՝ Թորդա՞ն, թէ Օշական, նախապատվությունը ո՞րին տալ լուսավորչի՞ն, թէ Մաշտոցին: Եվ նա նախապատվությունը տալիս է Մաշտոցին:

Հասկանալի է, որ առանց տառերի գյուղի, հետեապես և առանց գրականության, քրիստոնեությունը չէր կարող արմատանալ և տարածվել հեթանոս հայերի մեջ: Լուսավորիչը պարտական մնաց Մեսրոպ Մաշտոցին: Ահա թե ինչո՞ւ Խրիմյանը առավելությունը տալիս է հայ եկեղեցու համեստ վարդապետին՝ Մեսրոպին:

Եվ ինչո՞ւ միայն այսքանը: Արդյոք հայ ժողովուրդը կկարողանա՞ր պատմական աշեղ փոթորիկներից գուրս գալ և իր գոյությունը պահպանել, եթե Ալիսերն մհարոպյան նշանագրերը:

Խրիմյանը համեմատում էր հայ եկեղեցու երկու խոշորագույն գործիչներին, մտածողներին և հանում էր արդարացի վճիռը:

Հայոց Հայրիկը կլանված, հափշտակված է Մեսրոպվ և Սահակ կաթողիկոսով, նըրանց մեծ և հավերժական գործունեությամբ: Նա ամբողջ հոգով ներբողում է հինգերորդ դարը և այս դարի մատկնագրությունը և այն սերունդը, որ հաջորդեց նըրանց:

«Նոր յայնժամ քերթողդ Մովսէս և
Ղազարիկը Ճարտասան,

Եղնիկ, Յովհան, Կորին, Մամբրէ,
Գաւիթ անյաղդ իշելլենաց,

Երևեսցին յԱյրարատ և ոսկեգիր
հեցեն մատեանք:

Հապա դու ցընծասչիր յերկինս ոգուլ
այս աւետիս,

Եւ ոսկերքդ ի ծոց հոգուս թող շունչ
առցեն կենդանութեան»:

Մաշտոցի դպրոցը հրաշալի արդյունք է տվել, նրա ջանքերը պսակվել են անթառած ծաղկիներով, նրա մեծ գործը շարունակողներ և զարգացնողներ կան: Դրանք Մեսրոպի ձեռքի տակ խնամված և դաստիարակված աշակերտներ են, որոնք Հունաստանում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադարձել են Հայաստան և շարունակել իրենց մեծ ուսուցչի գործը: Խրիմյանը ողջունում է այդ երեսույթը և ալեստում Մեսրոպին՝ թող ոսկորներդ հոգի տակ կենդանության շունչ առնեն: Այստեղ, անշուշտ, ակնարկը Մաշտոցի հավերժական կենդանության, նրա անմահության մասին է: Եվ

մի՞թե հավերժորեն կենդանի չէ այդ մեծ
մարդը հայ զավակների սրտում:

Խրիմյանը շարունակում է.

«Մի՛ լսեր, մի՛ լսեր զՄովսիսիդ
ձայն դառնաբողոք,
Որ գուցէ եկեալ և այդոր գնոյն կրկնէ,
թեզ ի մօտուատ:

Յանտրտում յայդ վայր երկնից քեզ
տրտմութեան լինել առիթ»:

Խոսքը Մովսէս Խորենացու ողբի մա-
սին է...

Հայրիկը շի ցանկանում, որ Մեսրոպը
լսի այդ ողբը, չէ՝ որ այդ նրա համար սոս-
կափի տրտմություն կստեղծի, չէ՝ որ այդ
կրգկափի նրա հոգին, քանի որ «բարձաւ թա-
դաւոր և քահանայ, խորհրդական և ուսու-
ցող, արմատացաւ անկարգութիւն, դրդու-
ցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տղի-
տութեամբ շարափառութիւն»:

Սակայն

«Հայր, այդ խոնարհ քո Մովսէս վեր
բարձրացաւ քան զՄասիս».

Եւ

«Առաքեա, դու, այժմ յերկնից,
ընդառաջեմք ի յողունելք:

Խնչպես տեսանք, Խրիմյանը ցանկանում
էր, որ այդ ողբը գրված չլիներ, այսինքն
կյանքը նսեմացած լիներ, սակայն այն ի-

րականություն է, քանի որ Խորենացին չէր
կարող անարգանքի սյունին շդամել իր ժա-
մանակի հասարակական ախտերը՝ կաշա-
ռուկերությունը, ագահնությունը, վարք ու
բարքի անկումը: Քեռինզայրը կատարել
է իր սրբազն պարտը ժողովրդի և հայ-
րենիքի հանդեպ վեր հանելով տիրող անի-
րավությունը, ճշմարիտ և ուղիղ կյանքի կո-
չելով շեղվածներին. ուրեմն և նա մեծ,
հանճարեղ մարդ է, Մասիսից ավելի բարձր
է և նրան պետք է ողջունել:


Եվ Խորենացու ողբում նկարագրվող բար-
երի ապականման տեսակետից մոտենալ-
ով դաստիարակչական խնդիրներին, Խրի-
մյանը մատնանշում է.

«Մի՛ լիցի ձեզ միայնոյ լոկ
գիտութեան լինել սիրող
Զգործոց առաքինի և զանարատ
վարուց անփոյթ».

Ոչ կարէ յերկրէ թոշուն վերաթեել
միով թեով,

Սապէս ոչ և գիտութիւն առանց
թեոյն ընտիր վարուց»:

Խրիմյանն այստեղ առաջ է բաշում հայ-
րենասեր մանուկների դաստիարակության
խնդիրը: Երեք բան է պահանջում նոր սե-
րունդից՝ անարատ վարք ու բարք, գիտու-
թյուն և առաքինի գործեր:



Գ. ԼԵՎՈՂԻՑԱՆ

ԴՐԱՅԱԼ ՄԻ ԺԱՆԻ ԷԶ ՀԱՅ ԵՐԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Հայ միջնադարի մտավոր կովտուրական կյանքը, ինչպես հայտնի է, գլխավորապես կենտրոնացած էր վանքերում: Այդ տեղերում էր, որ մեր «անհամ դրիշ» ները գրում կամ ընդօրինակում էին ձեռագիր մատյաններ, ծաղկողները և մանրանկարիչները ծաղկում, ոսկում և զարդարում էին այդ ձեռագիրները: Վանքերի պարհաներում էին ապրում և ստեղծագործում մեր տաղերգու բանաստեղծները, փիլիսոփաներաժառագիտները՝ ու «գերեզշանիկ» վարդապետներն ավանդում ժամանակի սխոլակարիկ գիտությունը ուսումնատենչ երիտասարդներին: Իրենց դասախոսությունները և պատանիներին: Իրենց դասախոսությունները և առօրյա գործնական պարագամունքները բավարար չհամարելով մեր մանրանկարիչ վարպետները, ինչպես և հմուտ երաժշտագիտները, կազմիլ էին իրենց ձեռնարկները նորահասների գեղարվեստական կրթությունը լրացնելու, ինչպես և հեռակա ուսանողներին ու այդ արվեստներով հետաքրքրվողներին սպասարկելու համար: Մանր նկարչության այդ ձեռնարկները ընդհանուր անվամբ կոչվում էին Պատկերուասյց, իսկ երաժշտագիտության ձեռնարկները Մանր ուսմունք կամ մեկ բառով Մանրուսմունք:

Եթե պատկերուսուցների մեջ մանրանկարիչ վարպետները սովորեցնում էին ներկերի պատրաստումը և նրանց գործածության ձևերն ու տեխնիկան, ապա մանր ուսմունքների հեղինակներն կամ կազմովները, զբաղվում էին «առողանության խազերի», «երգողական նշանների» ու բազմատեսակ ձայնանիշների՝ ուսմունքով, վերծանելու կամ երգելու համար վարժովա-

կան նմուշներ տալով իրենց ժամանակի հայտնի եկեղեցական և աշխարհիկ երգերից ու եղանակներից: Մանրուսմունքներ կան, որ ավելի և նման են երաժշտական քրեստոմատիաների: Նրանք ու թե սկզբնական ձեռնարկներ են տարրական երաժշտագիտության, այլ պարունակում են իրենց մեջ երգերի ու շարականների պարզ և բարդ հատվածներ արդեն երաժշտություն գիտեցողներին համեմատարար ավելի բարձր կրթություն տալու համար:

Երեանի Պետական Մատենադարանում, երուսաղեմի հայոց վանքի գրադարանում, ինչպես և Վենետիկի ու Վիեննայի Միսիարյանների մոտ մեզ հասած Մանրուսմունքների թիվը հասնում է երեք տասնյակի: Նրանք ընդօրինակված են 13—17-րդ դարերում ավելի հին օրինակներից, որոնք չեն հասել մեզ:

Անշուշտ ցանկալի կլիներ իմանալ, թե ո՞վեր են եղել Մանրուսմունքների սկզբանական օրինակների հեղինակները կամ խմբագրուղները: Անկասկած եղել են նըրանք, որոնք այս կամ այն դարում, այս կամ այն կենտրոնական վայրում կանգնած են եղել երաժշտական դպրոցների վրում:

Հաջորդ դարերում այդ ձեռնարկները լրացրել են նոր նյութերով, նորից խմբագրելիությունը փոփոխություն են կրել ու գարձել կոլեկտիվ աշխատանքի պտուղ: Նրանց մեջ, բացի շարականներից, զանձերից, մեկ են նաև հատուկ հղանակներ (ալելուներ, փառեր, կցուրպներ) օրվա այս կամ այն պահին ժամերգության, այս կամ այն

ծիսակատարության ժամանակ երգելու Այդպիսիներից են Ալելույ զիշերության, Աղելու նաշի, նաշ մեսեղի, կիրակեամտի փառեր, տերողորմիայ տոնից, կրցուրդներ, հանգստյան, մեսեղի ապաշխարության, խոնարհեսցու հասարակաց և այլն:

Ներսես Շնորհալին խստապահանջ է եղել քահանաների երաժշտական կրթության վերաբերյալ. նրանք ձեռնադրվելիս պարտագիր կերպով պետք է գիտենային մանրուսմունքները, որպեսզի ճիշտ կանոններով և անթերի կատարեն ժամերգությունը:

«Թեև ոչ ամենեցուն ամենայն շնորհք կատարեալ լինել անհնար է, սակայն (նորք) ի հարկավորսն պարտ են անթերի լինել, այսինքն եկեղեցական պէտս ուղիղ ընթեռնուլ և մանրուսմունս ձայնաւորացն պաշտել եկեղեցիս և ապա գալ ի ձեռնադրութեան քահանայութեան»:

Մեզ ծանոթ 18 մանրուսմունքներից (Երեանում 6, Վիեննայում 8, Վենետիկում 4) ամենաշինը ընդօրինակված է մագաղաթի վրա Կիլիկիայի Սկևուա վանքում «Զեսամբ բազմամեղ քահանայի և անպիտան զրշի Ստեփանոսի ի լաւ յընտիր աւքինակաց» (Երեան, Մատենադարան, ձեռագիր 680):

Ունի այսպիսի հիշատակարան:

Փառք... գրեցաւ առաջարանս և տետրակս մանրուսման և թիվն հայոց Զիկ ի հայրապետութեան տեսան Յակոբայ և ի թագաւորութեան Լեոնի, որդույ Հեթմոյ, ի հրաշակաւոր անապատս Սկևուայ ընդ հովանեաւ սր. Փրկչի և մաւր լուսոյ Ածածնի...»:

Երկրորդը ժամանակագրական կարգով գրված է Զիկ (1279) թիվն «ի ձեռն Յոհան քահանայի ի զգեակն Բարերդ ի գաւառն Խախտեաց». Գտնվում է Երեանի մատենադարանում (ձեռագիր, № 672):

Թվական ունեցող Մանրուսմունքներից այս երկուսով էլ վերջանում է 13-րդ դարը. Սակայն նույն Մատենադարանում կամի անթվական մանրուսման (№ 919),

ված է մագաղաթի վրա: Ըստ երկութիվն պատկանում է ավելի վաղ շրջանի:

Այսուհետև գալիս են 14-րդ դարում գրված Մանրուսմունքները թվով 7: Նրանցից առաջինը պատկանում է 1313 թիվն և գրված է «ի սուրբ և հոչակաւոր անապատս Դրազարկ», Մտեփաննոս գրչի ձեռքով: Զեռագիրը գտնվում է Վենետիկում, Միկիթարյանների գրադարանում: Ահա մի պատառիկ նրա հիշատակարանից:

Գրեցաւ եղանակաւոր տառա, որ կոչվ Մանրուսումն ի թվ. ԶԿԲ ձեռամբ և մեղսաթաւալ սուտանում գրչկայ Ստ. ի սուրբ և հոչակաւոր անապատիս Դրազարկ...» (Ալիշան, Սիսվան, 738):

Երկրորդը, որ գրված է 1314 թիվն ընտիր մագաղաթի վրա, գտնվում է Երեանի Պետական Մատենադարանում (№ 673), գրության տեղն անհայտ է հիշատակարանի թերի լինելու պատճառով:

Երրորդը և չորրորդը, որ գտնվում են Վենետիկում, գրված են 1325 և 1336 թվերին, Գալու վանքում Սիմեոն քահանայի ձեռքով: Ալիշանը իր Սիսվանում առաջ է բերել 1336 թվի Մանրուսմունքի հիշատակարանի նմանհանությունը:

«Գրեցաւ եղանակաւոր տառա, որ կոչվ մանրուսումն: Ի թուիս հայոց ՃԶԵ ի թագաւորութեանս հայոց Լեոնի ածասիրի և բարեպաշտի, որդույ ի Քս ած հանգուցեալ թագավորին Աւշինի:»

Եւ ի հայրապետութեան տեսան Յակոբայ ի սր. անապատս որ կոչվ Գալու Ծնդ Հովանեաւ սր. ածածնիս և այլ սրբոցս որք աստ: Զեռամբ բազմամեղ և անարժան քահանայի Սիմեոնի»:

Հինգերորդը գտնվում է Վիեննայի Միտթարյանների մոտ (ձեռ. № 183): Գրված է 1340 թվին, տեղը անհայտ, գրիշը և ծաղկողը Մկրտիչ երեց:

Վեցերորդը (Երեան, Մատենադարան № 559). գրված է մագաղաթի վրա 1353 թիվն Ղրիմում:

«Գրեցաւ տետրակս որ կոչվ Մանրուսման յաշխարհս Ղրիմիս ի Սուրբսթ քա-

և հայրապետութեան տեառն Ստեփաննոսի և ի թագաւորութեան Կոստանդիանոսի... ի թուականին հայոց Պ. Ա. Զեռամբ Գրիգորի Սուքիասեանց»:

Նույն 14-րդ դարին է պատկանում Արքայակաղնի վանքում (Կիլիկիա) գրված մի ընտիր Մանրուառում (Վենետիկ), որի մասին այնքան գովեստով է խոսում Ալիշանը: Զեռապիրի հիշատակարանում կան այսպիսի տողեր.

«Գրեցաւ եղանակաւոր տառս՝ որ կոչ Մանրուառուն ի լաւ և յընտիր օրինակէ... զոր յարմարեալ էին երաժշտասէր Արքայակաղնոյց, բայց, ինչպես նույն հիշատակարանի ներքենում բերված նմանահանությունից երևում է, Արքայակաղնում միայն երաժշտասեր չեն եղել, այլ եղել են և երաժշտապետք (Սիսուան, էջ 234):

Հասնում ենք 15-րդ դարը: Դարասկըզբներում, 1405-ին գրված Մանրուառում պատկանում է Ավագ Վանք Կոչվող «Մեծափառ անապատին»—բայց ընդօրինակված է, կամ ինչպես հիշատակարանն է վկայում, յարմարած է առաջին երաժշտապետացն սր. ուխտիս Արքայակաղնոյն»: Զեռապիրը գտնվում է մեր Մատենադարանում (№ 674):

Ժամանակագրությամբ հետեւյալ յոթ Մանրուառունքները պատկանում են Վիեննայի Միհիթարյանների գրադարանին. գրրանցից առաջինը գրված է 1421 թվին, զարդարված է բազմագույն նկարներով, գրիչն է Հովհաննես, ծաղկող և ոսկողը Մելիքսեթ երեց: Ոմի այսպիսի հիշատակարան:

«... Կատարեցաւ ցանկալի երգարանս երաժշտական ձայնաւորացս ի թուականութեան Հայկական տումարի Պ. Հ. (1421)... ի սոյն ժամանակս գրեցաւ տետրակս ի սր. և ի գերանոչակ ուխտս, որ կոչի Սանահին... Ո՞վ դասք լուսերամից և քաղցրանուագ երաժշտապետք, որք օգտիք ի սմանէ և վայելէք զմեղաւոր գծողս յիշեցէք»:

Երկրորդ (№ 403) գրված է նույնպես մագաղամի վրա Բոլորաձոր անապատում 1484 թվին: Ոմի բազմագույն նկարներ և գեղեցիկ թղնագրեր:

«Փառք... որ ետ կարողութիւն անարհեստ գրչի անարժան Արքահամի սոսկ անուամբ աբեղայ կոշեալ և ոչ գործովզի գրեցի տետրակս և ոսկով զարդարեցի և կապեցի վայելումն անձին իմոյ և հոգեոր հօրս և ուսուցի և հօրեղօրս իմ և աւգտէր վարդապետի»:

Հետեւյալ երեք Մանրուառունքները գրված են նույն դարում, գրության տեղն անծանոթ:

Վերջին երկուսը պատկանում են 17-րդ դարին, մեկը գրված է 1633-ին, տեղը անհայտ, մյուսը՝ 1641-ին, Սերաստիայում: Այդ ձեռագրի հիշատակարանի տակ գրված է.

«Զտէր Յակոր բանի սպասաւորն յիշեալ ի տէր ով երգեցող եղայրք...»:

Այսպիսով վերջանում է մեղ ծանոթ Մանրուառունքների գրության դարը: Նույն դարում մեզ հայտնի է դառնում ևս մի «Խազզիրք», գրված 1677-ին Մալարթավանքում (Մեսրոպ եպ. Սմբատյան «Երրնշակ», էջ 121):

ՄԱՆՐՈՒՄՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Առաջին անգամ Վենետիկի Ս. Ղազարի վանքի գրադարանում եղած Մանրուառունքների միջից հանելով՝ Ալիշանը իր «Սիս-

վանում» (1885) տպագրեց թվով 70 եղանակների անուններ, որոնք հետեւյալ են՝

Աղաշանք

Գոճնակ

Աղավնեկ

Գուլիկ

Անմեղուկ

Գուուզ

Անձեղ կամ Զիթ

Գուանակ

Արծիվ

Գաւուն

Առվոտ երդ	Դարբին
Աշկերտն	Եկեղեցու
Այսօր մտանե	Ճոճողող
Առեղն կամ Հոնեղ	Բագավորն
Գաբրիել	Իրիցկին
Գայլ	Լալկան
Գղած	Խաբուահիկ
Խեղեփ	Մեղոն
Խոսող	Մշեցի
Սովցի	Հետքարշ
Կաղ	Շնորհազարդ
Կատու	Ովեսայն
Կարմիրվանքեցի	Ուղտն
Կիրակոս երեց	Չորուկ
Կողեռն	Չանրիկ
Հավատվոր	Ճուղչակ
Հիվանդ	Ռահուվար
Հոռոմն	Սալլ
Հովիվ	Սարկավագ
Հորնձին	Սերոբե
Զագ	Սուրբնշանցի
Ճինկան կամ Ճշող	Ստեղն
Մակեդոնացի	Վարսեղն
Մամկոն	Վաշտարիկ
Մասնակն	Տանուտրակ
Մատն	Տարածումն
Տարոնցի	Ցինայն
Տժկույն	Փող
Տոկատն	Փոթակն
Տոպուպայն	Քնքշակն

1844-ին էջմիածնի «Արարատ» ամսագրի
մեջ Կոմիտաս վարդապետը «Հայոց եկեղե-
ցական եղանակները» իր անդրանիկ հոդ-
վածում, անշուշտ վանքի մատենադարա-
նի Մանրուամունքներից հանելով, բերում

է մի նոր ցանկ, որի մեջ կան թվով 14
այնպիսի եղանակների անուններ, ինչ որ
շկան Ալիշանի առաջ բերած ցանկում:
Այդ եղանակներն են՝

Անձեր	Բերդ
Առյուծ	Գալսոյան
Արջն	Գետ
Ավելի	Մովսես
Բաղե	Յավնեղն
Բոռ	Յեղմն
Բրավոր	Յեղմուկ
Բդեշխ	Յովհաննիսուկ
Եղնակ	Նավ
Եղնաթ	Շահուան

Ձողատող
Խմաստնով
Խալի
Ծիծեռն
Ծնծղա
Կակղոտ
Կիրակմտի
Կրետ
Կցիսակ
Հաս
Հոռմակ
Ճոխ
Մառեխ
Մեծ գլուխ
Մեռելքաղ
Միքայել

Շավառն
Ոշար
Պարընգուլ
Պիծակ
Ջաղացք
Ջորեքաշ
Սրինգ
Վարուժնակ
Տիրոցի ձագ

Սահակ վ. Ամատումին իր «Բառ և բան» բառարանի մեջ բառերի շարքում բերում է 88 եղանակի անուն, որոնք գրեթե նույնն են. եթե Կոմիտասի ցանկից չի օգտված, ապա քաղված են էջմիածնի Մանրուամունքներից:

Կոմիտասն իր առաջ բերած եղանակները բաժանել է բուն ութ ձայնի մեջ՝ անուն—անուն թվերով: Առաջին ձայնի 23, առաջին կողմի 12, երրորդ ձայնի 12, վագագ կողմի 11, երրորդ ձայնի 13, վառ ձայնի 20, չորրորդ ձայնի 18, չորրորդ կողմը 14:

Տես «Կոմիտաս — Հոդվածներ և ուսումնասիրություններ» էջ 121—125):

Արևմտահայ բանասեր Դավիթ Խաչոնցը իր «Հայոց կրոնական բանաստեղծությունը» աշխատության մեջ (Թիֆլիս, 1904 թ.) գրեթե նույնությամբ առաջ է բերել վերը հիշված եղանակների՝ Կոմիտասի կազմած ստորաբաժնանումները, առանց աղբյուրը հիշատակելու:

Միջնադարյան հայ մտավոր կովտուրական կյանքում գոյություն են ունեցել և «Օսկեփորիկ» կոչվող ժողովածուներ, որոնց մեջ հավաքված են զանազան գիտելիքների՝ գիտութեան, արվեստների, կրոնական ու բարոյախոսական գրականությունից մանր հատվածներ թերև բնիքը:

ցանության համար: Այդ ոսկեփորիկները մեջ մենք պատահում ենք երաժշտության տեսականի, պատմականի և գործնական մասին զանազան հատվածներ, որոնք անկասկած, ընդօրինակված են Մանրուամումքներից:

Վենետիկի Մխիթարյան գրադարանու գտնվող 14-րդ դարում գրված մի Ոսկեփորիկի մեջ (№ 248) ահա ինչպիսի մի հատված կա երաժշտական տեսական վերաբերյալ արարական աղբյուրներից:

«Համառոտ երաժշտական արուեստ է յարապ՝ գրոց: Խնդրող եթէ որ իցէ արուեստի երաժշտականութեան, գիտացէ զերաժշտականութիւն գիւտ մի է և գիւտուգրաբան իմաստնոց. և գրութիւն նորով վասն հոգոց կենդանեաց է և ոչ մարմանոց, զի մարմինք անհոգիք ոչ ունեն մատաի նմանէ: Եւ երաժշտականութիւն է արուեստ մի՝ յօդեալ ի մարմնականէ և ի հոգեորականէ. և գիւտ ողբոց և խնդրութեան ի նմանէ...» և այլն:

«Թարգմանության ժամանակը չի գիտվիր», ասում է Վենետիկյան ձեռագիրների ցուցակը կազմող Հ. Բ. Սարգսյանը: Գրայց թարգմանիչը երաժշտագետ մեկը ըլլալու է, այն և կամ Գրիգոր Մագիստրոս կամ Ներսես Շնորհալին (ցուցակ Բ, է 694), նույն գրադարանի մի ուրիշ ձեռագիր Ոսկեփորիկ (№ 288), ոս ատամանությունից մանր հատվածներ թերև բնիքը:

12—13-րդ դարերին, իր մի քանի էշե-
տում պարունակում է «Անուանք եղանա-
կց, ձայնից երգող», հայկական ամենա-
սրբ խաղերով։ Այդ եղանակների անուն-
ըն հն՝ «Արաշեշտ, Քարշ, Ստորագիր,
Երազիր, Վանդ, Կուռկուռ, Զգեհին, Խաղ,
Պող, Շընկեր, Հար, Հարկորա, Բեր, Բագ-
արեղ, Անար, Ողամանեակ, Հարով, Զայն-
արձ, Հանգուց, Խում, Գոյն, Թմազարդ..»,
պահ Քմատրոփ, Շանրատրոփ, Թագատրոփ,
որ են թվով իդ և է ի դոցանէ գլխավոր
ն ըստ է եղանակաւոր գրուն որք են Ա. Ե.
. Բ. Ի. Ռ. Խ. և այլը խառնուրդ են որ-
են զանազան անուշահոտ համեմք հա-
աղամ կիրողաց» (Ցուցակ Բ, էջ 775):

Երուաղիմի հայոց վանքի գրադարա-
տում եղած մի ձեռագիր խազգրքից առնե-
պվ, տեղի «Միոն» ամսագրի 1867 թվի
8-ում տպագրված է մի տեսություն,
որի մեջ թիշ տարբերությամբ առաջ են
ներված նույնանուն եղանակները իրենց
աղանջաններով։

Մի երրորդ Ոսկեփորիկի մեջ Վենետի-
կի գրադարանում (Ճեռ. 287), գրված 16—
7-րդ դարերում, կա մի հատված «Յա-
ագս երաժշտականաց», որ սկսվում է
արց ու պատասխանով։

Հարց—Զի՞նչ է երաժշտականն.

Պատ.—Ի երկու բաժանի ի հոգերն
ի մարմնաւորն, այսինքն ի բանականն
ի բնարս կամ եկեղեցական հոգերը
որպ և յարտաքին գուսանն...

«Երաժշտական այս կրկին բաժանմուն-
քն, —գրում է ցուցակի խմբագիրը, հիա-
ալի կերպով բարգավաճած է գրվածքիս
ոն հայտ հեղինակը, նկարագրելով նախ
կեղեցական խաղերը և անոնց հարմա-
տությունները» ու առաջ է բերում խաղերի
անունները։ «Զոր իմաստուն երաժշտաք
կեղեցոյ իմաստութեամբ երգեն զիսազան
այնաւորաց և ճանաշեն և բաժանեն ի մի-
շայաց զարուեստաւորսն և զառոգանութիւն-
քն, այսինքն, զԵնշտն և զԲութն, զՊարոյին,
Երկաթն, զՍուլն, զԲնելկութայն, զԴաս-
ուրձայն և զԶայկուրձայն և զԲատուսներն
զՏակն և զԾնկներն, զՆերքնախաղան,
Վերնախաղն, զՄիջնախաղն, զԵներեփն,

զԴուկն, զՍուրն, զԲուրն, զԼարն, զԲուշն,
զԴիրն և Առն և զայլ բազում խազս, զոր
սոսա իրեն զաեռ առեալ և ի զանազան տե-
սակս (1) արդարեն և եղանակեն բարձր (բ)
դիւր (դ), անուշ (2), զարկ (զ), լար (լ),
ծամ (ծ), ցած (ց), սուր (ս) և այլ բազում
արուեստիւր...»։

Այժմ մի համառոտ ակնարկ հատկա-
պես հայկական խաղերի մասին։

Երաժշտական խաղերի ուամունքը, ինչ-
պես մեզ մոտ, այնպես էլ ուրիշ ազգերի,
զուտ մասնագիտական գործ է։ Պետք է նրա-
նով զբաղվեն և զբաղվում են երաժշտագետ-
մասնագետները։ Մեր համեստ գործն այս-
տեղ բանասիրական է, մի համառոտ ակ-
նարկով ցուց տալու թե հայ խաղագի-
տությունը ի՞նչ է եղել անցյալում և ի՞նչ
արդյունքների հասել հետագայում,

Պատմությունը լուում է նախքան Կիլի-
կյան շրջանի հայ երաժշտության ծաղկուն
դարը՝ Շնորհալու դարը—բուն Հայաստա-
նում հայկական խաղերի գոյության մա-
սին։ Մենք այն կարծիքն ունինք, որ եղել
են այդպիսի խաղեր միայն ոչ տարած-
ված, այլ անհատ երաժշտագետ վարդա-
պետների մոտ։ Շնորհալու ուղարկած
մարդիկ եկել են Հայաստան և տարել
«Խոսրովային» ոճի շարականների եղա-
նակները։ ի՞նչպես կարող էին եղանակ-
ներ տանել, եթե խաղավորված Անեսին
այդ եղանակները։

Միջնադարի հայ երաժշտության պատ-
պատմության մեջ առանձնապես շեշտ-
վում է Հաղարծինի վանքի վանահայր Խա-
չատուր Տարոնացու անունը, որպես խա-
ղերը արևելք բերողի։ Գանձակեցին նրան
անվանելով «այր սուրբ և առաքինի գի-
տությամբ հոչակեալ, մանաւանդ երաժշ-
տական արուեստին», ասում է, որ «աա
երեր զիսազն ի կողմանս յարևելից, զան-
մարմին եղանակսն ի մարմին ածել զարա-
րեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակ չկ-
եր սփռեալ ընդ աշխարհ» (էջ 200):

Կիրակոսի այս խոսքերից մեր բանա-
սերներից ումանք եկել են այն սխալ եղ-
ակացն թյան, որ մինչև 12-րդ դարը

Հայաստանում խազեր շեն եղել և առաջին անգամ արևմուտքից բերել է Խաչատուր Տարոնացին։ Նույն կարծիքն ունի, և միթիշ էլ առաջ է գնում, Սպիրիդոն Մելիքյանը, որ գրում է՝ «Երաժշտական խազերը բերել է արևմուտքից իմա Փոքր Սսիալից կամ Հունաստանից... Խաչատուր Տարոնացին 12-րդ դարում» (Ուրվագիծ, 23):

Նախ որ պատմիլը արևմուտքի անուն չի տալիս, բայց քանի որ ասում է «Ի Կողմանս արևելից», ընդունենք, որ Խաչատուրը խազերը բերել է Արևմուտքից. բայց ինչո՞ւ այդ արևմուտքի սահմաները հասցնել մինչև Հունաստան (կամեցել է ասել Թյուպանդիա): Եթե Տարոնացին խազերը բերած լիներ օտար աշխարհից, Գանձակեցին կասեր. «Սա երեր զիազն ի Հայու» — ոչ թե «Ի Կողմանս արևելից» — այսինքն արևելյան կողմերը: Խսկ մենք այս կարծիքն ունինք, որ Խաչատուրը եկել է Կիլիկիայից և այնտեղից է բերել ներսես Շնորհալու և տեղական այլ նշանավոր երաժշտագետների կողմից մշակված խազերը: Կիլիկիայից հայ բնաշխարհը համարում էին Արևելք և այնտեղի եկեղեցականներին արևելեայք:

Այսպես է հասկանում և Գ. Զարբանաւանը, երբ գրում է.

«Պատմիլը (Կիրակոսը) կավանդե, թե ինքը (Տարոնացին) բերած ըլլա խազը արևելի կողմերը, այսինքն վերին կամ մեծ Հայաստանի մեջ (Պատմ. Հայերեն դրության Ա. 675):

Հայկական խազերի ուսումնասիրության փորձ է անում Սպիրիդոն Մելիքյանը իր «Հունական ազգեցությունը հայ երաժշտության տեսականի վրա (Թիֆլիս, 1914) արժեքավոր աշխատության մեջ: Մենք կարող ենք համաձայնել կամ չհամաձայնել նրա արծարծած խնդիրների լուսաբանությանը, բայց նա լուրջ գործ է կատարել մեր խազագիտության բնագավառում: Նա էջմիածնի մատենադարանում մի առ մի թերթելով ութ ձեռագիր խազավորված շարականներ (1305—1700) գրտել է, որ սՄեր Շարականը մի անգամ

Խաչատուրի (Տարոնացի) և նրա աշակերտների ձեռքով խազավորվելուց հետո այնուշետե ոչ մի փոփոխության չի ենթարկվել, հետևապես և նրա մեջ գործածված խազերը իրենց նշանակությամբ 12—13-րդ դարերին են պատկանում և մեր խազավորվականության ամենահին շրջանն են կազմում»:

Եվ քանի որ ավելի վաղվա՝ 10—11-րդ դարերի խազավորված ձեռագիրներ չեն հայտաբերված մինչև այսօր, բայց երևոյթին Սպ. Մելիքյանի խոսքը, առժամանակ մնում է անհերթելի:

Այդ խազերն էին, որ հասել էին մինչև 18-րդ դարի վերջերը, Գաբրասաքալյան Դրիգոր դպրի ուսումնասիրության նյութը դարձել և ապա 19-րդ դարի խորաշին կեսին ավելի համարձակ վերանորոգման ու նոր մշակումի ենթարկվել Համբարձում Լիմոնճյանի և նրա աշակերտների ջանքերով: Բայց քանի որ 19-րդ դարը չի մտնում մեր ներկա աշխատության ծրագրի մեջ, մենք դարձյալ շարունակենք մեր խոսքը հայ երաժշտության տեսականի և խազերի նվիրված գրականության մասին:

Որքան մեզ հայտնի է, հայ և օտար բանասերների և երաժշտագետների կողմից տպագրվել են բազմաթիվ հոդվածներ: Այդ բոլոր հոդվածների և ուսումնասիրությունների լիակատար ցանկը մենք տալիս ենք «Հայ երաժշտության բիբլիոգրաֆիան» մեր աշխատության մեջ: Այստեղ միայն նշենք այն, որ հատկապես հայկական խազերի ուսումնասիրությամբ սկսել են գրաղել դեռ ևս անցյալ դարի կեսերից: Օրինակ՝ Պետերմանը 1851 թվին,

«Über die Musik der Armenier» աշխատությունը — խազերի տախտակ օրինակներով:

Այսուհետեւ զբաղվել են իդնասիրությունների մեջ այդ հեղինակները: Նրանք նախ դտում են առողջանության խազերը երաժշտական խազերից, ապա տալիս են պատմական տեղեկանքներ խազերի ծագ-

մանաւագիտության իրենց բնագավառում: Նա էջմիածնի մեջ այդ հեղինակները: Նրանք նախ դտում են առողջանության խազերը երաժշտական խազերից, ապա տալիս են պատմական տեղեկանքներ խազերի ծագ-

ման և ուրիշ ազգերի խաղերի հետ ունեցած առընչության ժաման, առաջ են բերում հայկական բոլոր խաղերի անունները, որոնց թիվը հասնում է մինչև 200-ի և էլի ուրիշ մանրամասնություններ, բայց ամենազլիսավորը խաղերի վերածնությունը այդ հեղինակներից ոչ մեկին չի հաջողվել: Մեր դարի 10-ական թվականներին, երբ Կ. Պոլսի մամուլում հայ երաժշտության տեսական խնդիրների մասին սկսել էին մի շարք հոդվածներ, երևալ, ամենքի հույսը Կոմիտաս վարդապետի վրա էր, որ նա պետք է վերջինիքո լուծի հայկական խաղերի պրոբլեմը: Նույնիսկ տեղական քահանաներից մեկը մի մասնավոր նամակով այդ մասին գրում է մեծանուն երաժշտագետին, որ նա բարձրացնի իր հեղինակավոր ձայնը: Կոմիտասն իր պատասխանը գրում է էջմիածնում 1910-ին, բայց տպագրվում է Կ. Պոլսի «Տաճարահանդեսում 1914-ին»: Այնքան էլ միթթարական շեր այդ պատասխանը: Նա գրում էր:

«... Իրավ է, ես գտել եմ հայ խաղերի բանալին և նույնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վեշնակետի շեմ հասել, զի յուրաքանչյուր խաղի խորհրդավոր իմաստին թափանցելու համար նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով ամիսներ են սահում: իսկ ձեռքիս տակ եղած խաղերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խաղերը, որոնք խիստ շատ են:

Առաջմմ երկու խոսքով ամփոփեմ, թե ինչ տառեր ունի հայ խաղաբանությունը:

- Ա. Զայնաստիճանի խաղեր
- Բ. Զայներանգի խաղեր
- Գ. Զարդախաղեր
- Դ. Զայնութի խաղեր
- Ե. Ամանակի խաղեր
- Զ. Առողանության խաղեր
- Ը. Կետադրության խաղեր
- Թ. Ոճական խաղեր
- Ժ. Կապող և զատող խաղեր
- ԺԱ. Կիսանիշ խաղեր և այլն»:

Թվելով, որ մի այդպիսի ուսումնասիրություն կատարելության հասցնելու համար առաջանում են մի շարք լուրջ խնդիրներ, Կոմիտասն իր նամակ-հոդվածը վերջացնում է այսպիս:

«Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի, մինչև որ հնարավոր շափով կատարելապես վերջացնեմ իմ տասնը վեց-ամյակից ավելի տևող տաժանակիր ուսումնասիրությունները: Հույս ունեմ, թե մոտիկ ապագայում առանձին հատորներով հասարակության սեփականություն պետք է դառնա»:

Եվ այդ «մոտիկ ապագան» այլև շեկավ դժբախտ արվեստագետի համար:

Նորից անցան մի քանի տասնյակ տարիներ, բայց հայկական խաղերի առեղծվածը դեռ սպասում է իր լուծման:

Եթե մեզանից մոտ 80 տարի առաջ էջմիածնում Գեորգ Դ. կաթողիկոսի ջանքով և նիկողայոս Թաշճյանի ձայնագրությամբ լույս տեսած Շարականի խըմբագրող՝ Վահրամ եպ. Մանկունին իր առաջարանում ցավ էր հայտնում հին խաղերի անընթեռնելի լինելու մասին, որ «Յստ ձայնանիշ խաղիցն անցողիկ զրնիկ և զհարազատ նշանակութիւնսն կամ զօրութիւնս ոչ ոք է, որ գիտիցէ», որովհետև «ամենածախ ժամանակն վարդագործեալ և թագուցեալ իմն է զայն ի մերոց աշաց» ինչպես «զարձանագրութիւնսն բնեռած կամ սեպած կոչեցեալս», ապա մենք երեք քառորդ դար անցնելուց հետո շենք կարող պարծենալ որևէ նորությամբ այդ ընագալապում:

Սեպածն արձանագրություններն ու եգիպտական հիերոգլիֆները կարդացվեցին, իսկ մեր երաժշտական խաղերը մընացին և դեռ մնում են անվերծանելի: Եթե մի երջանիկ օր մեզ հաջողվի գտնել պիտի բանալին», ապա այն ժամանակ մեր աշեղերի առաջ կբացվի մի լայնատարած հորիզոն և կիմանանք, թե ինչ եղանակներով են երդվել մեր միջնադարյան եկեղեցական և աշխարհիկ երդերը:

ԿՈՐՅՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՀՆԱԳՈՒՅՆ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության երկու խմբագրությունն է հայտնի բանասիրության մեջ՝ընդարձակ և համառոտ: Վերջինս կոչվում է նաև սուստ Կորյուն, որովհետև նա համառոտված է ընդարձակ տեքստից և Խորենացու պատմության հիման վրա խմբագրված ուշ շրջանում:

Կորյունի ընդարձակ տեքստի հարազատության նկատմամբ առանձին լուրջ կասկածանքներ չեն եղել, սակայն գրեթե բոլոր աղբյուրագետ ուսումնասիրողները նշել են, որ Կորյունի ընդարձակ տեքստում կան մեծ շափով գրչական սխալներ, որոնք պիտի սողզվեն ձեռագրերի համեմատական ուսումնասիրության հիման վրա:

1940 թվին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Պատմության Ինստիտուտի հանձնարարությամբ Կորյունի քննական տեքստը կազմելիս, ձեռագրերը համեմատելու ժամանակ մենք նկատեցինք, որ մեր Մատենադարանում եղած ձեռագրերի շարքում կա երկու տեքստ, որոնք մեծ շափով տարբերվում են մեզ՝ հայտնի համառոտ խմբագրությունից և, փաստորեն, ընդարձակ խմբագրության հնագույն անդամանատված ընդօրինակություններն են: Այդ ժամանակ էլ հենց իրենց մոտ ցանկություն առաջացավ բանասիրության ուշագրությանը ներկայացնելու համար հրատարակել այն առանձին: Այդ անհրաժեշտ էր մանավանդ այն պատճառով, որ տվյալ ընդօրինակությունները ունին կառուցվածքի յուրահատուկ ձև, գրչական գգալի տարբերություններ և, ամենից կարևորը, մոտ երեք հարյուր տարի ավելի հին էին, քան ՀՍՍՌ Մատենադարանում մեզ՝ հայտնի մյուս ընդօրինակությունները:

Հնագույն այդ գրչագրերը չոնքին Կորյունի տեքստի առաջարարնը, ուր հեղինակը աշխատում է բացարություն տալ, թե ինչո՞ւ անհրաժեշտ է եղել նման կարգի աշխատություն գրել: Ապա այս ընդօրինակությունները չունեն Մաշտոցի՝ վրաց և աղվանից գրերն ստեղծելու պատմություններ: Եվ, վերջապես, վերջում առանձին գույք է դարձված Մեսրոբի մահը «Վասն մահուան Մեսրովքայ» վերնագրով:

Ուշադրության արժանի է հատկապես որ Մեսրոբի մահվան հատվածում Կորյունի ընդարձակ տեքստը անդամահատող հեղինակն օգտվել է Խորենացուց (երրորդ գրքի 47-րդ գլուխուց—տես Խորենացու գիտ. Հրատ. էջ 316) և լրացրել Կորյունին:

Կորյունի այս գրչագրերը ընդօրինակաված են ՀՍՍՌ Մատենադարանի №№ 3787 (671) և 3797 (672) ձեռագրերից, որոնք բովանդակությամբ ճառընտիրներ են հանդիսանում:

Կորյունի այս գրչագրերից № 3797-ը գրված է հաստ բամբակի թղթի վրա, երկսյուն, բոլոր գրով, բաղկացած է 780 թերթից: Ձեռագրերը վերջից թերի են: Գրչության ժամանակը 13—14 դարն է: Գրիչն է Նագիբրս, որ հիշված է բազմաթիվ գլուխների վերջում: Այսպես, թերթ 92-րդում նա գրել է հետեւյալ հիշատակարանը. «Պցանկացաւ այսմ հրաշալի պատմութեանս և սքանչելագործ հայրապետիս, որ զժողովս ամենայն մարտիրոսաց ընկալաւ, նոցա ամենայնի բարեխաւասութեամբ յիշեցէք ի Քրիստոս զփոխյալն ի կենացս բառասնամեայ զՄարտիրոս կնքահաւը իմ և զմեղաւոր զգրիչս զնազիր...»:

Թերթի 198-ր-ում նա գրել է հետեւյալ ստանավոր հիշատակարանը.

«Սուլրը ընթերցող այս մատենի,
Յիշման արէք զմեկ արժանի:
Ի յետ ելիցս այս կենցաղի,
յորժամ մտնեմ ի մէջ հողի:
Ի նեղ և ի նուրբ անել բանտի,
առանց ուրուք աւգնականի:
Կարաւալ լինիմ ևս մաղթողի,
և բարեկամ բարեխաւսի:
Ի սէր փրկչին մեր Քրիստոսի,
վասն միոյ ողորմայի:
Հայցեմ ի ձէնչ աղերսալի,
Տէր ողորմիա ՆԱԴԻՐ ԳՐՉԻ:
Աղաշանաւք սուրբ Գրիգորի,
Հայաստանեաց լուսաւորչի:
Եւ Յովհաննու Ոսկի բանի,
և յիշողացդ ողորմեացի:
Այն որ բնութեամբ միայն բարի,
և նմա փառք յաւիտենի»:

Զեռագրի պատվիրատուն են Հանդիսացել մի խումբ արհեստավորներ և առևտրականներ։ Գրեթե ամեն մի գլուխ ունեցել է իր պատվիրատուն։ Այսպես, զանազան երեսներում կարգում ենք՝ հիշեցէք Թագէոս ներկարարին (թ. 119 թ.), Սարգիս բազագին (թ. 140 ա), Մարգար բաթմանագործին (թ. 369 թ.), Մարգար ջուհակին (թ. 377 թ.), Սաթի գերձակին (թ. 536 թ.), Թաւդա բազագին (թ. 590 թ.) և այլն։

Թիվ 3787 գրչագիրը բաղկացած է 680 թերթից։ Սկզբից և վերջից թերի է։ Նյութը հաստ թուղթ է։ Գրված է երկսյուն խոշոր բոլորգով։ Ունի լուսանցաղարդություններ։ Գրչության ժամանակը 13—14-րդ դարն է։

ՄԵԵԿԻ ԵՐԵՎԱՆԱՍՏԱԿԻ Յ ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՄՊՎԲԱՅ ՎԱՐԴԱՎԵՏԻ, ԶՈՐ ԱՐԱՐԵԱԿ ԷԿՈՐԵՆԱՅ ՍՐԲՈՅՆ՝ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱՅ:

Արդ՝ սկիզբն արաւցուք պատմելոյ վառն զոր նախակարգ բանից նշանակեցաք՝ վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ էր Մաշտոց անուն, ի Տարաւ գաւառէ ի Հացեկեաց գեղջէ որդի առն երեւելոյ Վարդան կոչեցելոյ։ Ի մանկութենէ վարժեալ հելենական դարութեամբ, եկեալ հասեալ ի դուռն Արշակոնեաց թագաւորաց

Զեռագրի պատվիրատուն Հանդիսացել է ոմն Տուած։ Այսպես, թերթ 274 բ-ում թողնված գրչի հիշատակարանում ասված է։ «Զատացող գրոցս զպարոն Տուածն և զպարոնիկ Ըուայիսն ամենայն զարմիւք իւրեանց յիշեցէք Յիշեսչիք ի տէր զ՛ոգնոր եղբայրն մեր զեկուան և զհամեստ ամուսինն իւր... զի բազում աշխատությամբ սպասաւորեցին մեկը Եւս առաւել զ՛ոգելից և զգերունակ քահանայն, զՅովհաննէս զնախնի սկզբնաւորն սուրբ գրոցս որ ի Քրիստոս փոխեցաւ յիրեսս անկեալ աղաշեմբ առաջի զենելոյն Քրիստոսի յիշեսչիք»։

Պարզվում է, որ ձեռագրերը գրված են երկու գրչի կողմից։ Առաջին մասի գրիշը, ուր ընդօրինակված է Կորյունի տեքստը, Հովհաննեսն է Հանդիսացել։

Նշված ճառընտիրները մասամբ օգտագործել է ակադ. Արեգյանը իր հրատարակած «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ։ ՀՍՍՌ Մատենադարանի Արխիվային բաժնում եղած նյութերից երեսում է, որ Գ. Տ. Մկրտչյանը ակադ. Արեգյանից շատ առաջ ծանոթ է եղել և ցանկացել է անգամ վերև հիշեցած տեքստերը հրատարակել։

Կորյունի ներկա հրատարակության մեջ մենք շենք կատարում գրչական ոչ մի ուղղում, մենք տալիս ենք բնագիրն իր հարազատությամբ։ Որոշ տեղերում միայն կատարել ենք կետադրության ուղղումներ։ Կորյունի տեքստի հետ կապված վիճելի ոչ մի հարցի վրա մենք կանգ շենք առել, որովհետեւ գրանց վրա մենք ծանրացել ենք մեր պատրաստած Կորյունի համեմատական տեքստի առաջարանում, որը շուտով հրատարակության կհանձնվի։

Հայոց Մեծաց, Կացեալ յարքունական գիւտնի, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն՝ առ հազարապետութեամբն Հայոց աշխարհին Առաւանայ ուրումն՝ տեղեկացեալ աշխարհացն կարգաւ՝ յանկալի եղեալ զինուրական արուեստի իւրով։ Եւ անդէն ի նմին ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամանյն լուսա-

որեալ թևակոիս եղեալ յաստուածատուը հրամանացն հանգամանս եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւն:

Եւ յետ այսորիկ ըստ աւետարանական շափոյն ի ծառայութիւն աստուծոյ մարդասիրի զարձեալ մերկանար յայսմհետէ զամենայն աշխարհակիր ցանկութիւնս: Եւ առեալ զիշխան պարծանաց ելանէր զինի ամենակեցոյց խաչելոյն և հաճեալ հրամանացն պայմանի խաշակիր գոմդն Թրիստոսի աշակերտացն խառնէր: Եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կրամս մտեալ բազում և ազգի ազգի վշտակցութիւն ըստ աւետարանին կրէր: Եւ ամենայն կրթութեամբ ամենայն իրաց հոգեորականաց զանձն տուեալ միայնաւորութեան լեռնակցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարածաշակ լինելոյ, արգելանաց, անլուսից, խարազանազգեստ և գետնատարած անկողնոյ և բազում անգամ զիշշական հանգիստ գիշերացն և զհարկ քնոյ յոտնաւոր տքնությամբ և թաւթափել ական վճարելով: Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս: Եւ գտեալ ևս գոմանս յինքն յարուցանէր աշակերտել նմին աւետարանական սպասաւորութեանն և այսպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամմայական քաջութեամբ տարեալ և նովին լուսաւորեալ և պայծառացեալ ծանօթական և հաճոյական լինէր առաջի աստուծոյ և մարդկան:

Առեալ այնուհետև երանելոյն զհաւանեալս իւր, դիմեալ իշանէր յանկարգ և յանդարման տես Գողթան: Արդ ընդ առաջ լինէր նմա իշխանն Գողթան, այր երկիրած և աստուածասէր, որում անունն էր Շարիթ, և ասպնջական հիւրամնծար գտեալ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոց ի Քրիստոս Խսկ երանելուցն վաղվաղակի զաւետարանական արուստն ի մէջ առեալ, ձեռն հարկանէր զգավառան՝ հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. և գերեալ զամենեսեան ի հայրենացն աւանդելոց և ի սատանայական գիւտապաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւնն Թրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեաց և զամենայն յաստուածպաշտութիւն կրթեալ, յայտնի իսկ բնակչաց զաւառին նշանք մեծամեծք երևեալ կերպակերպ նմանութեամբ գիւտացն փախստեալ [յ] լինելով անկանէին ի կողմանս Մարաց: Ապա ևս առաւել հոգ ի միտ արկանէր զհամաշխարհական զոփալով. և առեալ աղաւիս մշտնջնամոռնչա և բազկատարած պաղատակտանս առ աստուած և արտասուս անդադարս մզտաւ ածելով զառաքելական և ասել հոգալով «Տրտմութիւն է ինձ յոյժ և անպակաս ցաւք սրտի իմոյ վարն եղբարց և ազգականաց իմոց ըստ մարմնոյ»:

Եւ այսպէս տրտմական հոգովք պաշարեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց՝ թէ ո՞րպէս ելս իրացն գտանիցէ: Եւ իրրե բազում անգամ անդէն ի նմին դադարէր, յարուցեալ այնուհետև հասնէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անուն ճանաշիր Սահակ. զոր և պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ. որ մանաւանդ միարանեալ և միասնական յաւածարութեամբ գումարեալ հանդերձ աղավթիւք մեծովք, և ուժգին խնդրուածովք առ աստուած կանսէին վասն ամենայն ոգոց քրիստոսաբեր փրկութեան հասանելոյ, և զայս առնէին առլրս բազումս: Ապա ելանէր նոցա պարգևական պատճառք յամենաբարին. Աստուծոյ: Փողովեալ զաշխարհահոգ խորհուրդն երանելի միարանելոյն և ի գիտ նշանագրացն Հայաստան ազգին սահմանեալ բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ. և բազում աշխատութեանց համբերեալ ազդ առնէին. ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց Հայոց, որոյ անուն կոշիր Վուամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն որումն ասորույ եպիսկոպոսի ազնուականի «Դանիէլ անուն կոշեցելոյ», որոյ յանկարծ ուրիմն գտեալ նշանագիրս ալփափետաց հայերէն լեզուին: Եւ իրրե պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն Դանիէլի, յաւածարեցուին զարքայ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հանդերձ հրովարտակաւութիւն

առ այր մի երեց, որում Հաբել կոչէին, որ
էր մերձաւոր Դանիէլի եպիսկոպոսի:

Իսկ Արէջայն զայն լուսաւ, փութանակի
հասանէր առ Դանիէլ, և նախ ինքն տեղե-
կանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա
առեալ ի նմանէ առ արթայ յերկրին Հայոց
ի հինգերորդ ամի թագաւորութեան նորին
հասուցանէր: Իսկ արթայն հանդերձ միա-
րան սրբովին Սահակաւ և Մաշղոցիւ ընկա-
լմալ զնշանագիրսն յԱրելայ, ուրախ լինէին:
Եւ ապա առեալ երանելի հոգերածացն
զյանկարծագիւտ խնդրելին Հայցէին յար-
թայէ մանկունս մատազս, որով զնշանա-
գիրսն արծարծեալ մարթացեն: Եւ յորժամ
բազումք ի նոցանէ տեղեկանային՝ ապա
հրաման տայր ամենայն ուրեք նովիմք կըր-
թել, որով և յաստիճան իսկ վարդապետու-
թեան գեղեցիկ վարուք հասանէր: Եւ իբրև
ամս երկուա կարգեալ զվարդապետութիւնն
իւր, նովին նշանագրաւք տանէր:

Իսկ իբրև հասին ի վերայ, թէ չեն բա-
ական այն նշանագիրք ողջ ածել զսիղորէ:
և զկապս հայերէն լեզուի մանաւանդ զի և
նշանագիրքն իսկ ի յալլոց դպրութեանց
քաղեալք և յարուցեալք դիպեցան: Յետ այ-
նորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս
դառնային և ի նմին ևս խնդրէին ժամա-
նակս ինչ: վասն որոյ առեալ երանելոյն
Մեսրովայ դաս մի մանկուոյ հրամանաւ
արքունի և միաբանութեամբ սրբոյն Սահա-
կայ, և հրաժարեալք ի միմեանց համբու-
թեալ սրբութեամբ խաղայր ի հին-
գերորդ ամի Վուամշապուհ արթային Հայոց:
և երթեալ հասանէ ի կողմանս Արամայ, ի
քաղաքս երկուա Ասորւոց, որոյ առաջինն
եղեսիա կոչի, և երկրորդին՝ Ամիթ անուն:
Անդ դեպ լինէր երանելի յեպիսկոպոսացն,
որոյ առաջնուն Բաբիդաս անուանէր և երկ-
րորդին՝ Ակակիոս հանդերձ կղերականաւք
և իշխանաւք քաղաքաց պատահեալ: Եւ
բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ըն-
դունէին հոգարածութեամբ ըստ Գրիստոսի
անուանելոյ կարգի:

Իսկ աշակերտաւոք վարդապետին զտա-
րեալսն ընդ իւր յերկուա բաժանեալ, զոմանս
յասորւոց դպրութիւն կարգէր և զոմանս՝
յունական՝ անդ ի Սամոսատական քաղաքն

գումարէր: Եւ նա իւրովք հաւասարաւք զս-
վորականն առաջի եղեալ զպահս և զա-
դաւթս, և զտքնութիւն և զպաղատանս ար-
տաւարաբեր, զխստամբերութիւնս, զհոգս
աշխարհանեծս՝ լիշելով զասացեալս մար-
դարէէն, թէ «Յորժամ հեծեծեսցես, ապա
կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համ-
բերեալ վասն իւրոյ ազգին բարեաց աւճան
զտանելոյ, որում և պարգևէր իսկ վիճակ
յամենաշնորհն աստուծոյ. հայրական շափոյ
ծնանիլ ծնունդ նորոգ և սբանչելի սուլր
ազովն իւրով նշանագիրս հայերեն լեզուին:
Եւ ապա հրաժարեալք եպիսկոպոսացն սըր-
բոյ, հանդերձ աւգնականաւք իւրովք իշանէր
ի քաղաքն Սամոսատացւոց, յորում և մե-
ծապատի իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեց-
ւոյն մեծարեալ լինէր: Եւ անդ ի նմին քա-
զաքի գրիշ զոմն հելլենական զպրութիւնն
Հոռովանոս անուն զտեալ, որով զամենայն
ընտրութիւմս նշանագրացն՝ զնրագոյն և
զկարձ և զերկայն, զլայնագոյն առանձինն,
և զկրկնայար, միանգամայն յաւրինէր, ի
թարգմանութիւն դառնային հանդերձ ա-
րամբք երկու աշակերտաւքն, յորոց առաջ-
նոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցական
գաւառէն, և երկրորդին Յովսեփ՝ ի Պաղնա-
կան տանէն: Եւ անդ եղեալ սկիզբն թարգ-
մանելոյ զգիրս Առակացն Սոլոմոնի, որ ի
սկզբանն իսկ ծանաւթս իմաստութեանն ըն-
ծայեցուցանէ լինել ասելովն, թէ՝ «Ճանաչել
զիմաստութիւն և զիրատ և իմանալ զբանս
հանճարոյ», որ և գրեցաւ իսկ ձեռամբ գըր-
շին այնորիկ հանդերձ ուսուցանելով զման-
կոմս գրիշ նմին դպրութեան: Ապա յետ
այնորիկ առեալ թուղթ յեպիսկոպոսէ քա-
զաքին, և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ
իւրովքն ամենայն, երեր առ եպիսկոպոսն
ասորոց, յորոց նախընկալն եղև, առաջի ա-
րարեալ նոցա զնշանագիրս աստուածա-
տուրս: Վասն որոյ և զրագում գովութիւն
իսկ յեպիսկոպոսացն և յամենայն հեկեղե-
ցեացն բարձրանային ի փառս աստուծոյ և
միթթարութիւնք աշխատելոցն ոչ սակաւ:

Յորոց հրաժարեալը այնուհետև և առեալ թուխիս աւետագիրս հանդերձ շնորհատու պարգևաւոք, յանձն եղեալ Քրիստոսի շնորհացն ճանապարհորդ լինէր, և այնպէս բազում աւթեանաւոք անցեալ ողջութեամբ և յաջողութեամբ և հոգալից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն ի կողմանս Արարատեան գաւառին առ սահմանաւոք նոր քաղաքի: Ի վեցերորդ ամի Վուամշապուհ արբայի Հայոց Մեծաց: Եւ ոչ այսպէս Մովսէս մեծն զուարթագոյնս շնծայր լէցս Սինէական լերինն, շասեմք եթէ առաւելովքն պակասագոյն քան յաստուծոյ առեալ և աստուածագիր հրամանք ի բազուկս այրն աստուածատես ի լեռնէն հշանէր: Խսկ այսմ երանելոյ, վասն որոյ ճառեալը յարդարին ըստ այնմ արդինակի, որ անդր գործեցալ, այլ և ինքն իրարովքն լցեալ հոգեռոր ուրախութեամբ կարծել յաւագրութիւն ընդունելեացն:

Ապա յետ այնպիսի առաւել ևս բարձագոյն վարդապետութեան սկսեալ երանելոյն Մեսրովայ ճառս յաճախագոյնս, դիւալապատումս շնորհագիտոս բաղմադիմիս ի զարդութենէ և ի հիւրոյ գրոց մարդարէայանաց կարգեալ յաւրինեալ՝ լի ամենայն հաւատոցն ճշմարտութեան:

Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց և կրաց և Աղուանից զամենայն աւուրս կեւաց իրոց զամառն և զձմենն, զտիւ և զգիւք, անվեհեր և առանց յապաղելոյ, իրով սկ աւետարանական և ողջունատիւ զնափիք, առաջի թագաւորաց և իշխանաց և աշենայն հեթանոսաց անընդիմակաց հաւառակորդաց զամենափրկչին զանունն Յիշուսի կրեաց: Եւ զամենայն ոգի քրիստուազգեստու և հոգեղէնս վառեաց: Եւ բազում անտականաց և կալականաց և տագնապետոց փրկութիւն արարեալ՝ կորպելով զնոսա աւորութեամբ զարութեամբ փառացն Քրիստոսի, Բազում մուրճակս արինագիրս զանիւառութեանն պատառեաց և բազում սգաւորաց կարճամտելոց միսիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն և փրկչին Երոյ Յիսուսի Քրիստոսի նուաճեաց, և ամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր փոխեաց:

Եւ դարձեալ բաղում գունդս-գունդս վանականաց ի շէնս յանշէնս, դաշտական և լեռնականս անձաւամուս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր: Զոր ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն աւրինակ ցուցանէր, առեալ զոմանս ոմանս յաշակերտացն յիւրաքանչիւք մենաստանաց և երթեալ լեռնակեաց սորամուտ, ծակախիթ եղեալ զարաւրեալ զկենցաղս խոտաբուտ ճաշակաւք վճարէին: Եւ այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տուեալ մանաւանդ, որոյ Հայեցնեալ ի միսիթարութիւն առաքելական բանիցն, թէ «Յորժամ վասն Քրիստոսի տրկարանամ, զարացեալ լինիմ»:

Անդ էր ապա շարբենալ գինով, այլ առաւել հոգւով և պատրաստել զիրոս երգովք հոգեորաւոք ի փառս և ի գովութիւն: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց սկեպատումն գրոց: Անդ բաջալերութիւն յորդորական լուաւոր վարդապետութեանն առ ի յառաջադեմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսաղի կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղաւիթ աղերսաւիթ և պաղատանք փարելիթ և խնդրուածք հաշտեցուցիչք՝ վասն ամենեցուն կենաց առ մարդասէրն աստուած: Եւ նովին հոգեկրան արուեստիւ հանէր աւորս բազումս յանապատ տեղին, մինչև ազդ լինէր իրանց ինչ հոգեռաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհակն աստուծոյ և անփակ բերանով զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր: Եւ զայս առնէր զամենայն ժամանակս վասն անձին և վասն աշխարհի: Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետքն զանձանց առաքինութիւն կանոնս աշակերտելոցն զնել, մանաւանդ յուշ առնելով զ՞րամանն տեառն, բանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել:

Քանզի և առաւել աւգտակար իսկ է յամենայն զբաւանաց աշխարհի առանձինն սահմանել զկիրս և միայն աստուածապաշտութեան պարապել, զոր և մարդարէին յառաջագոյն գործէին, որք ի լերինս և յանապատս և յայրս և ի փապարս վիմաց աստուածեղէն կրանից զծառայութիւն հարկանէին:

Նոյնպէս և ամենայն հարքն, որ յաջորդեցան յառաքելական կանոնացն գրեալ անձամբ՝ զլաւութիւն բերէին վերջնոցն արինակ, ուստի և երանելիս այս բարձեալ տանէր զաւանդելոցն պատիւ:

Յայնմ ժամանակի բերեալ երևցան ի Հայաստան աշխարհի գիրք սուստապառումք, ընդունայնախաւասք, աղանդութիւնք առն հոռոմի, որում Թէոզոս անոն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն եկեղեցւոյ սրբոյ նշանակեալ ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրովդայ: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ աշխարհհանալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժէին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծովս ինչ սատանայական յարիցէ: Յետ այսորիկ գէպ լինէր նովին ճշմարտութեամբ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայնակեաց ժամանակաւք, և վայելեալք յաստուածեղէն պըտղոյն բաղցրութեամբք, յառաջնումն ամի

երկրորդ ծագկերտի որդույ Վռամայ թագաւորի կացելոյ պարսից աշխարհին, Բագրեանդ զաւափի ի գեղ Քրացւոցն, կատարել ամսոյն նաւասարդի որպէս զաւանդեան երանելոյն զնոյն համարեալ յիշին, յերրորդ ժամու աւուրն պաշտամազանոյ հոգին հանգերձ աստուածահամոյ աղաւութիւք ծերունոյն ի Քրիստոս աւանդեալ Հայեցեալ մարգարէին, որ ասէ. «Ի ձես քյանձն առնեմ զնոգի իմ», և քեզ փառք յափտեանս ամեն: Բարեխաւառութեամբ սուրբ վարդապետացս Գիա՛ Քրիստոս աստուած հոգի ստացողի սորա՝ Թորոս չուկհակի տուր զբո արքայութիւնդ և ամենայն ժողովրդեանս արանց և կանանց ողորմեա՛ բաց զաշ հոգւոյ սոցա տեսանել զբեզ արձանապէս և լինել ժառանգակից սրբոց փառաւորել զբեզ ընդ հաւը և սուրբ հոգւոյ յափտեանս և ողորմեա թողութեամբ մեղաւոր գրչս:

ՎԱՍՆ ՄԱՍՈՒՄԱՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ

Տեսեալ թէ ի վերջ հասեալ թագաւորութիւնն Հայոց համբերութիւն զտեալ սրբոյն Մեսրոպայ, որ ի Հացեաց Տարաւանոյ, սնեալ և ուսեալ առ մեծին ներսէսի. և յետ ելից նորա յաշխարհէս ի տան արքունի լինել քարտուլար. Սա սիրեաց զմիայնաւորութեան վարս որպէս ասաց ոմն, ի նաւահանգիստ փութայ նաւ խոռվեալ և անձն ժուժկալ խնդրէ զանապատ: Նոյնպէս և նորա փախուցեալ յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յիշոյոյ զմարմնական պատիւն, զհիտ երթայր երկնաւորին:

Իսկ երանելոյ Մեսրովբայ բազում անձկայրեաց և արտաւարակաթ ողբուլք և ծանրաթախիծ հոգովք պաշարեալ զնէր: Բայց թէպէտ և միայնաւորութեան տրտմութիւնն միողոյր զուարթանալ. սակայն զաւտարանական ընթացսն և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհաւքն աստուծոյ առանց [պա]կասութեան տանէր: Եւ զցայք և զցերեկ ազութիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառով զաստուածադիր զբարմանն յուշ առնելով զգուշացուցանէր ամենահայութագույն պատուածադիր կամաց մասունք առնելով զգուշացուցանէր:

Դժուարագոյն համարյալ զծանր բեռն զվարուածն կրթութիւն, մանաւանդ զի զմտաածէր զծերունական հասակին զմաւտաւով վախճանն, շտայր քուն աշաց և ոչ նի՞օր արտեանաց և ոչ հանգիստ Տերանաց՝ մինչ հասանել ի հանգիստն տեառն: Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրե զնովեու եռանդն ածէր անդէն ի նմին ամի, յետ ամաց վեցից անցելոց վախճանի երանելոյ Սահակայ, լինէր հանգերձ սրբով վարդապետան ի բանակն Հայոց յԱրարատ ի նոր բաղաթի: Եւ նորին հոգեկրաւն վարուք հասնէր ի քրիստոսակոչ կատարումն: Յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան յերեք տասներորդի ամսոյն մեհականի՝ յորժամ միջոյ ձեռնասուն աշակերտացն ի զոմդի Քրիստոսի հասանէր խառնեալ՝ թեթևացեալ և սիթակեալ ի ցաւոցն, կանգնեալ նստաւ ժողովրդոցն ի միջի. և համբարձեալ զծեռ իւր համբարձած յերկինս զամենայն մնացեալն՝ յանձն առնելով շնորհաւքն աստուծոյ և վասն նոցա աւզնական հայցէր:

Եւ անուանք գլխաւորելոցն ժողովելոց առանձիւառն էնն աւանսի՝ առաջնուում

Յուսէփ և երկրորդն Թաթիկ, արք զգաստք և զգոլշագոյնս վարդապետական հրամանացն։ Խսկ ի զինուորացն առաջինն Վահան, յազգէն Ամատոննեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց, և երկրորդին՝ Հմայեակ ի Մամիկոննեան տոհմէն, արք պատուականք և երկիւղածք, աստուածասէրք հրամանակատարք վարդապետական բանից։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյն կարկառեալ կային, տեսիլ սրբանչելի խաչանշան լուսաւոր շողացեալ ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ և ոչ ի յընկերէ պատմել։ Եւ ապա զսրբոցն և զսիրոյ և զմիարանութեան պատուիրան աւանդել և զմերձաւորս և զհեռաւորս աւրհնութեամբ պսակել և զհանոյական աղաւթս մատուցանել ի Քրիստոս հանգեաւ։ Զոր առեալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհակոյտ ամբոխիւն, սաղմոսիւք և աւրհնութեամբ և հոգեսոր ցնծութեամբ, կանթեղաւք վառելովք և շահիւք բորբոքելովք, և խնկաւք բուրելովք, և ամենայն լուսաճաճանշ գնդիւն և այնու խաչանշան լուսովն յառաջ խաղացեալ յԱւշականն ելանէին, Եւ

անտի մարտիրոսական բնակութիւնսն մատուցեալ և զարինաւոր յիշատակ երանելւոյն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր։ Եւ նորա յիւրաքանչիւր դառնային տեղիսն։ Խսկ յետ երից ամաց անցելոց յաջողելոյ, Վահանայ Ամատունոյ քրիստոսասէր փութով խորան կանգնեալ տաշածոյ վիմափ քանդակելովք և ի ներսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յաւրինէր։ Որոյ սպաս ևս վայելովս և գունագոյնս պայծառատեսիլս ոսկով և արծաթով և ակամբք պատուականաւք յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի պատրաստեալ զխաչական վկայսն Քրիստոսի հանդերձ երանելեաւն Մեսրոպաւ ի հանգիստ խորանին փոխէր, և զնորին աշակերտ զթաթիկ անուն, զայր զգաստ և բարեպաշտաւն հանդերձ եղբարբք երանութեան հասանելով սպասաւորել սրբոյն ի փառս աստուծոյ, զի նմա խսկ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և մի։

Զստացող սորա (անվան տեղը բաց է թողած) և զգրողս յիշեցէք ո՞վ քրիստոսասէր ժողովեալք։





ԲԱՆԱՏԵՂԾ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՐԵԼՑԱՆԸ

ՀԱՆԴԻՍՎԱԾՈՐ ՆԻՍ ՆՎԻՐՎԱՇ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ



Ավ. Իսահակյան

Հուկիսի 30-ին երևանի հասարակությունը հանդիսավոր կերպով նշեց հայ ականավոր բանաստեղծ, Հայկական ՍՍՌ գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ավետիք Իսահակյանի ծննդյան 70-ամյակը:

Օպերայի և բալետի Սպենդիարովի անվան թատրոնի դահլիճը լիփիցոն էր Թանկագին հորելյարին մեծարելու էին եկել գրողներ, նկարիչներ, մանկավարժներ, Կարմիր Բանակի սպաններ ու մարտիկներ, արդյունաբերական ձեռնարկությունների ստախանովականներ, սովորող երիտասարդություն:

Նախագահության սեղանի մոտ են գր-

ջարյանը, Արագին, Հայաստանի Կ(ր)ՊԿԿ-ի պրոտագանդացի գծով քարտուղար ընկ. Զ. Գրիգորյանը, Հայկական ՍՍՌ ժողովածովիտի նախագահի տեղակալ ընկ. Կարապետյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահ ընկ. Ա. Սահակյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Տերտերյանը, Երևանի քաղսովետի գործկոմի նախագահ ընկ. Լ. Հովսեփյանը, ՍՍՌՄ ժողովրդական արտիստուճի Հ. Դանիելյանը, ժողովրդական նկարիչներ Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, ժողովրդական արտիստներ Ա. Գովակյանը, Վ. Վաղարշյանը, Գ. Զանիբեկյանը և ուրիշները:

լիկական հորելլանական հանձնաժողովի նախագահ գրող Ստեփան Զորյանը:

Այնուհետև Ավետիք Խսահակյանի կյանքի ու դործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Հարությունյանը:

Հորելլարին սրտագին շնորհավորեց Հայկական ՍՍՌ կառավարության և հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի անունից ընկ. Սիմակ Սահակյանը, որը իր խոսքի վերջում կարդաց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության Հրամանագիրը Աղինի շրջանի Ղաղարապատ գյուղը Իսահակյան գյուղ վերանվանելու մասին և Հայկական ՍՍՌ ժողովունվետի որոշումը՝ Ավ. Խսահակյանի անվան երկու թուշկ սահմաններու և բանաստեղծի ծննդավայրում՝ Խսահակյան գյուղում նրա կիսանդրին կանգնեցնելու մասին: Ողջույնով հանդես եկան նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայից և Մոլոտովի անվան Պետական համալսարանից՝ Ակադեմիայի իսկական անդամ Ա. Տերտերյանը, Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահությունից՝ ընկ. Նայիրի Զարյանը, Լուսժողովամատից և ուսպուրիկայի ուսուցչությունից ընկ. Ա. Ղաղախեցյանը, Լենինականի աշխատավորներից՝ գրող Ա. Հովսեփյանը, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի կոլեկտիվից՝ ժողովրդական արտիստ Գ. Զանիբեկյանը, օպերայի և բալետի պետական թատրոնից՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Հ. Դանիելյանը, Հայաստանի կոմպոզիտորների միությունից արվեստի վաստակավոր գործիչ Հարությունյանը, սովետական նկարիչների միությունից՝ արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանը:

Ողջույններով հանդես եկողները շերմագին շնորհավորում էին Ավետիք Խսահակյանին, ցանկանում էին նրան ստեղծագործական նոր հաջողություններ ի բարորություն մեր մեծ Հայրենիքի, հայ գրա-

կանության զարգացման համար: Ականավոր բանաստեղծի արժանի կերպով նշված հորելլանը վկայում է, թե Լենին—Ստալինի պարտիան և կառավարությունը ինչ մեծ հոգատարությամբ են շրջապատում ժողովրդական մտքերի ու իդեարի արտահայտիչներ սովետական գրողներին:

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց Ավետիք Խսահակյանի գործունեությունը նրան պարզեցարելով Լենինի շքանշանով:

Երեկոյին ընթերցվեցին բազմաթիվ ողջույնի հեռագրեր, որոնք ստացվել են Հոբելյարի հասցեով:

Ողջույններն ավարտված են: Զերմ ընդունելությամբ հուզված պատասխան ճառով հանդես եկավ Ավետիք Խսահակյանը:

—Իմ հորելլանը նշվում է,—ասաց նա, —այն օրերին, երբ Սովետական Միության ժողովուրդները դյուցազնական ուսուժովրդի ղեկավարությամբ փառապանծ հաղթանակ տարան հիտլերյան Գերմանիայի դեմ:

Եղբայրական ռեսպուբլիկաների ընտանիքում բարգավաճում է Սովետական Հայաստանը, որի զավակները հերոսաբար մարտնչում էին մեր մեծ հայրենիքի պատվի ու անկախության համար: Մեզ բոլորիս թանկագին Սովետական Հայաստանի համար ավելի և ճաճանշափալ հեռանըրկարներ են բացվում: Ես հպարտ եմ, որ համեստ բաժինս եմ՝ մացրել ատելի ֆաշիզմի զախչախման գործում: Ես պարծենում եմ, որ կրում եմ Լենինի շքանշանը, որին ինձ արժանացրեց մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Փառք մեծ Ստալինին:—

Ներկա եղողները ուսութիւն կանգնած բուռն օվացիա են սարքում ի պատիվ Սովետական Միության Գեներալիստումուա ընկեր Ստալինի:

Հանդիսավոր նիստից հետո տեղի ունեցավ մեծ համերգ:

(«Գրական թերթ», № 22 (342), 1945 թ.)

ԱՐՏ. ԱՎԱԴՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ավ. Խսահակյանը ծնվել է 1875 թվին, Հոկտեմբերի 31-ին, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) շրջանի Ղաղարապատ գյուղում։ Իր մանկությունն անց է կացրել Մանթաշի ծաղկազարդ հերթափառության մեջ։ Սկզբնական կրթությունն ստացել է տեղական ծխական դպրոցում, ապա՝ էջմիածնի Գևորգյան ճեմարանում, մինչև 5-րդ դասարանը։ այստեղ է, որ նա հափշտակությամբ կարգում է մեր ազգային բանաստեղծների երկերը և ապրում նրանցով։

Խնչակն ինքն է ասում, Արովյանի «Վերբք Հայաստանին» կարգացինք «Հաց ու չուր մոռացած, հափշտակված, վերացած»։

1892 թվականին Խսահակյանը վտարվում է ճեմարանից՝ ճեմարանի վարչության դեմ ուղղված աշակերտական խոռվություններին մասնակցելու համար։ 1893 թվին ուղևորվում է Եփրապա ուսումը շարունակելու համար։ Վիեննայի համալսարանում սովորելուց հետո անցնում է Լայպցիգի համալսարանը, որտեղ ազատ ունկնդրում է ժամանակի նշանավոր գիտնականներին՝ Վուլֆտին, Բյուլերին և ուրիշներին։

Դեռ պատանի հասակից Խսահակյանին հովել է տանչչով ու շարշարված մարդու նա խորը կերպով ուսումնասիրում է Շո-

պենհառուերին, Նիցշեին, Հարտմանին, Հեգելին, ուսումնասիրում է բուդիզմը, հուգայիզմը, պարսկական Մազդակը, Պլատոնին, Թոմաս Մորին, մեր թոնդրակեցոց շարժումը և այլն։ Փիլիսոփայության և պատմության զուգընթաց ուսումնասիրում է համաշխարհային գրականության կլասիկ ըստեղծագործությունները։ 1896 թվին վերադառնում է Հայրենիք, ուր հակացարական զործունեության պատճառով բանտարկվում է։ 1897 թվին բանտարկությունից ազատվելով տպագրության է հանձնում բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն «Երդեր ու վերբեր» վերնագրի տակ, որը լույս է տեսնում 1898 թ. Ալեքսանդրապոլում։ Խսահակյանը գրել սկսել է 11—12 տարեկանից՝ նրա առաջին բանաստեղծությունը՝ «Մազդիկ» էր նորաբողոք...» և ուրիշները լույս են տեսել «Տարազ» պատկերազարդ հանդեսում 1892—93 թվերին։ Այնուհետեւ նա աշխատակցում է «Մուրճ», «Արաքս», «Ալբայր» և այլ պարբերականներին։ 1900 թվից մեր քանի անգամ լինում է Եփրոպայում և վերջնականապես Հայրենիք է վերադառնում 1936 թվի դեկտեմբերին իր ազատ ժողովրդի մոտ։ Երիտասարդացած իր ժողովրդի երջանկությամբ՝ ակտիվ մասնակցում է մեր եղիկի կուլտուրական ու քաղաքական կյանքին։

Խսահակյանի ստեղծագործությունը բազմազան է. նա գրել է բանաստեղծություններ, պոեմներ ու բալլագներ, լեգենդներ ու առակներ և արձակ էջեր։ Սակայն այդ բոլորի մեջ նրա քնարի ամենահնչեղ լարը հանդիսանում է լիրիկան, սիրո լիրիկան, որն ավելի պայծառ է շողզողում նրա բանաստեղծության թագի վրա։ Խսահակյանը խորոնկ ու ամենակերպերական սիրո լիրիկէ է, նա ճշմարիտ է ասել իր մասին։

— Միայն սիրո լարը մնաց

Սրտիս անհուն խորիրում,

Ու սուլբ սիրո երգը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում...

Խսահակյանը սերը երգել է այնպիսի խորությամբ, որ երբենիցն զգում է մարդկային հոգին, նրա սերը սուբեկտիվ չէ, սիրո երգերու մ Խսահակյանն արտացոլել է մի պատմական դարաշրջան՝ լեցուն բախումներով ու կրքերով։ Սիրո երգերում դրել է մի սիրտ, որը խոցված ու թունավորված է ժամանակի մարդկային հարաբերություններով։ Սերը՝ մարդկային ամենանվիրական ու սուրբ զգացմունքն է

հանդիսացել, այն հենքը, որի վրա իսահակյանը հյուսել է ժամանակի սոցիալական հակասությունների ու հարաբերությունների պատմական պատկերը։ Այս իմաստով իսահակյանի սերը դուրս է դալիս իր նեղ ափերից և դառնում է ավելի լայն ու խոր, հասարակական զգացում։

Իսահակյանը աշխարհ է մտել իր հետքերկով զգայուն հոգի, մի սիրտ, որ նման է երկնքի և «ամեն արարած աստղ ունի այնտեղ»։ Նա այնքան կենսափրություն է բերել իր հետ, որ կարող է կյանք տալ «շոր անապատին»։ Սակայն փշրվում են բանաստեղծի երազներն ու տենչանքները՝ բախվելով ժամանակակից կարգերի բիրտ իրականությանը։ Եւ իսահակյանը գրում է.

Հանիր քո սերը սրտիցդ անհույս,
Այն խորթ, ապօրեն զավակն աշխարհի.
Զգիր այս դաժան, մութ գիշերին դուրս
Ցուրտ քամու բերան... թող երթա
սառի...

Այստեղ խարված և հուսալքված ժարդկային հոգին է խոսում բանաստեղծի մեջ։ Իր բանաստեղծությունների մեջ հաճախ ընկնում է որոնումների մեջ, անընդհատ մակընթացություն և տեղատվություն է ապրում նրա հոգու ծովը։ Եվ ահա այս տատանումների մեջ նա ճանաշում է կյանքը, հասկանում աշխարհն ու փիլիսոփայում կյանքի ու մահվան, սիրո և ատելության մասին։ Կյանքի դառնությունների բովում կոփված բանաստեղծը անցնում է ընդհանրացումների։ Հիասթափված «զուլում» աշխարհից, վերքը սրտում բանաստեղծը փարվում է մոր մշտավառ սիրուն։ Իսահակյանի մայրական երկերը վճիռ շիթեր են քամված բանաստեղծի դառնացած հոգուց։ Հուսախարված բանաստեղծի համար մայրական սերը մի լուսավոր հանգրվան է, որով նա կարող է ամորել իր վերքերն ու ցավերը։

Սակայն խորն ու անբուժելի են եղել բանաստեղծի վերքերը, նա դեպի հեռանրկարն է սեռու իր հայցքը, քարավանի զանգերի դողանջներն են գերել նրա հոգին։

Սալաթ-Նովայի պես իսահակյանին էլ աշխարհը նեղ է թվացել և աշխարհից անհույսապես դժգո՞ւ ու խոցված բանաստեղծը ուզում է թոշել և հեռանալ «անհայտ, անորոշ» ուղիներով։

Այդ ուղիներն ավելի անորոշ են դառնում, բանաստեղծի խոռվաճույզ սիրտը ավելի է մոլեգնում, երբ պարտվում է ուստական առաջին ուղղուցիան։ Ստույգինյան կախաղանների տարիններին հումանիստ բանաստեղծն ապրեց մի ահավոր ողբերգություն, նա կորցրեց զալիքի ձշգրիտ ուղիները, գրեց հանրահուզակ «Արու-Լալա-Մահարին», որը ուսմբի պես պայմեց բուրժուական կարգերի դեմ։

Գրաքննության աշերքին թող փշելու համար իսահակյանն իր խոհերի ու ապրումների, ցանկությունների ու ձգտումների թարգմանն ընտրեց 10—11-րդ դարերի Արաբիայի նշանավոր բանաստեղծ Արու-Լալա-Մահարուն։ Վերջինիս ապրած ժամանակաշրջանը Արաբական խալիֆայի անկման ժամանակաշրջանն է, իսկ ինքը՝ արաբ բանաստեղծը ժամանակաշրջանի արտահայտիչը։ Լինելով հոսետես իր ժամանակի կարգերի նկատմամբ նա մերժել է մարդկային ցեղի հարատելվությունը։ Իսահակյանի խոհական պունմի ժամանակաշրջանը համընկնում է Արաբական խալիֆայի այդ ժամանակաշրջանին, իսկ հեղինակի ծանր զրաման՝ համաշշուն պեսսիմիստ-փիլիսոփա-բանաստեղծ Մահարուն։

Սակայն, եթե Մահարին ի սկզբանե ատեց այն, ինչ իրական է կյանքը, Մահարի-իսահակյանը «սիրեց, փորձեց բնկերներին, տեսավ և գիտեց մարդկանց օրինքները» և ապա երեսը նողկանքով շրջեց, «թույն ատելությամբ» լցված հեռացավ մարդկանթյունից, հայրենիքից, ապրելով սիրո և բաժանման տրագեդիան։

Իսահակյանի պենմում քողազերծ է արված հին ողջ կյանքը՝ ընտանիքը, պիտությունը, կենցաղը և այլն։ Փողը եղել է ամեն սրբություն, մարդկային հասարակարգը դարձել է նրա համար գալիք հասարա-

կարգ, ընկերը՝ մենք ու դաժան», կինը՝ «խորամանկ, խարող», մարդիկ՝ «պատառն հանում իրար կոկորդից, դավաճանում ու խարում»: Բանաստեղծը պարզ դիտակցում է, որ այդ հասարակարգում օրենքն ու իրավունքը ծառայում են մի բուռ ուժեղների, մարդկանց խողովածելու համար.

Ի՞նչ է օրենքը, — մարդկանցից օրհնած, Թիրա ուժեղների այդ սուրբ դաժան, Անգորի զլախին կախված համբայան և հեղճին խողովածող, հզորին պաշտպան: Իսահակյանը միեր հիշելով պատմությունը անիծում է շահագործման մի ձևը մյուսով փոխած իշխանությունները.

Ցորին անգամ ահա ատում եմ ատում իշխանությունը — սերունդներ լափող; Անհաղ վաշխառու, անկուշտ ձրիակեր, Պատերազմների հավերժ հերուրող: Անցած դարերի, գալիք դարերի Մեծ դահիճն է նա և մեծն ավազակ, իր անցած ուղին՝ ոճիր ու նախճիր, Սարսահներ վիճող, ոխակալ ոհմակ:

Իսահակյանը պատում է շահագործող հասարակության դիմուկը, որոնց հավատութանակն է փողը, գանձը, որը ձեռք բերելու համար կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ:

Եվ ի՞նչ է, դանձը, որով հիմարը Տիրում է մարդկանց, և հանձար, և սեր, — Բյուրագորների քամփած արյունը, Մեռելների միս, որի արցունքներ:

Կյանքի և սիրո բանաստեղծը ժխտելով հին հասարակարգը, ձկուում է դեպի ազատություն, որը հանդիս է գալիս արևի սիմվոլիկ պատկերով:

Եվ Արու-Լալայի բարավանը անցնելով մենության անապատները՝ ձկուում է դեպի մեծ ու լուսավոր արեր, դեպի համբայնականությունը, զնում է ծուլվելու բարի ու մեծ բնության սրտի մեջ:

Սակայն բանաստեղծը երկար շի մնում այս խարխափուների մեջ, արեից կարծես հզորացած, Հոկտեմբերյան ուսուցիչայի պղեցության տակ նա գրում է «Սասմա-

Մհեր» վիպերգը: Տիրող իրավակարգի դեմ ուղղված դարը քննադատության հետ միասին զինված է պայքարի կոչով «իշխաններու, սեպուններու, ավատներու, հարուստներու» գեմ: Մհերը նույնպես Մահարունման տեսնում է կյանքի դառնություններն ու մրմուռ սրտով լաց է լինում, նա նույնպես տեսնում է՝

«Ռամիկ շարադատ
Չոր կուտե,
Հարուստ պարապ—մարդ
Մեղք կուտե»:

Մհերը նույնպես հալածվում է իր իսկ հարազատներից, սակայն լի հուսահատվում, նա դիմում է ակտիվ բողոքի, նա ոչ թե փախչում է մարդկանցից, այլ հենց մարդկանց միջոցով, զինված պայքարով ձեռք է բերում իր և ուսմիկ ժողովրդի աղատությունը.

«Ենենք
Աշխարհի դեմ զրկող ու շար
Ողջ ավերենք
Ու ումկություն բերենք աշխարհ,
Ռամիկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ուսմիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Փիլիսոփա բանաստեղծը երկար որոնումներից հետո, խոներից ու խոկումներից հետո գալիս է սոցիալական ուժվուցիչայի գիտակցությանը, քաղաքական այն եղբակացությանը, որ ուսմիկի օրենք, ուսմիկի արդարություն» պետք է լինի: Իսկ այդ օրենքն ու արդարությունը բերեց Հոկտեմբերյան Մեծ Ռևոլուցիան:

Ազգերի համերաշխության շերմ արևի տակ վերածնվեց բազմաշարշար ու տառապայալ Հայաստանը: Ռամիկը տեր դարձավ իր «սուրբ վաստակին», արդար հացին: Եվ Իսահակյանը իր իմաստունի աշքերով նայեց իր այնքան սիրելի Հայաստանին և առաջ. «Ես Սովետական Հայաստանի և նրա կառավարության բարեկամն եմ, անձնվեր ու անկեղծ բարեկամը, անդավաճան կանգնած նրա կողքին»:

Հայաստան...

Ո՞րքան քաղցր ու թանգ է հայ մեծ
բանաստեղծի համար այս անոնքը։ Նա իր
երգերի գույներն է վերցրել այս կախար-
դական աշխարհից։ Նրա երգերում շնչում
է Հայաստանը, նրա երգերը հագեցած
են հայ ռամկի պարզ իմաստությամբ,
հայ երգի կախարդական հնչուններով։
Մեր փոքրիկ ու տանջված հողի հրաշա-

զործ ողին է մարմնացած իստիւլյանի
մեջ։ Մեր անցյալի հրաշագեղ գանձերով
ծանրաբեռ, մեր լուսավոր ապագայի ցույքը
իր իմաստում ու խորաթափանց աշքերի մեջ,
մեր վերածնված երկրի, մեր փրկված Հա-
յաստանի հետ դեպի գալիքն է քայլում
մեր մեծ բանաստեղծը։

Փառք մեր մեծ հոբելյարին։



ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՎԱՀԱՆ ԵՎ ԵՐԿԵՐԵՍԱՆԻ ՎԱՍԱԿ ԱՅՈՒՆԻՆԵՐԸ

Հայ ժողովուրդը և Հայաստանը բազմիցս անգամ ենթարկվել են ավերածությունների, ավարի ու կողոպուտի պարսկական, արարական, թաթարական, մոնղոլական տիրակալների կողմից, որոնք ձգտել են տիրել Հայաստանին և ստրկացնել Հայ ժողովրդին: Հայ ժողովուրդը հերոսական պայքար մղելով օտար նեղիների գեմ իր արյան գնով պաշտպանել է իր հայրենիքի ազատությունը, անկախությունը և իր ֆիզիկական գոյությունը:

Հայ ժողովրդի պատմությունը արձանագրել է այդ աշխարհավեր պատերազմների քատմանցոցից փաստեր հեռավոր անցյալում: Այդ պատմությունը արձանագրել է աշխարհավեր պատերազմների սարսուցոցից փաստեր և մոտիկ անցյալում:

Հայ ժողովրդի հիշողության մեջ տակալին թարմ է առաջին համաշխարհային պատերազմը, որ խաղաղասեր ժողովուրդների վզին փաթաթից գերմանական արյունոտչտրոնակալությունը իր նույնպիսի արյունաբերութաճկան, և ուրիշ բռնակալների հետ միասին: 1914 թվականի պատերազմում Թյուրքաց Հայաստանը սպանդանոցի վերածվեց: Ավերվեցին, կործանվեցին հազարավոր շեն ու բարեկարգ քաղաքներն ու գյուղերը, կողոպտվեցին, այրվեցին հարյուրավոր տաճարներ ու վանքեր, պղծվեցին Հայ ժողովրդի դարավոր սրբությունները, նոր վանդալները կոտորեցին ու մորթազերծ արին տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց, ծերերի, ու մանուկների, կանանց ու տղամարդկանց, կենդանի թաղեցին բազմազիւլ երիտասարդների: 1914 թվականի այս սպանդանոցից մազապործ եղած

Հայ ժողովրդի մի մասը ապաստան գտավ Մայր Աթոռի հովանու տակ, իսկ մյուս մասը ապավինեց Մայր հայրենիքից հեռու օտար երկրներ: Ռուսական հատվածի Հայ ժողովուրդը սովետական կարգերի հաստատմամբ ստեղծեց իր պետականությունը, մշակեց իր ազգային կուստուրան և բռնեց ազատ ու անկախ քաղաքական ու տնտեսական կյանքի ուղին:

Իր կուտուրական զարգացման ու խաղաղ շինարարության վերելքի մեր օրերին գերմանական ֆաշիզմը նոր սպանդանոց ու նոր արհավիրքներ բերեց խաղաղասեր ժողովուրդների, այդ թվում և Հայ ժողովրդի վկին: Գերմանական հորդաները նենսգործն խուժեցին մեր երկիրը, ավերեցին մեր շեն քաղաքներն ու գյուղերը, կործանեցին մեր հինավուրց սրբազնա տաճարները, կողոպտեցին վանքերն ու եկեղեցիները, պղծեցին ու ախոռի վերածեցին ժողովրդի դարավոր սրբավայրերը, արյան նախճիրի մեջ խեղդամահ արին տասնյակ հազարավոր անմեղ քաղաքացիների: Սակայն շատ կարճառե եղավ բարբարոսների տիրապետությունը մեր երկրում: Սովետական Միության ժողովուրդները հանդես բերին միահամուռ ուժ կամք եվ թշնամուն արտաքսեցին մեր երկրից շախատացին նրան իր որչում:

Անարդ թշնամու կեմ մղվող հայրենական պատերազմում անմասն շմաց եվ Հայ ժողովուրդը, եվ Հայ եկեղեցին թե Մայր Հայրենիքում եվ թե Սփյուռքում: Հայ ժողովրդի անձնվեր զավակները պատերազմի ողջ ընթացքում բարձր պահելով Հայ ժողովրդի անունը եվ պատիվը իրենց սխրագործություններով արժանացան

Հերոսի կոշման և հերոսական փառքով պահպեցին հայ ժողովրդին:

Հայ հկեղեցին և հոգմորականությունը նույնափառ հավատարմություն ցուց տվավ իր ժողովրդին և իր Մայր Հայրենիքին նաև այժմ, ինչպես միշտ պատմական անցյալում: Ամենայն Հայոց Հայրապետության Ազգբնահիր Տեղակալ Տ. Գեվորգ սրբազն արքեպիսկոպոսի՝ ներկա Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ազգությանախափական կոչերը չերմ արձագանք գտան Սփյուռքի հայության սրտերում: Սփյուռքի հայությունը շնչարձից իր նյութական ու բարոյական աջակցությունը իր Մայր Հայրենիքին սպառնացող վտանգի առաջն առնելու համար ու կարծ ժամանակամիջոցում կառուցեց «Սասունցի Դավիթ», և հայ ժողովրդի սիրելի զավակ քաջարի մարտիկ գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուները, որի երգվալ մարտիկները անձնվիրություն եվ հերոսություն ցուցաբերեցին թշնամուն մեր երկրի սահմաներից դուրս վլուս վախչախելու ու շախչախելու սրբազն գործում:

Եվ երբ Հյուսիսային Կովկասը մեր քաջարի մարտիկների հերոսական: Կարմիր Բանակի ճեղորդված մաքրվեց և ազատագրվեց մեր ժամանակի բարբարոս սարակինուների ստեղծած դժոխքից, այն ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետության Ազգբնահիր Տ. Տեղակալը շտապեց մեր Հյուսիսային Կովկասի թեմն ուղարկել իր նվիրակին՝ թեմի հայ հավատացյալների նյութական ու բարոյական վիճակի հետ ծանոթանալու և նրանց միթիարելու:

Հայրապետական նվիրակը՝ Տ. Սուրեն ծայրագույն վարդապետ Թորոսյանը առտեղյալի ծանոթանալով հայ հավատացյալների վիճակի հետ և վերադառնալով Ս. էջմիածին գեկուցում է Ամենապատիկ Տ. Տեղակալին:

Հայրապետական պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը 1944 թվի հունվարյան համարում տեղ է տալիս Տ. Սուրեն ծ. վարդապետի հոդվածին «Ուղեգորություններ Հյուսիսային Կովկասում» վերնագրով, որը Տ. Տեղակալին ներկայացված էր զեկուց-

ման մի փոքրիկ հատվածն էր: Այդ հոդվածում նկարագրված էր հայ ժողովրդի և հայ եկեղեցու երգվալ թշնամի դաշնակցությունը հատկապես աշխարհացունց այս պատերազմի ընթացքում: Այլունուցաւ ու ծախուալ այդ «ազգասերներից» Դրոն, որի ձեռքերի վրա դեռևս չէր շրացել հայ զավակների անմեղ արյունը, Հայրենական պատերազմի ժամանակ նորեն միացավ իր դաժան տերերին, գերմանական բարբարուներին: Հավերժ թշնամի լինելով ազատության ու մարդկային երջանկության, հայ ժողովրդի անկախությանն ու հայ եկեղեցու սուրբ գործին, նա իր տերերի հետ հասավ մինչև Կովկաս, ազգի դավաճան վասակ Սյունիի պես Հայրենիքի դարպանակ բացելու անարգ թշնամու առաջ: Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում նա անարգեց հայ եկեղեցու սրբությունը, հափշտակեց եկեղեցու բարեկարգման համար հավատացյալների հավաքած գումարները: Բաղմաթիվ են, որը ու սրտացունց նրա կատարած գործերը:]

Մայր Հայրենիքի և Սփյուռքի բոլոր հայրենասեր և ազնիվ հայերը բուռն ատելությամբ լցվեցին Մայր Հայրենիքի ու հայ եկեղեցու այս թշնամիների ստորգավաճանական բայլն իմանալով: Մեր ժամանակի վասակ Սյունիները խաղաղության ատելի թշնամիներին էին վաճառել հայ ժողովրդի արյան գնով պահպանած Մայր Հայրենիքի ու Մայր եկեղեցու ազատությունն ու անկախությունը:

Մարդակերներից ու խաղաղության թշնամիներից կաշառված վասակ Սյունիները իրենց գժիսեմ արարմունքները վարդապետելու նպատակով սկսեցին վայնասուն բարձրացնել արտասահմանում և Տ. Սուրեն ծ. վարդապետի անկողմնակալ նկարագրությունները զրպարտություն համարելով փորձեցին մոլորության մեջ զցել Սփյուռքի՝ Մայր Հայրենիքի ու հայ եկեղեցուն հավատարիմ հայ հատվածներին և դրանով նշավակել հայրապետական պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը: Մակայն այդ շաղողվեց նրանց:

Ալսօր մեր ձեռքի տակ են գտնվում Տ. Սուբբեն ծ. վարդապետի՝ Հայրապետական պաշտոնաթերթում զետեղված նկարագրությունները հաստատող, ինչպես և նոր, ավելի վրդովեցոցից փաստեր:

Մեր ձեռքի տակ է կիրանանում Հրատարակվող «Ժողովուրդի ձայն» (թիվ 376, 13 մայիս 1945 թ. և թիվ 913, 8 հունիսի 1945 թ.), ինչպես և թերութում Հրատարակվող «Առավոտ» (թիվ 105, 12 մայիս 1945 թ.) թերթերը, որտեղ Հրատարակվել են գերմաններնից թարգմանված մի վավերաթուղթ՝ գերմանացիներին դաշնակցության կողմից մատուցած ստոր ծառայությունների մասին, այլ և զետեղել Հայդավաճանների նկարը գերմանական «իրենց տերերուն հետ» («Ժողովուրդի ձայն» թիվ 913):

Արևելյան դրաված շրջանների գերմանական օկուպացիոն նախարարության թերթանքով 1942 թ. գեկտեմբերի 15-ին Բեռլինում կազմակերպվում է դաշնակցական ֆաշիստների «Հայ աղջային խորհուրդ» Հայ ժողովրդին ծանոթ հետեւյալ դավաճանների կազմով՝ նախագահ պրոֆ. Արտաշես Արելյան, փոխնախագահ՝ Արշամ Գյուլիստանյան, քարտուղար Հարություն Բաղդասարյան, անդամներ՝ Գավիթ Դավիթիստանյան, Գարեգին Նժդեհ, Վահան Փափազյան (Կոմս), Տեր Թովմայան և Դրո Կանայան:

Հայ ժողովրդի և Հայ եկեղեցու այս ժողովական դավաճանները 1943 թվի փետրվարի 15-ին, իրենց իսկական տերերին՝ գերմանական ֆաշիստներին ներկայացնում են Սովետական Հայաստանը Գերմանիայի դադութ գարձնելու 12 կետից բաղկացած իրենց զաղրելի ծրագրը:

Այդ «ծրագրով» ազգադավաճանները Հայ ժողովրդին ու Հայաստանը դնում են Ֆաշիստական Գերմանիայի Ռայխստա-

դի «Պաշտպանության» տակ և նրան հանձնում Հայաստանի բնական հարստությունները:

Այսքանն էլ բավական է ցույց տալու, թե որքան արդարացի է եղել մեր պաշտոնաթերթը, եթե զետեղել է Տ. Սուբբեն ծ. վարդապետի հոդվածը: Հայ հավատացյանները տեսնում են, թե մեր դարի վասակ Սյունիները ինչպես են «ծրագրել» մեր ծաղկած Հայրենիքի ու մեր ազատ եկեղեցու գաղութացումն ու ստրկացումը գերմանական մարդակերներին:

Հայ ժողովրդի դավաճանների և նրանց տերերի այդ հրեշավոր ծրագիրը ի ցավ նրանց շիրականացավ և շահիտի իրականար: Հայ ժողովրդը, Հայ եկեղեցին փրկվեցին օտար նեղիչների ու հալածիների այս անկոչ խնամակալությունից և Հայրենիքի ու եկեղեցու ստոր վաճառումից, որ ծրագրել էին Վասակ Սյունիները:

Այս տարի Կարմիր Բանակի Մայիսյան պատմական մեծ հաղթանակի շնորհիվ ամբողջ աշխարհում սփռված Հայ հավատացյանները հավաքվելով Մայր Աթոռ ս. Էջմիածին աղատ, անկաշկանդ ու միաձայն ընտրեցին Լուսավորչի գահի արժանավոր գահակալ և վերացրին սկս քողը Մայր Աթոռից:

Կարմիր Բանակի՝ աշխարհին շնորհած հաղթանակի ու խաղաղության շնորհիվ է, որ այսօր Մայր Հայաստանը նոր ու ավելի մեծ թափով շարունակում է իր պետականության ամրապնդումը ծավալուն շինարար աշխատանքով Մայր Հայրենիքում և պատրաստվում իր պետականության վերածնունդի փառապանծ 25-ամյակի տոնակատարությանը այն հաստատ ու ամուր հավատով; որ այս ոչ ոք չի հանդիպնի վրդովել իր խաղաղությունը: Ուստի ԵՊԽԱԿՈՊՈՍ



ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՀՄԻԱՆԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

ԼՀԾՍԻԱՆԻՒՆ

Զեր հանդիսի փետրվար—մարտ և ապ-
րիլ—մայիս հաջորդական թիվերում ար-
վեստի վաստակավոր գործի պ. Գ. Լե-
վոնյան ուներ ուսումնասիրություն մը
«Կատարիկանի դիվանագիտական խաղերը
կամ Սուլքանչան Ամիրքեզյանը Հայոց
քազակորուրյան թեկնածու խորագրով:

Այս ուսումնասիրության մեջ սպրդած
էր մի հիմնական սխալ, որու մասին հարգ
կդատեմ լուսաբանություն մը տալ Այս
սխալը պիտի տեղ շռնենար այդ ուսում-
նասիրության մեջ, եթե Գ. Լեվոնյան ավե-
լի լայնորեն ծանոթացած լիներ իր նյութին
առնչակից աղբյուրների: Մասնավորա-
պես, իր ուշադրության կհանձնեմ երուսա-
լիմի «Սիոն» ամսագրի 1931 հոկտեմբերի
թիվը, ուր կա մի ուսումնասիրություն
«Ստեփանես Սալմաստեցի և Ստեփանես Առնջեցի կաթողիկոսներու ժամանակագր-
ությունը» էջ (305—311) խորագրով, ե-
թե ծանոթ ըլլար Գ. Լեվոնյան այս գրու-
թյան, անիկա պիտի շրսեր շատերեն կըր-
կընված այն սխալը, թե Ստեփանես Սալ-
մաստեցի իրը թե կհաստանեն Մոսկ-
կուայի ճանապարհով և «ապա զրիմի վրա-
յով դառնում է Անդրկովկաս և էջմիածին
հասնում 1551 թվին («Էջմիածին» էջ 49):

Անսուտ վավերագիրներ, ընդհակառա-
կը, ցուց կուտան, թե Ստեփանես Սալ-
մաստեցի մեռած է 1551 թվի վերջերը
կամ, ավելի ճիշտ, 1552 թ. հունվարի 14-ին
իլով կամ Լեմպերկ քաղաքին մեջ (ահս
Ալիշան, Կամենից, էջ 19—135):

Իր մահեն հետո ուրիշ Ստեփանես
կաթողիկոս մը Առնջեցի Զալլախ մականուա-
նյալ, ելլորպայի մեջ իր առաքելությունը
շարունակել կփորձե:

Այս Ստեփանես Առնջեցի կաթողիկո-
սը, ինչպես ճիշտակարաններ կհաստա-

տեն, 1562-ին կգտնվեր կեհաստան, որ
կայցելեր Կամենից և Լեմպերկ քաղաքնե-
րը (Կամենից, էջ 22 և մայր ցուցակ հա-
յերեն ձեռագրաց Վենետիկի, Ա. Հատոր,
էջ 837):

Այս կաթողիկոսը, որ պաշտոնավարած
է առնուազն մինչև 1572, (ըստ հիշա-
տակարաններու 1564 թվականով, Ալիշան,
«Արարատ»—էջ 230. 1565 թվականով
ցուցակ հայ ձեռագրաց կայսերական մա-
տենադարանի, Վիեննա, Տաշյան, էջ 38,
1566 թվականով Հ. Մինաս Բժշկյան, ճա-
նապարհորդություն կեհաստան, էջ 143,
1567 թվականով՝ Կամենից, էջ 164, ցու-
ցակ հայ ձեռագրաց կայս. մատենադ.
ի Վիեննա, էջ 22 և 1572 թվականով
ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ
676) կրավի ըլլալ զեկավարող ուժը Սալ-
մաստեցին հետո շարունակելով անոր
զործը Ելլորպայի մեջ, իր ձեռնարկներուն
ուժ տալու դերը խողով իր աթոռակցին՝
Միքայել Սեբաստացիի, որ անոր Ելլո-
ռպա մեկնած տարին՝ 1562-ին Սեբաստիո-
նից գումարած է այն ժողովը, որ Արքար
զորի թագավորած ըլլալը հաստատված են
և իրը աշխարհական պատգամագոր Ելլ-
ռպա զրկել որոշած, թերեւ խարվելով
Ստեփանես Առնջեցի կաթողիկոսն եղած
կեղծ խոստումներեն:

Այս պարագան շատ կարևոր է մեկնե-
լու համար Միքայել Սեբաստացիի ձեռնար-
կը, որ անմեկների պիտի մնար առանց
այս կապակցության:

Ուստի պիտի խնդրեի, որ Հաճեկիք
տեղ տալ այս համառոտ գրության ձեր
հանդեսին մեջ լուսաբանության համար:

ԱՐԾԱԿ ԱԼՓՈՅԱՃՅԱՇԱՆ
Գահիրե, Եղիպատոս

Ի Մ Խ Ո Ս Ք Ը

«Էջմիածին» հանդեսի խմբագրությունը պ. Արշակ Ալպոյանյանի այս նամակը տպագրելուց առաջ հաճել էր ինձ ուղարկել կարգալու և ասելու իմ խոսքը:

Ես շատ բան չունեմ ասելու կամ բանավեճ սկսելու հարգելի նամակագրի հետ: Ստեփաննոս Սալմաստեցուն իբր անմիջապես հաջորդող Ստեփաննոս Առնչեցի կոչված կաթողիկոսի գոյությունը ինձ համար կատարելապես նորություն էր: Նրա անունը հայոց կաթողիկոսների ցուցակներում ոչ մի տեղ չի հիշատակված, թե կուզ որպես աթոռակից: Նրա մասին տեղեկություն չունի և մի այնպիսի բազմահամուտ հեղինակ, ինչպիսին Օրմանյան է: Եթի այժմ մեր բանասիրության մեջ երեան է եկել և հաստատվում է 16-րդ դարում Եվրոպայում իրեն կաթողիկոս անվանող մի արդարիսի անձնավորություն, ապա այդ Զբաղախտը, իմ կարծիքով, եղել

է մի ինքնակոչ և «կեղծ խոստումներ» անող մի մարդ: Վերջապես այդ ի՞նչ կաթողիկոս է, որի մասին տեղեկություն չունի նույնիսկ էջմիածինը: Գալով Ստեփաննոս Սալմաստեցու 1551 թ. Եվրոպայից Դրիմի վրայով էջմիածին վերադառնալուն, այդ տեղեկությունն առնված է Օրմանյանից, որ ասում է՝ «Սալմաստեցին իր ուղևորությունը շարունակեց ցամարի ճամպայով և Կաֆա... հանդիպելով՝ էջմիածին դարձավ 1551 տարվա մեջ («Ազգապատում» թ. էջ 2241):

Ք. ԼեվոնՅԱՆ

Խմբագրությունը սպառված է համարում այս նյութի շուրջը եղած մտքերի փոխանակությունը:

ԽՄԲ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Ազգային-եկեղեցական ժողովի պատմական նշանակությունը	3
Պաշտոնական	
2. Զեկուցում Ս. Էջմիածնի Բարձրագույն Հոգևոր իշխանության քառամյա գործունեության մասին (1941—1945 թ.)	6
3. Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն	17
Հայոց եկեղեցի	
4. Մայր Աթոռ	18
Համազգային-եկեղեցական ժողովի շուրջը	
5. Պատգամավորների այցելությունները Հայաստանի տեսարժան վայրերին	22
Կրնա-պատմական	
6. Ռուբեն Խաչիսկոպոս—Հայրենասիրությունը Խրիմյանի երկերում	26
Հայագիտական	
7. Գ. Լեվոնյան—դարձյալ մի քանի էջ Հայկական երաժշտության պատմությունից	32
8. Պրոֆ. Աշ. Աբրահամյան—Կորյունի երկու հնագույն ընդորինակությունները	40
Բանաստեղծ Ավետիք Խսահակյանի Հոբելյանը	
9. Հանդիսավոր նիստ նվիրված Ավետիք Խսահակյանի ծննդյան 70-ամյակին	47
10. Արտ. Ավագյան—Ավետիք Խսահակյան	49
Մամովի տեսություն	
11. Ռուբեն Խաչիսկոպոս—Մեր ժամանակի դավաճան և երկերեսանի Վասակ Սյունիները	53
12. Նամակ խմբագրության	56


ԽՈՒՅԱ ՏԵՍԱՎ
Ա. ԷՉՄԻԱԾՆԻ
1946 թ.
ՕՐԱՅՈՒՅՑՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵՐ



ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՆԱԿԱՆ ՍՍՌ

Էջմիածն, «Էջմիածն» լուսադր ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magasin „Echmiadzin“, Armenian, USSR



ՀԱՅՈՒ ԺԿՍ-ԻՆ ԿԻՑ ԱՎԱԽՊՐԱՓԻՄԵՐԻ և ՀՐԱՄԱՆԱԿԱՆՆԵՐԻ Խ Յ Յ ԱՎԱՐԱՆՆԵՐԻ
ԱՎԱՍՔՆԵՐ Խ Յ Յ 3, ԹԻՐԱՄ 1500,



ՀՅՈՒՅԴԵՑԱԿԱՆ ԸԹՈՒԹՅ
Ա. Ի. ԶԱՐԱՅՐԻ